Հարիսի

1979

2

ոչ146



ԼԶ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունվար

1979

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ՖԱԴԵՅ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հունիսի 18-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Կառավարական տանը, այցելեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ տիար Ֆադեյ Տ. Սարգսյանին:

Հայոց Հայրապետի և Հայաստանի մեծահարգ պարոն վարչապետի միջև տեղի է ունենում սրտագին զրույց, ջերմ մթնոլորտում:

Սույն տեսակցությանը ներկա են եղել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ Հ. Ե. Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Ա. Հասրաթյանը:



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

1978—79 թթ. ուսումնական տարեշրջանի փակման հանդեսը տեղի ունեցավ հունիսի 15-ին, ուրբաթ օրը, ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսասրահում: Այն սիրով նախագահեց Վեհափառ Հայրապետը՝ ֆրանսահայությանը տված հայրապետական Իր այցելությունից նոր վերադարձից հետո:

Նախագահության սեղանին Վեհափառ Հայրապետի կողքին տեղ էին գրավել տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, տ. Արսեն եպս. Բերբերյանը և հոգևոր ճեմարանի վերատեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

Հանդեսին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, որոշ սաների ծնողներ և այլ հյուրեր:

Հանդիսությունն սկսվեց Վեհափառ Հայրապետի «Հայր մեր»-ով: Ապա հնչեցին Հայաստանի պետական հիմնի դաշնամուրային նվագը, որն ունկնդրվեց հոտնկայս, և ճեմարանի քայլերգը՝ ուսանողության կատարմամբ:

Հոգևոր ճեմարանի վերակացու տ. Արտակ քհն. Սիմոնյանը կարդաց բացման խոսքը, որից հետո սկսվեց գեղարվեստական բաժինը:

Ճեմարանի սաների կատարմամբ հնչեցին «Էջ Միածինն ի Հօրէ» և «Որք զարդարեցին» շարականները: Գ. լսարանի ուսանող Խաչիկ սրկ. Խարազյանը Վեհափառ Հայրապետին ուղղեց հետևյալ Ողերձը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր և սիրելի ներկաներ:

Այսօր այս նվիրական հարկի տակ հավաքվել ենք որպես հանդիսությամբ փակելու ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1978—1979 ուսումնական տարեշրջանը:

Հուզիչ է պահը ուսանողներիս համար, որովհետև պատմության գիրկն է անցնում մեր պատանեկության ամենաբաղցր տարիներից մեկը: Սակայն հուզումի հետ միասին մենք միաժամանակ ուրախ ենք:

Վեհափառ Տեր, ինչպես գիտեք, ճեմարանը այս տարի իր հերթական նոր հունձքը տվեց: Այդ հունձքը բարի է ու առատ:

Գ. լսարանի ութ երիտասարդ սարկավագներս արդեն վերջացրել ենք տարեկան կուրսային և ավարտական քննությունները, որով այս ամավերջի հանդեսը հանդիսությունը մեզ համար է՛ նաև հրաժեշտի հանդիսություն:

Դժվարանում ենք հավատալ, որ այլևս ամեն օր չենք մտնելու այս նվիրական հարկից ներս, չենք լսելու զանգի ղողանջը, չենք նստելու նորից գրասեղանների առաջ և չենք լսելու մեր ուսուցիչների դասախոսությունները:

Երիտասարդ պատանիներ էինք մենք, երբ ոտք դրեցինք ճեմարանի այս հարկից ներս՝ տարված ապագայի հույսերով:

Ս. Էջմիածնի վանական մթնոլորտի մեջ մենք անցկացրեցինք մեր ուսումնառության բեղուն վեց տարիները: Ս. Էջմիածինը հանդիսացավ մեր հոգու, մտքի և սրտի

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ
ՏԵՍՉԱԿԱՆ-ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՄԲ (1979 թ. հուլիսի 15)

խանձարուրը: Ճեմարանի հարկի տակ ճանաչեցինք և սիրեցինք հայ եկեղեցին, մեր մշակույթն ու գրականությունը և հոգևոր արժեքները:

Այսօր, այս հանդիսավոր պահին, իմ շրջանավարտ եղբայրների կողմից հայտնում եմ մեր որդիական երախտագիտության ջերմ զգացումները Վեհափառ Հայրապետին, որ է «Զօրագլուխն Առաքինեաց» մեր սուրբ եկեղեցու հոգևոր դասի:

Վեհափառ Տեր, Դուք, հակառակ Ձեր բազմազբաղ վիճակին, մեզ երկու տարի դասավանդեցիք մի շարք առարկաներ, և մենք մոտիկից զգացինք և տեսանք մեր նկատմամբ Ձեր ցույց տված հայրական խնամքն ու հոգատարությունը, որի համար մի անգամ ևս հայտնում ենք մեր որդիական երախտագիտության զգացումները:

Շրջանավարտ իմ եղբայրների կողմից երախտագիտական խոսք ունեմ ասելու նաև հոգևոր ճեմարանի տեսչությանը՝ գլխավորությամբ տեր Հովհաննես ավգ. քհն. Մարուքյանի: Տեսչությունն էր, որ միշտ մեզ հիշեցնում էր մեր պարտականությունները և ամեն ջանք էր թափում, որ մեր ուսումնառության տարիները, ամիսները և օրերը անցնեն ամենայն կանոնավորությամբ և հետաքրքիր:

Այս հանդիսավոր պահին կարելի՞ է արդյոք մոռանալ մեր սիրելի և հարգելի դասախոսներին, մի խումբ պատրաստված մշակներին, որոնք գիտակից իրենց պաշտոնին ու կոչմանը, հանձն առան զարդարելու մեզ իրենց իմացական, բարոյական շնորհներով ու կարողություններով, առատապես բաշխեցին մեզ գիտելիքներ, սովորեցրին մեզ հավիտենական ճշմարտություններ և, վերջապես, հասցրին մեզ այս ցանկալի հանգրվանին:

Անսահմանորեն երախտապարտ ենք ձեզ, սիրելի ուսուցիչներ:

Վեհափառ Տեր, մենք, որպես «Անձինք նուիրեալք», որոշել ենք մեր երիտասարդ ու խուստումնալից կյանքը ընծայել Մայր Աթոռի և հայ եկեղեցու ծառայության սրբազան գործին: Եվ հույս ունենք, որ ժամանակի ընթացքին Ձեր հայրական իմաստուն և հոգատար ղեկավարության ներքո նոր ուժ և նոր կորով կբերենք այս դարավոր հաստատությանը, որ Մայր Աթոռ սուրբ Էջմիածինն է, և նրա միջոցով՝ հայ եկեղեցուն:

Իսկ այժմ, Վեհափառ Տեր, խորին ակնածանքով Ձեզ ենք դիմում, որ Ձեր սուրբ աղոթքները վերառաքեք Մայր Աթոռի հաստատության ու հարատևության համար, միաժամանակ Ձեր հայրապետական օրհնությունը շնորհեք մեզ, որ դառնանք արժանավոր հետևորդները այս սուրբ հաստատության առաքինի և վաստակաշատ հին միաբանների, ապրենք ս. Էջմիածնի հովանու տակ և զարգանանք ու լուսավորվենք նրա ճառագայթած երկնային լույսով: Վստահեցնում ենք Ձերդ Սրբությանը և մեր դասախոսական կազմին, որ մեր վրա դրված հույսերը կարդարացնենք Աստծու հովանավորությամբ և Ձեր առաջնորդությամբ կդառնանք Մայր Աթոռ ս. Էջմիածնի հարազատ զավակները:

Այս զգացումներով, Վեհափառ Տեր, թույլ տվեք ուսանողների անունից համբուրել Ձեր սուրբ Աջը և մաղթել Ձեզ բեղմնավոր նորանոր տարիներ»:

Վերսկսելով գեղարվեստական բաժինը, ճեմարանի սաները միասին ասմունքեցին Պարույր Սևակի «Եռաձայն պատարագ»-ը, որի երաժշտա-գեղարվեստական ձևավորումը կատարել էին հոգևոր ճեմարանի դասախոսներ Խորեն Մելյանեջյանը և Երվանդ Մելքոնյանը: Այն ներկայացնելու կերպը նորություն էր: Ճեմարանի սաները խմբված բեմի անկյունում, կարծես մարմնավորում էին հայությանն ու նրա պատմությունը: Հաղորդականությունը կատարյալ էր: Մենասացները խորը հուզումով արտասանում էին Ասք-ի ներշնչյալ հատվածները, որոնց որևէ մեկ հայ անկարող էր ունկընդրել՝ առանց սարսուռ ապրելու իր հոգում և մաշկի վրա: Մերթ ընդ մերթ, ըստ իմաստի եզրահանգման, Ասքն ընդհատվում էր Կոմիտաս վարդապետի և այլ երգահանների, ժողովրդական կամ հայրենաշունչ երգերով, որոնք հնչում էին մերթ թախծալի ու քնքուշ, իսկ երբեմն՝ հզոր ու հաղթարշավ, և այդ բոլորը միասին կարծեք կազմում էին գեղարվեստական մի կուռ ամբողջություն:

Հիմնական թեման արտասանվում էր բազմաթիվ կրկնումներով, տարբեր ասմունքողների կողմից, որն ստանում էր անթափանցելի մի խորհրդավորության կերպարանք: Ձայնարկողները թվում էր, թե այլևս արտասանողները չէին, այլ ողջ հայությունը՝ անհատ առ անհատ, սերունդ առ սերունդ՝ հառնած իր ողջ պատմությամբ՝ անցյալ, ներկա, այլև... ապագա, և որի մեջ մասնավորաբար զգացվում էր ազգային հավաքական միակամությունը և համերաշխությունը:

Վեհափառ Հայրապետը Իր փակման խոսքում մասնավորաբար անդրադարձավ դրան և շնորհավորեց կատարողներին և կազմակերպիչներին, խորապես գնահատեց այն:

Հոգևոր ճեմարանի վերատեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց 1978—79 ուսումնական տարվա հետևյալ զեկուցագիրը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր, սիրելի դասախոսներ, ուսանողներ և ներկաներ:

Դեռ երեկ էր կարծեք, որ այս նվիրական հարկի տակ Ձերդ Սրբության օրհնությամբ կատարեցինք ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1978—1979 ուստարվա բացումը և այսօր նույն հարկի տակ հավաքվել ենք ամփոփելու համար արդեն պատմություն դարձած այս ուսումնական տարեշրջանի արդյունքները:

Հոգևոր ճեմարանի սաներ

1978—1979 ուստարվա սկզբում ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը ունեցել է 37 ուսանողներ, որից 14-ը՝ նոր ընդունվածներ:

Նոր ընդունված ուսանողների թվին կարելի է ավելացնել ԱՄՆ-ից եկած Գրիգոր Դուրգարյանին և Տիգրան Աբդալյանին, որոնք որպես ազատ ունկնդիր մասնակցել են որոշ դասերի՝ մայրենի լեզվի մեջ ավելի հմտանալու համար: Կրոնական առարկաներին և եկեղեցական երաժշտությանը մասնակցել են նաև քահանայացուներ Խաչիկ սրկ. Ֆրանգյանը և Օնիկ սրկ. Լուսարարյանը:

Ուսումնական տարեշրջանի ընթացքում բանակ են մեկնել 2 ուսանողներ, իսկ 4 ուսանողներ՝ հեռացել:

Հոգևոր ճեմարանի ուսանողների քանակը ըստ դասարանների այսօր հետևյալն է.

Գ. լսարան՝	8 ուսանող
Բ. լսարան՝	5 ուսանող
Գ. դասարան՝	8 ուսանող
Ա. դասարան՝	10 ուսանող
	ընդամենը՝ 31 ուսանող:

Ուսանողներից 18-ը օտարահպատակներ են՝ Լիբանանից, Սիրիայից և Ռումինիայից, իսկ մնացած 13-ը՝ Հայաստանի զանազան շրջաններից:

Այս տարի չենք ունեցել Ա. լսարան և Բ. դասարան:

Իրենց ճեմարանական ուսումը հաջողությամբ են ավարտել Գ. լսարանի 8 ուսանողներ (Վաչագան սրկ. Ավետիքյան, Խաչիկ սրկ. Խարազյան, Հովհաննես սրկ. Ղազարյան, Խաչիկ սրկ. Մարտիրոսյան, Արա սրկ. Ճլուկյան, Հովսեփ սրկ. Պալըգյան, Վահրամ սրկ. Տերտերյան, Հրաչ սրկ. Օղլուգյան): Տրված է նրանց դիպլոմային համապատասխան թեմաներ: Հոգևոր ճեմարանի տեսչությունը հուսով է, որ նրանք բոլորն էլ ժամանակին կպաշտպանեն իրենց դիպլոմային աշխատանքները և կընտանան ավարտական վկայականներ:

Դասախոսական կազմ

Հոգևոր ճեմարանի տեսչությունը ուրախ է նշելու, որ այս տարի տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը սիրով հանձն առավ օգտակար լինել մեր ճեմարանի սաներին՝ ստանձնելով լսարանական բաժնում կրոնական մի շարք առարկաների դասավանդումը:

1978—1979 ուսումնական տարեշրջանի ուսուցչական կազմը հետևյալն է:

Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց, գերշ. տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան, տ. Հովհաննես ավագ քահանա Մարուքյան, տ. Եղիշե քհն. Սարգիսյան, տ. Արտակ քհն. Սիմոնյան, Ստեփան սրկ. Զագալյան, Պետրոս սրկ. Սարգիսյան, պրն. Արթուն Հատիտյան, պրն. Պարգև Շահբազյան, պրն. Սիմոն Կրկյաշարյան, պրն. Երվանդ Մելքոնյան, պրն. Բարսեղ Թաշճյան, պրն. Խաչատուր Ներսիսյան, պրն. Խորեն Մեյիսանեջյան, պրն. Հայկ Ֆրունջյան, պրն. Ռուբեն Կարապետյան, պրն. Թադեոս Ամամրյան:

Հոգևոր ճեմարանի տեսչական կազմը հետևյալն է.

Տ. Հովհաննես ավագ քահանա Մարուքյան՝ տեսուչ, տ. Արտակ քահանա Սիմոնյան՝ ավագ վերակացու, պրն. Վարդավառ Սիմոնյան՝ վերակացու, պրն. Բարսեղ Թաշճյան՝ հաշվապահ-քարտուղար, պրն. Հենրի Բալյան՝ գրադարանավար:

Հոգևոր ճեմարանի բժիշկն է պրն. Հրաչիկ Մանուկյանը:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ այս տարի ևս հրավիրվեց տիկ. Ռոզա Ղալաջյանը՝ Գ. լսարանի ուսանողներին մեքենագրության դասեր տալու համար:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը իրենց կարելին արեցին՝ ճեմարանի սաներին ոգի, հավատք ներշնչելու:

Ուսումնական և ներքին կյանք

Այս տարի ճեմարանում տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները և զեկուցումները:

1.—Զեկուցում Նոր Կտակարանի ուսումնասիրման մեթոդը օտար ուսումնական

հաստատություններում». զեկուցող՝ տ. Հայկազուն աբեղա Նաջարյան (Լոնդոն):

2.—Զրույց՝ Մայր տաճարում նոր տեղադրված երգեհոնի առանձնահատկությունների մասին. պրն. Պերճ Ժամկոչյան (ԱՄՆ):

3.—Զեկուցում՝ «Հայագիտության զարգացումը Շվեյցարիայում». զեկուցող՝ լեզվաբան-հայագետ Ռոբերտ Կոտել (Ֆրանսիա):

4.—«Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյա հոբելյանի առթիվ». զեկուցող՝ հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Սիմոն Կրկյաշարյան:

5.—Նոր տարվա տոնակատարություն:

6.—Վարդանանց տոնակատարություն. զեկուցող՝ տ. Եղիշե քհն. Սարգիսյան:

7.—«Հավաքչական աշխատանքը Մատենադարանում» (Գունապատկերների ցուցադրումով). զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Բաբգեն Զուգասզյան:

8.—«Հայոց եկեղեցու և հայ համայնքների իրավական վիճակը 15—17-րդ դարերում, մահմեդական տիրակալության շրջանում». զեկուցող՝ պատմական գիտությունների դոկտ., պրոֆ. Հակոբ Փափազյան:

9.—«Հակոբիկյան եկեղեցի. ինչո՞ւ է կոչվում Հակոբիկյան և նրա՝ հայ եկեղեցու հետ ունեցած հարաբերությունները». զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Հայկ Մելքոնյան:

10.—«Էջմիածնի վանքը 18-րդ դարի վերջին տասնամյակներին և Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի գործունեությունը». զեկուցող՝ պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյան:

11.—«Ուրարտու և Հայաստան» (Մշակույթի ժառանգության հարցի շուրջ). զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Գևորգ Տիրացյան:

12.—«Տիզբոնի կաթողիկոսությունը և նրա կապերը հայ եկեղեցու հետ». զեկուցող՝ պատմական գիտությունների թեկնածու Հայկ Մելքոնյան:

13.—Սիամանթոյի 100-ամյակին նվիրված գրական-երաժշտական երեկո՝ Գ լսարանի սարկավագ ուսանողների նախաձեռնությամբ:

14.—Զեկուցում առողջապահությանը նվիրված. զեկուցող՝ վաստակավոր բժշկուհի Թամարա Ավետիսյան:

Բացի վերոհիշյալ զեկուցումներից և զրույցներից գրեթե ամեն չորեքշաբթի Գ լսարանի և երբեմն էլ Բ լսարանի սաները մասնակցել են Վեհարանում միաբանական հավաքույթներին և կազմակերպված զեկուցումներին, որոնց ներկա էր լինում նաև Հայոց Հայրապետը:

Այս տարի ուսանողները եռօրյա ձմեռային պտույտի են մեկնել Ծաղկաձոր, միօրյա պտույտի՝ ս. Գեղարդ վանք: Եղել են Սարդարապատի նորաբաց ազգագրական թանգարանում, Երևանի պետական պատկերասրահում, Մեծամորի թանգարանում և այլն: Իսկ հունիս 18-ից 21-ը հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը մեկնելու են Իջևան՝ 4-օրյա պտույտի: Այցելելու են Հաղարծնի, Գոշա, Մակարա վանքերը և այլ հիշարժան հուշակոթողներ:

Ուսանողներին հաճախ տարել ենք կինո, թատրոն, կրկես, երաժշտական ներկայացումներ: Ուշադրություն ենք դարձրել ուսանողների ֆիզիկական կոփվածությանը: Նրանք զբաղվել են ֆուտբոլով, բասկետբոլով և այլն:

Վեհափառ Տեր, նոր եք վերադարձել Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ Ֆրանսիա կատարած Ձեր հովվական այցելությունից, և ահա Ձեր զավակների շրջապատում եք: Ձեզ միշտ ուրախացրել են ճեմարանի սաների հաջողությունները:

Ճեմարանում ուսումնա-դաստիարակչական գործը մեր ցանկացած բարձրության վրա չի եղել: Ճեմարանի ներսում երբեմն կարգապահությունը ևս խախտվել է: Որոշ ուսանողներ իրենց անցյալի հոռի սովորություններից հեշտությամբ չեն կարողացել ձերբազատվել: Նրանց թերությունների, հանցանքների համար միշտ դիմել ենք դաստիարակչական համոզչական մեթոդին: Խրատել ենք անձամբ, նրանց թերությունները ուսանողների ներկայությամբ քննարկել ենք, եղել ենք խիստ և, անհրաժեշտության դեպքում՝ մանկավարժական ժողովների նյութ դարձրել այդ ապաթաքումները, որպեսզի մեր որոշումների մեջ լինենք արդար: Անշուշտ մեծ անկարգություններ չեն եղել: Եղածները տղայական, երբեմն անգիտակցաբար կատարված զանցանքներ են եղել, որոնց կողքով անտարբեր չենք անցել՝ միշտ դիմելով համոզման, դաստիարակման մեթոդին:

Սիրելի սաներ, շուտով ձեզանից շատերը կմեկնեն արձակուրդի իրենց տները: Մայր Աթոռ ս. Էջմիածնի սերը և Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը տարեք ձեր հետ: Միշտ հիշեցեք, որ դուք Էջմիածնի զավակներն եք:

Այս առթիվ մեր շնորհակալությունները նաև Մայր Աթոռի միաբանությանը, պաշտոնեությանը, բարերարներին, բոլոր նը-

բանց, որոնք իրենց նյութական և բարոյական միջոցներով օգնեցին մեզ հեշտացնելով մեր աշխատանքները հոգևոր ճեմարանից ներս:

Այս համառոտ զեկուցագիրը վերջացնելուց առաջ թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի անունից շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբությանը, որ Իր գահակալության 24 տարիների ընթացքում էլ, որպես ուսուցչապետ, ղեկավարել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը և դասավանդել մեր սաներին:

Ի դիմաց տեսչության և դասախոսական կազմի թույլ տվեք համբուրել Ձեր ս. Աջը՝ մաղթելով Ձեզ քաջառողջություն և բեղմնավոր նորանոր տարիներ՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հոգևոր ճեմարանի»:

Զեկուցագրի ընթերցումից հետո տեղի ունեցավ մրցանակաբաշխություն: Ուսման մեջ առաջին մրցանակի արժանացան Հրաչ սրկ. Օղլուգյանը (Գ լսարան), Հայկ Չիլինգիրյանը (Բ լսարան), Պետրոս Ասողլյանը (Գ դասարան), Հարություն Թապաքյանը (Ա դասարան):

Երկրորդ մրցանակի արժանացան Վահրամ սրկ. Տերտերյանը և Վաչագան սրկ. Ավետիքյանը (Գ լսարան), Բորիս Մալյանը և Նշան Քիրեմիջյանը (Բ լսարան), Վարդան Բաղդասարյանը և Ստեփան Կարապետյանը (Գ դասարան), Վարդան Մըկըրտչյանը, Զարեհ Քենդիրջյանը և Տիգրան Ջուլֆայանը (Ա դասարան):

Կարգապահության և վարքի համար մրցանակի արժանացավ Հովհաննես սրկ. Ղազարյանը (Գ լսարան):

Կոմիտաս վարդապետի անվան երաժշտական առաջին մրցանակով (150 ռ.) պարգևատրվեց Խաչիկ սրկ. Մարտիրոսյանը, իսկ երկրորդ կարգի մրցանակով (100 ռ.)՝ Վահրամ սրկ. Տերտերյանը (Գ լսարան):

Ապա տեսուչ տեր հայրը սիրով հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ փակման խոսք ասելու և Իր օրհնությունը տալու ճեմարանի սաներին:

Վեհափառ Հայրապետը հետևյալ խոսքն ուղղեց ուսանողությանը.

Ֆրանսիա կատարած Մեր հովվական այցելությունից վերադարձին Մեզ համար հաճելի ու մխիթարական է այսօր այստեղ ներկա լինել հոգևոր ճեմարանի ամավերջի հանդիսությանը: Մենք անցնող քսանչորս տարիների ընթացքում միշտ ուրախությամբ և գոհունակությամբ մասնակցել ենք ճեմարանի հանդիսություններին:

Մեր գոհունակությունն ենք հայտնում նախ այսօրվա հանդիսության գրական-երաժշտական Ասք-ի փայլուն կատարման համար, Ասք, որը պատրաստել էին երկու դասախոսներ՝ Խորեն Մելիքանեջյանն ու Երվանդ Մելքոնյանը: Մեր գնահատանքն ու օրհնությունը նրանց: Մաղթում ենք, որ նման գեղարվեստական Ասք-եր միշտ կատարվեն ճեմարանի հարկի տակ:

Մեր գնահատանքն ու շնորհավորանքը նաև հոգևոր ճեմարանի տեսչին՝ տ. Հովհաննես ավագ քահանա Մարությանին, դասախոսական կազմին՝ իրենց բարեխիղճ և ազնիվ ուսումնադաստիարակչական, կրթական աշխատանքի համար: Նրանք ուսումնական ողջ տարվա ընթացքին խղճի մտոք կատարեցին իրենց պարտականությունները և մեր ուսանողությանը ջամբեցին գիտություն ու հերշնչեցին հավատք ու ոգի իրենց ապագա հոգևոր առաքելության համար:

Մեր օրհնությունը նույնպես ճեմարանի ուսանողությանը, մեր սիրելի սաներին:

Մանավանդ Մեր օրհնությունը Գ լսարանի շրջանավարտ ութ սարկավագներին, որոնց անունից գեղեցիկ ու բովանդակալից ճառ ասաց Խաչիկ սարկավագ Խարազյանը, և հանուն իր դասընկերների խոստումներ էլ տվեց իրենց ապագա հոգևոր սպասավորության: Մեզ համար միխթարական է և հուզիչ լսել նման խոստումներ: Հավատացած ենք, որ այդ խոստումները ներքին ճշմարիտ ապրումների հարազատ արտահայտություններն էին: Սակայն էականը ոչ թե միայն նման հանդիսավոր առիթներով խոստումներ կատարելն է, այլ դրանք կյանքի կոչելը, գործի վերածելը: Դժվարին մասը հենց այդ է: Անցյալում, նման առիթներով տրված խոստումներից ոչ բոլորն են հարգվել: Մեր մաղթանքն այն է, որ դուք, սիրելի շրջանավարտ սարկավագներ, տերը մնաք ձեր տված խոստումների: Այսօր մեր ժողովուրդը և՛ հայրենիքում, և՛ սփյուռքի տարածքի վրա կարիքն ունի հավատավոր, գիտակից և հայրենասեր երիտասարդ հոգևորականների, որոնք սիրեն հոգևոր ծառայության սուրբ գործը, առանց ծուռանալու նվիրումով աշխատեն Տիրոջ անդաստանի մեջ, չառաջնորդվեն անձնական շահերով, հարընտանալու տենչով: Հաստատում ենք, որ երբ հոգևորականը ժրաջան է ու կարգապահ, նվիրված իր պարտականություններին, այնտեղ եկեղեցին պայծառ է, ժողո-

վուրդը՝ մխիթարված: Կա, սակայն, այս հուսադրիչ երևույթի նաև հակառակ պատկերը: Մեր այս հաստատումն արտահայտվում է մաթեմատիկ ճշգրտությամբ մի քիչ, ամեն տեղ, և՛ այստեղ՝ Մայր Աթոռում, և՛ ամբողջի մեր եկեղեցական կյանքում:

Սիրելի շրջանավարտ սարկավագներ, տերը եղեք ձեր խոստումի, որպեսզի պարզերես ու համարձակ ներկայանաք մեր ժողովրդին, որը կարիքն ունի ձեր կենդանի խոսքին և մանավանդ ձեր օրինակելի, ճշմարիտ հոգևորականի կյանքի օրինակին:

Ուրախ ենք, որ ձեր ճեմարանական-ավարտական քննությունները հաջողությամբ տվեցիք: Բայց այդ դեռ բավական չէ: Բուն քննությունը պիտի տաք կյանքի մեջ, ձեր ապագա ծառայության գործի դաշտում: Կամաղթենք, որ այդ բախտորոշ քննության մեջ էլ հաջողակ լինեք՝ ի մխիթարություն Մեր սրտի:

Այնուհետև Հայոց Հայրապետը համառոտակի անդրադարձավ ֆրանսահայ համայնքի կրթական, դպրոցական կյանքին, որը նույնքան կարևոր է համայնքի հայապահպանման համար, ինչպես եկեղեցին:

Վեհափառ Հայրապետը համառոտակի պատմեց ֆրանսահայերի կրթական, դպրոցական կյանքի մասին և շեշտեց, որ այն լավ կազմակերպելը նույնքան կարևոր է հայապահպանման համար, որքան կրոնա-եկեղեցական գործունեությունը: Խոսելով հոգևորականներին վերապահված դերի մասին ադ առաքելության մեջ ևս, Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Ֆրանսիայում կան նաև ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանից շրջանավարտված հոգևորականներ, որոնք գիտակցությամբ և նվիրումով են կատարում իրենց հոգևոր պարտականությունները:

Հանդեսն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ով:

Այսպիսով հոգևոր ճեմարանը փակեց իր դռները 1978—79 ուսումնական տարեշրջանից հետո ամառային արձակուրդների համար: Հույսով ենք, որ սաները կբոլորեն հանգստի մի լավ շրջան՝ վերսկսելու համար իրենց ուսումը առաջիկային՝ ավելի թարմացած, առույգացած և ուսման ավելի մեծ ծարավով:

ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 1-ին, ուրբաթ.—Այսօր Կ. Պոլսից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Բելգիոյի ս. Երրորդություն եկեղեցու տ. Բարթող ավագ քհն. Խրքաճյանը և Կ. Պոլսի պատրիարքարանի պաշտոնյա պրն. Բագրատ Սեմերճյանը:

* * *

Հունիսի 3-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Գենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն).

Այսօր Մայր տաճարում, մեծ տոնի առիթով, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

* * *

Հունիսի 10-ին, կիրակի.—Ա. կիրակի զկնի Հոգեգալստեան: Սկիզբն Յարութեան կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Բարթող ավագ քհն. Խրքաճյանը:

* * *

Հունիսի 11-ին, երկուշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր ս. Հռիփսիմե վանքի տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով, եւ սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա» (Գործք Բ 4) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ վանքի վերակառուցման բարերարներ Հյուսիսյան և Մանուկյան գերդաստանների ննջեցյալների հիշատակին:

* * *

Հունիսի 12-ին, երեքշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Գայիանեանց.

Այսօր ս. Գայանե վանքի տաճարում ս. պատարագ է մատուցում վանքի վանահայր տ. Գուրգեն քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զօրք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին. եւ կանայք ի յեր-

կինս գրեցան զինաւորք. կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին. խաչակից լինելով կուսածին Արարչին» («Անձինք նուիրեալք» շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցեալ կաթողիկոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, տարկաւագաց և ամենայն ուխտի մանկանց Հայաստանեայց եկեղեցւոյ»:

*
* *

Հունիսի 14-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Այսօր ս. Շողակաթ տաճարում ս. պատարագ է մատուցում վանքի վանահայր տ. Գրիգոր քհն. Փանոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումէ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ դողացայց (Սաղմոս ԻԷ 1) բնաբանով):

*
* *

Հունիսի 16-ին, շաբաթ.—Տօն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն.

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Նույն օրը, ժամը 12-ին, Վեհարանում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը համառոտակի խոսում է վերջերս Ֆրանսիա կատարած հովվապետական Իր այցելության տպավորությունների մասին:

*
* *

Հունիսի 17-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Հոգեգալստեան: Տօն կաթուղիկէ ս. Էջմիածնի:

Մայր Աթոռի տոնի առիթով այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» (շարական) բնաբանով քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով սուրբ Էջմիածնի՝ դարերի ընթացքում կատարած եկեղեցական, հոգևոր, ազգային, հայրենասիրական, մշակութային և կրթական մեծ դերի մասին: Ապա խոսում է վերջերս Ֆրանսիա կատարած հովվապետական Իր ուղևորության տպավորությունների մասին:

Հավարտ ս. պատարագի Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվում է «մաղթանք ս. Էջմիածնի»:

*
* *

Հունիսի 18-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, տեսչական ու դասախոսական կազմի հետ միասին, չորսօրյա շրջապտույտի է մեկնում դեպի Իջևան՝ այցելելու համար այդ շրջանի պատմական վանքերը, եկեղեցիները և այլ հուշարձաններ:

*
* *

Հունիսի 19-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ է այցելում ֆրանսահայ ուխտավորների մի մեծ խումբ, որը, Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում ընդունվում է Հայոց Հայրապետի կողմից և աջահամբույրով ստանում Նրա օրհնությունը:

* *
*

Հունիսի 20-ին, չորեքշաբթի,—Այսօր, ժամը 15-ին, Վեհարանում տեղի է ունենում Հայոց Հայրապետի հանդիպումը Մայր Աթոռի միաբանության, մայրավանքի պաշտոնեության հետ:

Հանդիպմանը ներկա էին նաև Երևանի ս. Սարգիս և ս. Հովհաննես եկեղեցիների եկեղեցական խորհուրդների անդամները և քահանայից դասը՝ գլխավորությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի:

Սույն հանդիպմանը հրավիրված էին նաև Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների և իրավաբանական հանձնաժողովների անդամները և այլ հրավիրյալներ՝ շուրջ 60 հոգի:

Հանդիպման բացումը կատարում է Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը և նշում սույն հանդիպման կարևորությունն ու նշանակությունը: Ապա սրբազան հայրը հրավիրում է Հայրապետական շքախմբի անդամ և ուղևորության ժամանակ Նորին Սուրբ Օծության քարտուղար ու ֆրանսերեն լեզվի թարգման պրն. Պարգև Շահբազյանին, ո-

ը համառոտակի, բայց ամբողջական ձևով ներկայացնում է այդ ուղևորության ժամանակագրական օրագրությունը՝ մայիսի 3-ից մինչև հունիսի 11 օրերը ներառյալ:

Այնուհետև տ. Սիոն արքեպիսկոպոսը հրավիրում է Հայոց Հայրապետին՝ Իր խոսքը ասելու ուղևորության մասին:

Նորին Սուրբ Օծությունը ավելի քան մեկ ժամ տևող Իր բովանդակալից և հետաքրքիր զեկույցի մեջ վեր է հանում հայրապետական այդ ուղևորության հոգևոր, եկեղեցական, ազգային-հայրենասիրական նշանակությունը ֆրանսահայ համայնքի մեր օրերի տարեգրության մեջ:

Հայոց Հայրապետը խոսում է նաև իր հանդիպումների մասին Ֆրանսիայի կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականների, նրանց հետ ունեցած էկումենիկ տեսակցությունների, ինչպես նաև Ֆրանսիայի պետական բարձրաստիճան անձնավորությունների հետ:

Հայոց Հայրապետը, մասնավոր կարևորությամբ խոսում է Փարիզում, Էլիզեի պալատում, Ֆրանսիայի հանրապետության նախագահ մեծահարգ տիար Վալերի Ժիսկար դ'Էստենի հետ ունեցած Իր տեսակցության մասին:

Հայոց Հայրապետի սույն զեկույցը լսվում է մեծ հետաքրքրությամբ:

«Էջմիածին» ամսագիրը իր հաջորդ համարներում լայնորեն անդրադառնալու է Հայոց Հայրապետի Ֆրանսիա կատարած ուղևորության մասին:

* * *

Հունիսի 24-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զամենայն ինչ փորձեցէք՝ զբարին ընկալարուք» (Թուղթ առ Թեսաղոնիկեցիս Ա, Ե 21) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 30-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Վեհարանում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ, որին Վեհափառ Հայրապետի հրավերով ներկա է լինում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը: Սույն նիստին ներկա են լինում նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և Երուսաղեմի հայոց վանքի դիվանապետ ու Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի վերատեսուչ տ. Շահե արքեպ. Անեմյանը՝ որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, որոնք նույնպես ուխտավորաբար գտնվում էին Մայր Աթոռում:





ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄԻ 77-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Այս տարի, մայիսի 3—5 օրերին, գումարվում է Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի 77-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը, որը տեղի է ունենում Զելմսֆըրտի (Մեչեսուսեց) սրբոց Վարդանանց հայոց եկեղեցում:

Ժողովի հյուրընկալությունը կազմակերպել էին Զելմսֆըրտի ս. Վարդանանց, Հելվըրհիլի ս. Գրիգոր Լուսավորիչ և Լորենսի ս. Խաչ հայոց եկեղեցիները:

Մայիսի 3-ին, հինգշաբթի օրը, ժամը 10-ին, ժողովը իր աղոթքով բաց է անում Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, որից անմիջապես հետո կատարվում է պատգամավորների ստուգում և հաստատում:

Բարիգալստյան ուղերձի ընթերցումից հետո, հոտնկայս կարդացվում է Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի 10 մարտ 1979 թվակիր ողջույնի և օրհնության հետևյալ խոսքը.

«Ձեր Հայրապետը, մխիթարված և ուրախ սրտով կու գա Իր ողջույնը և օրհնությունը բերելու ձեզի բոլորիդ, որ թեմիդ բարեջան առաջնորդ գերաշնորհ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի նախագահության ներքո հավաքված եք քննարկելու և գնահատելու անցնող տարվան թեմիդ կրոնական, դաստիարակչական և մշակութային աշխատանքներու արդյունքները և մշակելու նոր ծրագիրները հետագա գործունեության:

Աշխարհագրականորեն ձեզմե թեև շատ հեռու, սակայն սրտով ձեզի բոլորիդ մոտիկ, քաջ ծանոթ ենք ձեր հոգեշեն ու ազգապահպան իրագործումներուն, և վստահ եղեք թե մենք ջերմապես կգնահատենք զանոնք, և կգնահատենք նաև բոլոր այն հոգևոր սպասավորները ու աշխարհական դասեն մեր ժողովուրդի զավակները, որոնք բարի եռանդով լի ու պայծառ տեսիլքներով ներշնչված, թեմիդ սրբազան առաջնորդի կողքին, համերաշխ ու միասնական ճիգերով՝ շեն և լուսաշող կպահպանեն թեմիդ աղոթքի Տուներն ու կրթական, բարեսիրական և մշակութային հաստատությունները, միշտ սուրբ պահելով անունն ու առաքելությունը Հայաստանյայց մեր Մայր եկեղեցվույն ձեր աստվածահայաց մեծ երկրին մեջ:

Աղոթող ենք նաև որ ձեր համայնքային կյանքն ու գործունեությունը զարգանան եղբայրսիրության ու փոխադարձ հարգանքի ճամբով, ձեր առաջ դրված հարցերը ջանալով լուծել միշտ համերաշխությամբ ու խաղաղությամբ: Մեր ջերմ իղձն է և խնդրանքը ձեզի ամենուդ ուղղյալ, որ այդ ոգիով բարվոք լուծման հանգի Կանադայի շրջանի այժմու տագնապը, համաձայն 12 մարտ 1979 թվակիր Մեր հորդորներուն, ուղղյալ թեմիդ սրբազան առաջնորդ հոր:

Թող Տերը մեր բարեխնամող, օրհնե ձեզ ամենքդ և օգնական մնա միշտ, ի կատար ածելու համար եկեղեցաշեն ու ազգանվեր բոլոր նպատակները, պտղառատ արդյունքներով:

«Այսուհետև՝ եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միա-

բան լերուք, խաղաղութիւն արարէք, և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11). ամէն»:

Այնուհետև հանուն թեմական պատգամավորական ժողովի ընթերցվում է խոր հարգանքի և որդիական հավատարմության հեռագիրը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին: Որից հետո ներկայացվում է 76-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի ատենագրությունը և կատարվում դիվանի ընտրություն:

Ժողովավարական կանոնների ընթերցումից և օրակարգի որդեգրումից հետո, ընթերցվում են ընտրական հանձնախմբերի տեղեկագրերը:

Առաջին նիստը ավարտվում է առաջնորդ սրբազանի զեկույցով և պատգամավորներին քվեաթղթերի բաշխումով:

Ժողովի երկրորդ նիստը գումարվում է հաջորդ օրը, մայիսի 4-ին, առավոտյան ժամը 9-ին: Նախ կատարվում է ընտրությունների քվեարկություն, ապա կարդացվում է Ա նիստի ատենագրությունը և Թեմական խորհրդի, Կանոնադրության և Առաջարկների հանձնախմբի տեղեկագրերը:

Վերջում կարդացվում է զեկույց՝ «Հայաստանյայց եկեղեցի» թեմայով: ո

Ժողովի երրորդ նիստը, որը գումարվում է նույն օրը, մայիսի 4-ին, ժամը 14-ին, նախ ընթերցվում է երկրորդ նիստի ատենագրությունը, որից հետո կարդացվում է մի զեկույց՝ «Հանգանակության արշավ» թեմայով:

Շաբաթ օրը, մայիսի 5-ին, առավոտյան ժամը 10-ին, գումարվում է հերթական՝ չորրորդ նիստը, որի ընթացքում ընթերցվում են երրորդ նիստի ատենագրությունը և Բյուջեի հանձնախմբի տեղեկագիրը:

Ժողովի վերջին՝ հինգերորդ նիստը գումարվում է նույն օրը, ժամը 14-ին, որի ընթացքում չորրորդ նիստի ատենագրությունը կարդացվելուց հետո, լսվում է ընթերցումը Գնահատության հանձնախմբի տեղեկագրի: Սույն թեմական պատգամավորական ժողովի վերջին նիստում որոշվում է նաև 1980 և 1981 թվականների թեմական պատգամավորական ժողովի գումարման թվականն ու վայրը:

Հյուսիսային Ամերիկայի արևելյան առաջնորդական հայոց թեմի այս տարվա թեմական պատգամավորական ժողովը իր արդյունավետ աշխատանքները ավարտում է մայիսի 5-ին՝ առաջնորդ սրբազան հոր աղոթքի և օրհնության խոսքով:





ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

Գլուխ հինգերորդ

ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Հին Կտակարանի կարևորագույն երևույթը նույն ինք ՄԱՐԳԱՐԵՆԵՐՆ են: Աստվածաշունչով հայտնված կրոնքին գլխավոր տարբերությունը մյուս կրոնքներեն իր մարգարեներն են: Ստույգ է, մյուս կրոնքներն ալ ունեցած են իրենց հիմնադիր «մարգարեները», սուտ կամ իրավ. բայց անոնց թիվը սահմանափակ է. մեկ կամ երկուքը չէ անցած: Իսրայելի մարգարեները շարունակական և իրարու հաջորդող երևույթ մըն է, գրեթե լման հազար տարիներ:

Մարգարեն այն մարդն է, որ ինքզինքը կզգա գերբնական ույժի մը ազդեցության ներքև, և անով զորացած կընե հզոր գործեր և կուտա հզոր պատգամներ: Ճշմարիտ և հավիտենական Աստուծո կողմե հայտնյալ կրոնքը սկսողներ, հիմնավորողներ և պահպանողները սասոնք եղած են:

Իր ընդհանուր և լայնագույն առումով մարգարե են բոլոր այն մարդերը, որոնք Աստուծո հետ սերտ հաղորդակցություն ունեցած են. Աստվածաշունչի բառով՝ Աստուծո հետ «խոսած» են, կամ պատգամ մը ստացած են Անկե: Այս իմաստով մարգարե են մեր մինչև հիմա ներկայացուցած դեմքերուն մեծ մասը, որոնք արդարև «մարգարե» անունով ծանոթ են իսլամական կրոնքին մեջ, որ քրիստոնեության պես կհավատա և կընդունի այս մարդոց



Սրբազան հեղինակը

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից, 1978 թվականի № № Ա—Գ-ից և 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից և Ե-ից:

Աստուծմե ներշնչված ըլլալու իրականությունը:

Սակայն իր մասնահատուկ իմաստով Հին Կտակարանի մեջ մարգարե կկոչվին բոլոր անոնք, որ Աստուծմե կոչվին անձի մը կամ ժողովուրդի մը պատգամ մը հաղորդելու համար: Ուրեմն այս իմաստով մարգարեն ԱՍՏՈՒԾՈ ԽՈՍՆԱԿՆ Է. մեկը որ կրնա ըսել «Այսպես կըսե Տերը»: Ճշմարիտ մարգարեի մը հիմնական հատկանիշն է ըլլալ անկաշառ, անկախ և անվախ, ու վերջին ծայր հավատարիմ Աստուծո տված պատգամին:

Քրիստոնեական հավատամքի մեջ ս. Հոգիի մասին կըսվի ի միջի այլոց. «Որ խօսեցաւ յօրէնս եւ ի ՄԱՐԳԱՐԷԷՍ»: Ուրեմն Աստված խոսած է մարգարեներու միջոցավ: Անոնք Աստուծո խոսքին ապաստավորներն են: Աստուծմե պատգամներ ստանալով մարդոց փոխանցող միջնորդներ են: Մարգարեները միաժամանակ Աստուծմե հայտնյալ կրոնքը իր զտության և հարազատության մեջ պահող ախոյաններն են, ի գին ամեն զոհողության որուն մեջ է նաև իրենց կյանքին զոհողությունը, և դիմելով ամեն միջոցի, ներառյալ հեղափոխությունը և ճշմարիտ կրոնքի թշնամիները ֆիզիքապես փճացնելը:

Հին Կտակարանը գրողները մեծագույն մասամբ ասոնք են: Հրեաներ ամբողջ Աստվածաշունչը կբաժնեին երեք մասերու—**Օրենք**, ՄԱՐԳԱՐԵՔ և **Մատյանք**: Օրենքը Աստվածաշունչի առաջին հինգ գիրքերն են, որոնք գերազանց մարգարեն՝ Մովսես գրված կնկատվեին. իսկ ՄԱՐԳԱՐԵՔ կոչվածներն են հաջորդ վեց պատմական գիրքերը—Հեսու, Դատավորաց և Ա—Դ թագավորաց—և մարգարեներու անունով ծանոթ տասնվեց գիրքերը: Իսկ **Մատյանք** կոչվածները Հին Կտակարանի մնացյալ գիրքերն են:

Հին Ուխտի մարգարեները կրնանք բաժնել երկու խումբերու. ա) **Գործիչ մարգարեներ**, որոնք մեզի գրություններ չեն ձգած. բ) **Գրող մարգարեներ**, որոնք իրենց հայտնյալ պատգամները իրենց ժամանակակից սերունդին բերանացի հայտնելեն հետո, գրի կապած են զանոնք և իբրև անկորընչելի ժառանգություն ձգած են հաջորդ սերունդներին:

Կսկսինք գործիչ մարգարեներով, որոնք արդարև կկանխեն գրող մարգարեները:

21. ՍԱՄՎԵԼ

Սամվել վախճան մը և սկիզբ մըն է Հին Կտակարանի մեջ: Վերջինն է դատավորներուն և սկիզբը մարգարեներուն:

Ուխտի զավակ է Սամվել և Աստուծո նվիրվեցավ մանկության շատ մատաղ տարիքին: Մայրը զայն ընծայելու ատեն կրսե. «Փոխ կուտամ զայն Աստուծո ամբողջ իր կյանքի ընթացքին»:

Արդարև Սամվել Աստուծո և իր ժողովուրդի ծառայության մեջ մնաց մինչև իր մահը, որ տեղի ունեցավ 1095 թվին նախ քան Քրիստոս:

Փղշտացիներ կրկին կհարձակին իսրայելացիներու վրա և գերի կտանին անոնց գերագույն Սրբությունը, Ուխտի Տապանակը, որուն գերության լուրը իմանալով օրվան ծերացած քահանայապետը և դատավորը՝ Հեղի, կիյնա աթոռեն և կմեռնի: Սամվել որ մեծցած էր անոր ձեռքին տակ, և արդեն իսկ հաստատված և ժողովրդականություն շահած անձ մըն էր իբրև Աստուծո մարդը, գրեթե ինքնաբերաբար հաջորդեց անոր իբրև դատավոր Իսրայելի: Իր առաջին գործը եղավ Աստուծո ճամբայեն շեղած Իսրայելը ապաշխարանքի հրավիրել և հրահանգել որ հեռացնեն իրենց մեջեն օտար աստվածները: Սամվել եզրակացուց իր պատգամը սա պարզ խոսքերով. «Տիրոջ դարձեք ձեր բոլոր սրտով, զԱյն պաշտեցեք, ու Ան պիտի ազատե զձեզ փղշտացիներեն»: Արդարև ժողովուրդը ապաշխարեց, պահեցողություն ըրավ խոստովանելով որ մեղանչած էր առաջի Աստուծո, ու կավելցնե ս. Գիրքը. «Այստեղ է որ Սամվել դատել սկսավ Իսրայելի որդիները»: Եվ ապա աղոթքով և իր ժողովուրդը խրախուսելով պարտության մատնեց փղշտացիները, որոնք այլևս չհամարձակեցան շարունակել իրենց ասպատակությունները Իսրայելի վրա ամբողջ Սամվելի դատավորության ընթացքին, որ տևեց 22 տարիներ:

Սամվել ծերացած ըլլալով իր որդիները իր տեղ դատավոր կարգեց. ասոնք սակայն ապիկար և անարժան դուրս եկան, և ժողովուրդը Սամվելեն ԹԱԳԱՎՈՐ պահանջեց: Սամվել հակամայա օծեց Սավուղ, որուն գորավիգ և առաջնորդ եղավ: Սկզբնական շրջանին Սավուղ հաջող և ժողովրդանվեր գործունեություն ունեցավ. հետո սակայն ինկավ Աստուծո աչքեն ու Աստված հրամայեց Սամվելին օծել Դավիթ իբրև ապագա թագավորցու:

Թեև Մովսես եղավ առաջին և գերազանց մարգարեն, բայց Իսրայելի մարգարեներու անընդհատ շարքը, կամ մարգարեական դպրոցը Սամվելով կսկսի: Իր մանկութենեն իսկ, սրտահույզ պայմաններու տակ, Աստված «կանչեց» Սամվելը և ինքզինքը և իր կամքը հայտնեց անոր: «Սամվել մեծցավ և Աստված անոր

հետ էր, և իր խոսքերեն ոչ մեկը առանց կատարումի մնաց: Ու գիտցավ ամբողջ Իսրայելը, թե Սամվել Աստուծո հավատարիմ ՄԱՐԳԱՐԵՆ էր, և Տերը շարունակեց երևիլ անոր Սելովի մեջ» (Ա Թագ. Գ 19—21):

Մովսեսի դրած տարրական բայց հիմնական սկզբունքով կառաջնորդվեր Սամվել, և կառաջնորդեր իր ժողովուրդը երբ շարունակ կըսեր. «Մի խոտորիք Տիրոջմե, ծառայեցեք Անոր ձեր բոլոր սրտովը...: Տիրոջ համար ավելի հաճելի է Անոր պատգամներուն անսալը քան զոհը և ողջակեզը: Ով որ կարհամարհե տիրոջ խոսքը՝ պիտի արհամարհվի Անկե» (Ա Թագ. ԺԵ 22—23):

Սամվելի օրով առաջին անգամ կհիշվին «Պար Մարգարեից» կամ «Եկեղեցի Մարգարեից», այսինքն մարգարեներու խումբեր կամ եղբայրություններ, որոնք միասին նապրին և միասին կշրջագային և որոնք «սրինգի, թմբուկի, քնարի և փողի» նվագահարությամբ կսկսեին պարել կրոնական ու ծիսական պար մը, որու ընթացքին հափշտակումի և վերացումի պահեր կունենային ու «Կմարգարեանային»: Այս «մարգարեությունը» ուրիշ բան չէր եթե ոչ զգալ և ակնատեսներուն զգացնել գերբնականի ներկայությունը: Վարակիչ բան մը ուներ այս պարը իր մեջ և կազդեր բոլոր մասնակցողներուն մինչև իսկ եթե անոնք սովորական աշխարհականներ ըլլային, ինչպես պատահեցավ քանիցս Սավուղ թագավորին և իր մարդոց (Ա Թագ. Ժ 5, բաղդ. ԺԹ 18—24): Երաժշտությամբ ներշնչվելով մարգարեություն ընելը կշարունակվի մինչև Եղիսե մարգարե (բդդ. Դ Թագ. Գ 15):

«Մարգարեից եկեղեցիները» կատաղի պաշտպաններ էին ճշմարիտ Աստուծո պաշտամունքին ընդդեմ տեղական և օտար աստվածներուն: Սամվել կնկատվի ասոնց պարագլուխը (Ա Թագ. ԺԹ 20):

Սամվել արի և աղոթանվեր անձ մըն էր: Մովսեսի պես աղոթքով հրաշքներ գործեց և օժանդակեց իր ժողովուրդի հաղթանակին (Ա Թագ. Է 5—8): Երբ ժողովուրդը իրմե թագավոր ուզեց՝ Սամվել աղոթքով ստացավ Աստուծո պատգամը այս մասին (Ա Թագ. Ը 6—9): Սավուղի շեղումին համար այնքան մեծ ցավ զգաց որ ամբողջ գիշերը աղոթքով անցուց (Ա Թագ. ԺԵ 11): Հույնք և լատինք կհիշեն Սամվելը օգոստոս 20-ին:

22. ԵՂԻԱ

Կրակե մարգարեն. կրակի պես այրող ու կրակի պես մաքրող: Ուրիշ գագաթ մը Հին Կտակարանի մեջ, և ամենեն ուժեղ դեմքը մարգարեներուն: Անհազդու է արտաքին երևույթով. ահեղ է գործերով: Աստուծո արդար զայրույթին մարմնացումն է երկրի վրա: Կապրի «քաղաքակրթության» այլասերիչ ազդեցություններե հեռու, բնության ծոցին մեջ:

Ոչինչ ըսված է իր նախընթացի մասին: Երբ հանկարծ կերևի Աստվածաշունչի թատերաբեմին վրա՝ արդեն կազմավորված Աստուծո մարդն է Եղիան:

Օրվան Իսրայելի թագավորը, Աքաաբ, խորքին մեջ գեշ թագավոր մը չէ. բայց իր չար ոգին է թագուհին, Փյունիկեցի կռապաշտ Հեզաբելը: Այս կինը Իսրայել բերած է իր հարսանեկան օժիտներուն և նաժիշտներուն հետ նաև իր երկրին աստվածները և անոնց քուրմերը, որոնց թիվը կմոտենա հազարի: Արքունիքեն սկսյալ երկիրը թաթախված է Իսրայելի պատմության ամենեն թանձր կռապաշտության մեջ: Այս ահավոր կացության դեմ պայքարելու համար Աստված կհարուցանե Ահավոր Եղիան:

Հանկարծ կներկայանա Աքաաբին և կարտահայտվի այս միտքով.—Երկիրը ողողեցիր կռապաշտությամբ և հետևաբար Աստուծո բարկությունն ալ միասին հրավիրեցիր վրադ: «Կաթիլ մը անձրև պիտի չտեղա այս տարիներ երկրիդ վրա, մինչև որ ես կրկին ներկայանամ քեզի» (Գ Թագ. ԺԷ 1): Ու նույն հանկարծականությամբ կաներևութանա թե՛ թագավորի ներկայությենեն և թե՛ երկրեն: Եղիա գիտեր որ զինք պիտի փնտռեին մեռցնելու համար. ուստի հեռացավ երկրին հյուսիսային կողմը, Փյունիկեցվոց Սարեփթա քաղաքը, ուր կըվայելե ասպնջականությունը այրի կնոջ մը, որուն սափորեն ալյուրը անպակաս կըլլա և պտուկեն՝ յուղը երաշտի տարիներուն, և որուն մեռած զավկին կյանք կպարգևե Եղիան:

Երաշտի երրորդ տարին կներկայանա Եղիա Աքաաբին, որ կդիմավորե զայն սա բառերով.

— Այդ դո՞ւ ես, Իսրայելի խանգարիչ:

— Խանգարիչը դուն ես և քու հորդ տունը, ըսավ Եղիան, որ մոռցաք ձեր Աստվածը և սկսաք պաշտել Բահաղները: Արդ, մարդ ղրկե և կանչե ամբողջ Իսրայելը Կարմեղոս լեռան վրա, կանչե նաև Բահաղի և Աստարտեի քուրմերը, որոնք կկերակրվին Հեզաբելի սեղանեն:

ԱՄԵՆԱՍՍ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Արդարև այսօրվան Հայֆա քաղաքի կոնակին երկարած Կարմեղոս լերան վրա տեղի ունեցավ տրամադիկ պայքարը Եհովայի և Բահաղի միջև, հանձինս Եղիայի և Բահաղի քուրմերուն. իսկ թագավորն ու բազմահազար ժողովուրդը կազմեցին հանդիսատեսները այս կրոնական տրամին:

Կանգնեցավ Եղիա իր հսկա հասակով ամենքի դիմաց և ըսավ.

— Մինչև ե՞րբ երկու ոտքի վրա պիտի կաղաք. անգամ մը Աստուծո կողմը հարելով և մյուս անգամ Բահաղի կողմ հակելով: Եթե Եհովան է ճշմարիտ Աստվածը հետևեցեք Անոր. եթե Բահաղն է՝ կապվեցեք անոր: Ես միայն մնացած եմ իբրև Տիրոջ մարգարեն. իսկ Բահաղը և Աստարտեն ունին իննհարյուր հիսուն մարգարեներ: Արդ, տվեք մեզի երկու եզներ, մեկը անոնց, մեկը՝ ինձի: Պատրաստենք զանոնք. մեզմե յուրաքանչյուրը թող դնե իր զոհը իր սեղանին վրա: Այն Աստվածը, որ կրակ կղրկե երկինքեն և կայրե իր զոհը այն է ճշմարիտ Աստվածը: Բոլոր ներկաները. միահամուռ համաձայնեցան Եղիայի առաջարկին:

Բահաղի քուրմերը մորթեցին իրենց եզը և դրին իրենց շինած բագինին վրա: Առտուընե մինչև կեսօր պոռացին-կանչեցին «Բահաղ լսե մեզի» հանկերգով: Եղիա չկրցավ պահել իր հեգնանքը և պոռթկաց.

— Ավելի բարձրաձայն կարդացեք. որովհետև աստված մըն է ի վերջո. գուցե զբաղմունք մը ունի, կամ զբոսանքի գացած կրնա ըլլալ, կամ ճամբորդության ելած է, կամ ալ քնացած կրնա ըլլալ և արթնցնել ետք է...»: Իննհարյուր հիսուն մոլեռանդ քուրմերու դիմաց միս-միանակ կեցած նման խոսք մը նետելը հասարակ մահկանացուի գործ չէր: Բահաղի քուրմերը իրենք իրենցմե եռած ծիսական պարեր կդառնային իրենց սեղանին շուրջ և կվիրավորեին իրենց մարմինները սուրով ու նիզակներով, իրենց աստվածին գոյթը շարժելու համար:

Կեսօրը անցած և մոտեցած էր Իսրայելյան երեկոյան զոհի կանոնական ժամը: Եղիա միջամտեց.

— Մեկ կողմ կեցեք այլևս. կարգը իմն է: Ու սարքեց Տիրոջ սեղանը տասներկու քարերով: Վրան շարեց փայտի շերտերը. որավ սեղանին վրա իր պատրաստած զոհը և ըսավ իր շուրջիններուն.

— Ջուր բերեք և թափեցեք զոհին վրա: Թափեցին չորս սափոր ջուր: Կրկնեցեք, ըսավ. կրկնեցին. երեքկնեցեք ըսավ. երեքկնեցին: Ջուրը ողողեց զոհը, փայտերը, ամբողջ սեղանը և լճացավ անոր շուրջ բացված լայն փոսին մեջ: Եղիա այսպես աղոթեց.

«Տեր Աստված Աբրահամի, Իսահակի և Հակոբի, թող այսօր ամեն ոք ճանչնա, թե դուն ես Իսրայելի Աստվածը, ու ես՝ քու ծառադ: Լսե ինձի, Տեր, կրակով...»:

Հազիվ ավարտած էր աղոթքը, երբ «Տիրոջմե կրակ իջավ և կերավ ողջակեզը, փայտի շերտերը, քարերը և հողը. ու լափեց լճացած ջուրը սեղանին շուրջ» (Գ Թագ. ԺԸ 38): Երբ ժողովուրդը այս տեսավ, «ինկան իրենց երեսին վրա և ըսին. Արդարև Տերն է ճշմարիտ Աստվածը»: Ու Եղիա օգտագործելով հոգեբանական պահը՝ գոռաց.

— Բռնեցեք Բահաղի քուրմերը, անոնցմե ոչ մեկը արժանի է ապրելու: Բռնեցին զանոնք, իջեցուցին մոտակա հեղեղատը և կոտորեցին զանոնք և մարմինները գետը նետեցին: Ապա աղոթեց Եղիա և երկուքուկես տարիներե ի վեր սպասված անձրևը տեղաց առատորեն:

Կատղեցավ բնականաբար Հեզաբել երբ իմացավ իր քուրմերուն կոտորածը. լուր ղրկեց Եղիային ըսելով. «Եթե դուն Եղիան ես, ես ալ Հեզաբելն եմ. թող աստվածներ պատուհասեն զիս, եթե վաղը այս ժամուն դուն ալ իմ քուրմերուս ճակատագրին չարժանանաս»:

Եղիա հակառակ իր խիզախության և հրաշագործ կարողության «մարդ էր իբրև զմեզ չարչարելի», կրսե Հակոբոս առաքյալ (Ե 17): Հետևաբար Հեզաբելի սպառնալիքեն «վախցավ Եղիա, և ելավ ու գնաց առանձինն», այս անգամ երկրի հարավային ծայրը, մինչև Սինա լեռը և այնտեղ քարարի մը մեջ ապաստանեցավ գրեթե հուսակտուր, և սպասեց Աստուծո նոր պատգամին: Իբրև նախանշանները Աստուծո ներկայության նախ ելավ «մեծ և ուժգին հով մը, որ լեռները կքակեր և ժայռերը կխորտակեր. ասոր հաջորդեց երկրաշարժ և կրակ», ճիշդ այնպես ինչպես պատահած էր նույն տեղ շուրջ 500 տարիներ առաջ Մովսեսի օրով: Սակայն այս բոլորին մեջ Եղիան չզգաց Աստուծո ներկայությունը: Հուսկ ապա լսվեցավ «մեղմ օդի ձայն մը». Եղիա զգաց Աստուծո ներկայությունը այս խաղաղարար զեփյուռին մեջ. գլուխը ծածկեց իր մաշկյակով, և ելավ ու կեցավ քարայրի մուտքին: Ձայնը ըսավ իրեն.

— Ի՞նչ գործ ունիս այստեղ, Եղիա:

— Ամենակալ Տիրոջ նախանձով վառվեցա, որովհետև Իսրայելի որդիներ ուրացան քու ուխտդ, քակեցին սեղաններդ,

կոտորեցին մարգարեներդ, ու ես միայն մնացի, այժմ զիս ալ կփնտռեն մեջտեղեն վերցնելու համար:

Աստվածային ձայնը ըսավ. «Վերադարձիր երկիրդ». ու նոր հրահանգներ տրվեցան Եղիային, որոնց նպատակն էր նախ հաստատել, թե ջարդով կարելի չէր դատ շահիլ, ինչպես ինք փորձած էր ընել Բահաղի քուրմերը կոտորելով. այլ կազմակերպչ. գործունեություն անհրաժեշտ էր: Այս կազմակերպության մաս կկազմեր հեղափոխական շարժում մը Իսրայելի մեջ, նոր թագավոր մը օծելով, որ մեջտեղեն պիտի վերցներ Հեզաբելը և իր չարագործությունները: Այս նոր գործունեության մաս կկազմեր նաև իրեն օգնական և հաջորդ մը ընտրելը, որ շարունակե իր սկսած գործը, որովհետև ժամանակը եկած էր, որ ինք քաշվեր ասպարեզե:

Եղիա իրեն հաջորդ ընտրեց Եղիսե անուն մեծահարուստ հողագործ մը: Երբ սա տասներկու զույգ եզներով և օգնականներով արտ կվարեր, Եղիա իր մաշկյակը անոր վրա ձգեց:

Եղիսե հասկցավ իմաստը այս անխոս արարքին. հրաժեշտ տվավ ընտանիքին և տեղվույն վրա իր վարած զույգ մը եզները մորթեց, գութանի փայտերովը եփեց զանոնք և իբրև մատաղ բաժնեց ամենքին և հետևեցավ ու աշակերտեցավ Եղիայի (Գ Թագ. ԺԹ 19—21):

Եղիա զգալով իր վախճանին մոտենալը մի առ մի այցելեց մարգարեական խումբերու զանազան կեդրոնները: Եղիսեն ներկայացուց անոնց, և հանձնարարեց վերջինիս որ անոնց հետ մնա, քանի որ Աստված զինքը այլուր կկանչեր: Եղիսեն սակայն պնդելով պնդեց որ պիտի չհեռանար իրմե մինչև վերջին վայրկյանը: Երբ հրաշքով անցան Հորդանանը և խոսակցելով կերթային, «Հանկարծ հրեղեն կառք մը և հրեղեն երիվարներ զատեցին երկուքը իրարմե և Եղիա մրրիկով երկինք վերացավ» (Դ Թագ. Բ 11): Այսպես հանդիսանալով երկրորդ անգամ Աստվածաշունչի մեջ, որ մահ չտեսավ երկրի վրա, այլ երկինք փոխադրվեցավ, ինչպես եղած էր Ենովքի պարագային (Ծննդ. Ե 24):

Անսովոր վախճան ունեցող Եղիայի անսովոր տոնակատարություն սահմանած է մեր եկեղեցին: Մինչ բոլոր մյուս սուրբերուն հիշատակը կհարգվի շաբթվան սովորական ուտիք օրերուն, Եղիա բացառաբար կհիշատակվի կիրակի օր մը, Հոգեգալուստին հաջորդող կիրակիին, որ սկիզբը է միաժամանակ Հարության սովորական կիրակիներուն:

Եղիա ամեն մասամբ նախատիպն է Հովհաննես Կարապետին. ոչ միայն զգեստավորմամբ և արտաքին կերպարանքով, այլ նաև կենցաղով, բարքով և նախանձախնդրությամբ (Բդ. Դ Թագ. Ա 8 և Մտթ. Գ. 4):

Եղիային հիմնական հատկանիշներն են նախանձահուզությունը, համարձակախոսությունը և արդարության պաշտպանությունը, որ հատկապես երևան եկավ, երբ Հեզաբելի մեքենայությամբ և զրպարտությամբ սպանվեցավ Նաբովթ անուն հասարակ քաղաքացին և անոր այգին հարբունիս գրավվեցավ: Եղիա ներկայացավ թագավորին և հանդիմանեց զայն խստաբույն բառերով՝ անարգ մահ մը նախատեսելով թե՛ թագավորին, և թե՛ թագուհիին, ինչ որ ի վերջո իրականացավ (Գ Թագ. ԻԱ գլուխ):

Եղիան կապրի և կգործե նախքան Քրիստոս Թ դարու առաջին կեսին: Հույնք և լատինք կհիշատակեն զայն հուլիս 20-ին:

23. ԵՂԻՍԵ

Տեսանք իր նախընթացը, թե ինչպես Եղիայի աշակերտեցավ: Եղիսե Հին Կտակարանի այն բացառիկ դեմքն է, որուն ամենեն շատ հրաշագործություն վերագրված է Մովսեսե հետո: Եղիային կվերագրվի յոթ հրաշքներ. Եղիսեին տասներեք: Արդարև Եղիայի երկինք վերանալե առաջ Եղիսեն ուզած էր անոր կրկին հոգին:

Իր հրաշքներուն նշանավորագույնն է Նեեման Ասորիի բժշկությունը: Դամասկոսի թագավորին զորավարն էր վերջինս, որ բորոտությենե բռնված էր: Իմանալով Եղիսեի հրաշագործ կարողությունը ներկայացավ անոր դրան առջև կառքերով, ձիերով և հետևորդներու գրեթե բանակով մը: Մարգարեն առանց դուրս գալու՝ իր փոքրավորին հետ հրահանգ ղրկեց որ երթա և յոթն անգամ լվացվի Հորդանան գետի մեջ: Նեեման կակնկալեր, որ Եղիսեն մասնավոր հետաքրքրություն ցույց տար իր հանդեպ, առնվազն դուրս գար, աղոթեր, կամ ձեռքը վրան դներ: Երբ չտեսավ ակնկալածը բարկացավ և ուզեց վերադառնալ. «Եթե գետի մը մեջ լվացվելով պիտի բուժվիմ, մենք Հորդանանեն ավելի մեծ և ավելի լավ գետեր ունինք, անոնց մեջ կրնամ լվացվիլ» ըսելով: Սակայն իր հետևորդները իջեցուցին անոր բարկությունը և ըսին. «Եթե ավելի ծանր առաջարկ մը ըրած ըլլար պիտի չհնազանդե՞ր»: Տեղի տվավ Նեեման, գնաց, լվացվեցավ Հորդանանի մեջ և բժշկվեցավ իր ախտեն:

Վերադարձավ շնորհակալություն հայտնելու մարգարեին և ըսավ. «Այժմ հասկցա որ Իսրայելի Աստուծո պես Աստված չկա աշխարհի վրա»: Եվ խնդրեց, որ հաճեր ընդունիլ իր նվերները: Եղիսե մերժեց. Նեեման պնդեց. Եղիսե տեղի չտվավ: «Այն ատեն շնորհեցեք որ երկու ջորիի բեռ հող վերցնեմ ձեր երկրեն, որովհետև ասկե հետո Եհովայեն զատ ոչ մեկ ուրիշ Աստված պիտի պաշտեմ» ըսավ զորավարը: Ու Եղիսե արձակեց զայն խաղաղությամբ:

Փորձիչը մտավ սակայն Եղիսեի փոքրավորին, Գեեզիի սիրտը. ինչո՞ւ իր տերը չօգտագործեց այս սքանչելի առիթը հարստանալու և օգնելու նաև իրեն: Ուստի որոշեց ինք օգտվիլ առիթեն: Հազիվ մեկնած էր Նեեմանի կարավանը, երբ հասավ անոնց ետևեն, և ըսավ թե վերջին պահուն հյուրեր եկած էին. ուստի իր տերը քիչ մը դրամի և հագուստեղենի պետք ունեցավ: Նեեման հաճույքով և ավելիով տվավ ուզածները: Երբ սակայն Գեեզի առածները իր տունը տեղավորելեն հետո վերադարձավ իր մեծավորին մոտ, Եղիսեն ըսավ անոր. «Քանի որ նվերներ ստացար Նեեմանեն, պիտի ժառանգես նաև անոր բորոտությունը»: Խեղճ մարդը երբ եկավ Եղիսեի քովեն, արդեն իսկ բորոտած էր ամբողջ մարմինով. (Դ Թագ. Ե գլուխ):

Եղիսե թեև աշակերտ ու հաջորդ էր Եղիայի, սակայն հսկա տարբերություն կար երկուքի կյանքին, նկարագրին և գործելու կերպերուն մեջ: Եղիան մենակյաց մըն էր և իր կյանքը անցուց մշտական պայքարի մեջ. ունեցավ ընկրկումի և վհատության պահեր, երբ մինչև իսկ մահ խնդրեց Աստուծմե: Եղիսեն ընդհակառակը շարունակ ապրեցավ ընկերության մեջ և իր կյանքը հաղթանակներու և հաջողությանց շարք մը եղավ: Կսիրեր երաժշտությունը և հաճախ մարգարեանալու համար պետք կրզգար նվագի օժանդակության. (Դ Թագ. Գ 15):

Իր կյանքը պայքարե ավելի բարեկարգություններով և կազմակերպչական գործերով անցուց: Արտաքին թշնամիները կշահեր բարիքով և բարեկամությամբ: Կպատմվի որ Սուրիացիներ պաշարած են քաղաք մը, ուր կմնար Եղիսե: Առտուն կանուխ եկավ քաղաքեն մտավ թշնամի բանակի մեջ և ըսավ, որ սխալ քաղաք պաշարած են և խոստացավ առաջնորդել զանոնք իրենց փնտռած քաղաքը: Մարդիկ ոչխարի պես հետևեցան իրեն: Բերավ զանոնք և մտցուց Սամարիա, իր երկրին մայրաքաղաքը: Մարդիկը հանկարծ անդրադարձան, որ թշնամիին ձեռքը ինկած են: Սամարիո թագավորը ըսավ. ջարդե՞նք ասոնք: Ոչ ըսավ Եղիսե, այլ կերակրեցեք, հյուրասիրեցեք և պատվով ճամբա դրեք: «Անկե հետո Սուրիացի ասպատակներ անգամ մըն ալ չերևցան Իսրայելի սահմաններուն մեջ», կեզրակացնե պատմությունը (Դ Թագ. Զ):

Իսկ ընդհակառակը ներքին թշնամիները, իբրև ավելի վտանգավորներ, անհնա փճացնելու քաղաքականության կհետևեր: Ուստի Եղիսե թագավոր օծել տվավ Հեհու զորավարը, որ բնաջնջեց Աքաաբի կուսպաշտ գերդաստանը, և մեջտեղեն մաքրեց Հեզաբելը, հրամայելով որ վար նետեն զայն արքունիքի պատուհանեն: Երբ ամեն մարդ զբաղված էր կերուխումով և հաղթանակի տոնակատարությամբ, շուներ կերած էին ամբարիշտ թագուհիին ջախջախված մարմինը:

Որչափ հրաշքներու և հաջողությանց շարք մը եղած էր Եղիսեի կյանքը, նույնքան հրաշապատում եղավ նաև իր վերջին օրերը և մահը: Մահվան անկողինին մեջ անգամ, երբ օրվան թագավորը իրեն այցելած է, կարտասկնդ զայն և թշնամիին վրա հաղթանակի ցուցմունքներ կուտա:

Ու երբ մեռավ և թաղվեցավ, ատեն մը վերջը պատահաբար ուրիշ մեկը թաղեցին իր գերեզմանին մեջ: Անծանոթին մարմինը երբ դպավ Եղիսեին ոսկորներուն, հարություն առավ մեռյալը. (Դ Թագ. ԺԳ 14—21): Այնպես որ ի զուր տեղ չէր որ մեղմորեն քաջասիրտ այս մարգարեն Եղիայի կրկին հոգին խնդրած էր:

Եղիսե ապրեցավ ու գործեց Քրիստոսե առաջ Թ դարու վերջին կեսին: Հույնք և լատինք կտոնեն զայն հունիս 14-ին:

Իսկ մեր եկեղեցին՝ Հոգեգալուստի Ե կիրակիի հինգշաբթին:

24. ՀՈՎԲ

Հովբ թեև նախապես հիշվածներուն և հաջորդ հիշվելիքներուն իմաստով «մարգարե» մը չէ. բայց իբրև այդ ճանչցված է թե՛ հունաց և թե՛ լատինաց մոտ, ինչպես նաև իսլամներու կողմե: Ուստի կզետեղենք զայն իբրև միջին օղակը գործիչ և գրիչ մարգարեներու միջև:

Հովբ հերոսն է իր անունը կրող Գրքին, որու մասին բարձրագույն գնահատանքներ կան գրված միտքերու կողմե: Ըսած է Լուտեր. «Գերազանց գիրքը ամբողջ Աստվածաշունչին»: Թենիսն զայն նկատած է «մեծագույն բանաստեղծությունը հին և նոր ժամանակներու»: Գարլայլ հայտարարած է. «Ազնվական գիրք մը. համայն մարդկության գիրքը... կկարծեմ թե չկա գիրք

մը, Աստվածաշունչին մեջ անկե դուրս, որ հավասարի անոր գրական արժեքին: Այս բոլորի հակառակ՝ որքան ծանոթ է Հովբի պատմությունը, նույնքան անծանոթ է այս հոյակապ գիրքը»:

Հովբի անվան իսլամական շրջանակներու մեջ պահված հնչումը, ԷՅՈՒԲ, ավելի հարազատ է և մոտ՝ սկզբնական ձևին: Մեր և եվրոպական լեզուներու մեջ գործածական դարձած ձևը կորսնցուցած է իր հարազատությունը տառադարձության ընթացքին, որ կուգա հունական ձևեն, և ոչ՝ եբրայականեն:

Հովբի մեզի ծանոթ պատմությունը ներկայացված է համանուն գրքի առաջին երկու գլուխներու՝ և վերջին գլուխի վերջաբանի մեջ՝ արձակ ոճով: Իսկ Գրքին միջանկյալ 40 գլուխները տառապող արդարին սրտի բանաստեղծական ու պատկերալից ոճով պոռթկումն է, որուն կմիանան նաև Հովբի երեք բարեկամները խայթիչ վերագրումներով՝ և Աստված՝ իր պատգամներով: Գիրքը ծայրե ի ծայր խարխափում մըն է—երբեմն թափանցում—բայց միշտ որոնում մըն է կյանքի և կրոնքի հիմնական հարցերուն, որոնք այնտեղ ալ իրենց լրիվ լուծումը չեն գտներ, և սահմանված են կարծես հավիտյան անլույծ մնալու: Հոռետեսության ու դառնության լարին հետ կզարնվի նաև Աստուծո մեծության ու փառքին քնարը. ու կյանքի գաղտնիքը Աստուծո կամքին համակերպելու իմաստության մեջ կգտնե այս գրքին հեղինակը: Ինչպես ըրած էր Ժողովող գրքի հեղինակը: Հովբինը պատմությունն է մարդու մը, որ կենթարկվի անավոր փորձերու, որոնց մեջեն հաղթական ու հաջող դուրս կուգա: Գրքին վարագույրը կբացվի երջանիկ ընտանիքի մը վրա: Ընտանիքին հայրը, Հովբ, հրեա մը չէ, այլ Աբրահամեն առաջ ապրող արդարներեն որևէ մեկին պես որևէ մարդկային ցեղի պատկանող մարդ մըն է: Մեր Աստվածաշունչի համանուն գրքի վերջավորության տրված ծանոթագրության համաձայն Եդովմայեցի է, հրեից ցեղակից և դրացի ժողովուրդ մը, որ կապրեր Մեռյալ ծովի հարավային կողմը տարածված լեռնաշխարհին մեջ: Հովբ ներկայացված է իբրև «կատարյալ, ու աստվածապաշտ մարդ մը, հեռու ամեն տեսակ մեղքե և չարիքե»: Ունի յոթ մանչ զավակներ և երեք աղջիկ—կատարյալ ընտանիք: Մեծահարուստ է. տեր յոթ հազար այծ-ոչխարի. երեք հազար ուղտի. հինգ հարյուր լուծ եզի. հինգ հարյուր մատակ էշի. և բազմաթիվ ծառաներու: Հարստությունը այլասերած չէ այս մարդուն նկարագիրը, ինչ որ կընե սովորաբար: Մեծագործ է և բարեսեր: «Այնպես որ այս մարդը մեծագույնն էր արևելքի ազնվականներուն»: Հովբի զավակները շարունակ խրախճանքի մեջ են միասնաբար: Իսկ Հովբ աղոթող՝ և ծիսական սրբագործության մեջ անթերի՝ իր զավակներու հավանական սահմանազանցություններու քավության համար: Ասիկա Գրքին նախաբանն է (Ա 1—5):

Բուն տրամը կսկսի երբ տեսարանը հանկարծ երկինք կփոխադրվի: «Աստուծո հրեշտակները—կամ «որդիները» ըստ եբր. բնագրի—Տիրոջ ներկայության կբարձրանան օր մը: Սատանան ալ անոնց հետ է: Ու Աստված խոսակցության կբռնվի սատանային հետ:

—Ուրկե՞ կուգաս, կհարցնե Աստված:

—Երկիրը շրջագայելե, կպատասխանե սատանան:

—Կճանչնա՞ս իմ ծառաս Հովբը. անոր նմանը չկա երկրի վրա, անարատ, ուղիղ և աստվածապաշտ մարդ մը, հեռու ամեն տեսակ չարիքե և մեղքե:

—Միթե ձրի՞ կպաշտե Հովբ իր Աստվածը, վրա կբերե սատանան: Ամեն կողմե անոր պաշտպան կեցեր ես. օրհներ ես անոր ձեռքին գործերը և բազմացուցեր՝ իր հարստությունը: Բայց դրպե մը երկարե ձեռքդ և դպիր անոր ունեցածներուն, և տես թե ինչպես պիտի անիծի քեզ:

—Լավ, ըսավ Աստված, անոր ամբողջ ունեցածը քու տրամադրությանդ տակ կընդնեմ. բայց անոր անձին պիտի չդպիս:

Սատանան իր որսը գտած մեկու մը պես վար կսլանա Աստուծո ներկայութենեն ու անխնա կերպով և մի առ մի կփճացնե Հովբի ամբողջ հարստությունը և կսպաննե անոր զավակները:

Այս բոլոր նախճիրներու դիմաց «Հովբ ոտքի կելլե, կպատռե իր զգեստները—ի նշան անավոր ցավի և սուգի—կկտրե գլխուն մազերը և գետին կիյնա, Աստուծո կերկրպագե և կըսե միայն.

«Մերկ ելա մորս որովայնեն,
Ու մերկանդամ պիտի վերադառնամ.
Տերը տվավ և Տերը առավ.
Օրհնյալ ըլլա Տիրոջ անունը»:

Ու կավելցնե Գիրքը. «Այս բոլորին մեջ Հովբ չմեղանչեց Տիրոջ դեմ, և անզգամ բաներ չվերագրեց Աստուծո»:

Կրկին տեսարանը երկինք կփոխադրվի. նույն տեսարանը և նույն սկզբնական խոսակցությունը Աստուծո և սատանայի միջև. ի վերջո Աստված կավելցնե.

—Թեև դուն պարապ տեղը գրգռեցիր

զիս որ փճացնեմ անոր հարստությունը, բայց տեսար որ Հովբ պահեց իր անմեղությունը:

—Սորթի տեղ մորթ. պատասխանեց սատանան: Մարդ ամբողջ ունեցածը կուտա իր կյանքը պահպանելու համար: Սակայն անգամ մը երկարե ձեռքդ և դպիր անոր ոսկորներուն և մարմինին, տես թե ինչպես պիտի անիծե քեզ:

—Լավ, ըսավ Աստված, ահա կմատնեմ զայն քու ձեռքդ. բայց անոր կյանքին պիտի չդպիս:

Ու սատանան վարակեց Հովբի մարմինը թարախոտ վերքերով, ոտքեն մինչև գլուխը: Հովբ խեցիի կտոր մը առած կքերեր թարախը, նստած աղբանոցի վրա: Ոչ ոք իր երեսը կնայեր. կինն անգամ, որ հեռացած էր իրմե, օրին մեկը մոտեցավ իրեն լոկ ըսելու համար.

—Մինչև ե՞րբ այսպես պիտի համբերես, փրկության ակնկալությամբ. անեծք կարդա Աստուծո դեմ և մեռիր ու ազատվե:

—Անզգամ կնոջ մը պես կխոսիս դուն, ըսավ Հովբ. եթե Տիրոջ ձեռքեն բարիքներ ընդունեցինք, չարիքներուն ինչո՞ւ պիտի չհամբերենք:

Հովբի հեռավոր երեք բարձրաստիճան բարեկամները, երբ լսեցին անոր գլխին եկած փորձանքները, եկան մխիթարելու զայն: Երբ տեսան՝ չկրցան ճանչնալ զայն. բարձրացուցին իրենց ձայնը և սկսան լալ: Այնքան անմխիթարական էր Հովբի վիճակը, որ ափոփանքի ոչ մեկ խոսք կրցան գտնել: Նստան անոր քով, ու անխոս մնացին «յոթն օր յոթը գիշեր»: Ի վերջո Հովբ խզեց լռությունը և ողբաց.

«Թող կորնչի օրն իմ ծննդյան,
Ու գիշերն այն՝ երբ ըսվեցավ. մանչ մը ծնավ.
Խավար պատե, չհաշվվի այն՝ օրերուն մեջ.
Ու լույս չծագի անոր վրան»...:

Ու այսպես էջերով կբացվի կծիկը տրամաբանության Հովբի և երեք բարեկամներու միջև, մինչև որ ի վերջո կմիջամտե Աստված. կհանդիմանե անոր երեք բարեկամները, որոնք կպնդեին որ Հովբ ծանր մեղք գործած պետք էր ըլլար, որուն համար այս պատուհասները իր գլխուն եկած էին: Արդարացած դուրս կուգա Հովբ ի վերջո այս փորձանքեն: Ու Աստված կվարձատրե զայն առաջվանեն ավելի մեծ օրհնություններով:

«Հարվածեն հետո Հովբ ապրեցավ 170 տարի. Հովբի բոլոր տարիներու թիվը եղավ 248 տարի: Տեսավ Հովբ իր թոռները և անոնց որդիները. վախճանեցավ Հովբ ծերացած և իր օրերը լեցուցած: Ու հանդերձյալ է հարություն առնել, անոնց հետ, զորս Տերը պիտի հարուցանե»:

Այսպես երջանիկ վերջավորություն մը ունեցավ կյանքը մարդու մը, որ համբերության մարմնացումը հանդիսացավ: Առանց համբերության ոչ ոք կրնա հաղթական կյանք ապրիլ երկրի վրա և ժառանգել հավիտենականությունը, ինչպես հաստատեց մեր Տերը. «Ով որ մինչև վերջ համբերե», այն միայն արժանի պիտի ըլլա ժառանգելու հավիտենականությունը:

Հովբի կյանքը մեզի կտրվեցնե երկու հիմնական ճշմարտություն կյանքի մասին: Նախ՝ աշխարհի չարիքներու ետին կա միշտ չարության ոգիին—սատանային—մատը: Երկրորդ՝ մարդը ապերջանիկ դարձնելու մտքով իր հրահրած նեղությունները և տառապանքները կնպաստեն մարդը կատարելագործելու և անոր փառքը և փայլը ավելցնելու, նման հալոցի մեջ զտված ոսկիի, կամ այն քարածուխին, որ կրսեն թե երկրաբանական ահավոր ճնշումներու ներքև ի վերջո կվերածվի սպիտակ և գեղեցիկ մարմարի:

Մեր եկեղեցվո մեջ Հովբի հիշատակը կտոնվի Վերափոխումի հաջորդող երրորդ շաբթվան հինգշաբթի օրը, Հովհաննես Կարապետին հետ. իսկ հունաց մեջ՝ մայիս 6-ին. լատինաց մոտ՝ մայիս 10-ին:

(Շարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 81—94)



ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԵՐԱՆՈՍ ԿԱՄ ԻՐԵՆԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԻՈՆԻ (125?—202)

Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ իրենց սրբակրոն վարքով, մատենագրական բազմաժանր վաստակով ու եկեղեցական-հովվական գործունեությամբ հայտնի են **Հարք եկեղեցւոյ** կոչված մի քանի հայրապետներ կամ եպիսկոպոսներ ևս, որոնց հիշատակը կատարում է հայ եկեղեցին:

Արևելյան ուղղափառ եկեղեցին ընդունում է որպես **Հարք եկեղեցւոյ** չորս մեծ հայրապետների՝ **ս. Բարսեղ Կեսարացուն, ս. Գրիգոր Նազիանզացուն, ս. Հովհան Ոսկեբերանին** և **ս. Աթանաս Ալեքսանդրացուն**[1]:

Արևելյան ուղղափառ եկեղեցին, բացի վերոհիշյալ այս չորս Հայրերից, ընդունում է նաև համաքրիստոնեական նշանակություն ունեցող երեք **Վարդապետք եկեղեցւոյ**՝ սուրբ Բարսեղը, սուրբ Գրիգոր Նազիանզացին և սուրբ Հովհան Ոսկեբերանը:

Արևմտյան եկեղեցին ևս ընդունում է որպես ընդհանրական եկեղեցու մեծ ու վաստակաշատ, անվիճելի եկեղեցական հեղինակություններ Արևելքի այս չորս մեծ հայրապետներին: Բոնիֆակիոս Պապը, սակայն, 1296-ին Արևմուտքի համար **Վարդապետք եկեղեցւոյ** է հռչակել Օգոստինոսը, Ամբրոսիոսը, Հերոնիմոսը և մեծն Գրիգոր Պապը[2]:

Արևմտյան եկեղեցու համար վերոհիշյալ այդ չորս վարդապետները ունեն նաև **Հարք եկեղեցւոյ** կոչված հայրապետների կարևորությունն ու նշանակությունը, թեև հետագա դարերում Արևմտյան եկեղեցու ընդունած **Վարդապետք եկեղեցւոյ** խմբի վրա ավելացվել են նաև այլ անուններ:

Հայ եկեղեցին, սակայն, Արևմտյան եկեղեցու ընդունած ոչ մեկ վարդապետ «չէ ճանչցած» որպես սուրբ, «հետևաբար անոնցմե ոչ մեկը մտած չէ մեր տոնացուցին մեջ»[3]:

Հարք եկեղեցւոյ և **Վարդապետք եկեղեցւոյ** հասկացողությունները նույնը չեն, սակայն, ըստ մասնագետների[4]: **Հարք եկեղեցւոյ** են կոչվում միայն այն հայրապետները, որոնք իրենց կյանքի և գործունեության մեջ միացրել են չորս անհրաժեշտ չափանիշներ՝ **հավատքի ուղղափառություն, վարքի սրբություն, եկեղեցական-հովվական գործունեության փորձ և վաղեմիություն (հնություն)**:

Իսկ **Վարդապետք եկեղեցւոյ** կոչումը հնում, եկեղեցու պատմության նախնագույն շրջանում, տրվում էր միայն քրիստոնեական ուղղափառ վարդապետությունը քարոզող եպիսկոպոսներին կամ եկեղեցական գրողներին՝ առանց նկատի ունենալու նրանց նվիրապետական աստիճանը: «Թէպէտ և բիւր դաստիարակներ ունէք Քրիստոսով, բայց ոչ՝ բազում հայրեր»[5]:

---

[1] «Էջմիածին» ամսագիր, 1977, № Բ, էջ 20, Գ, էջ 34, Ե, էջ 26, Զ, էջ 54, Է, էջ 28, Թ—Ժ, էջ 46, ԺԱ, էջ 39, ԺԲ, էջ 39:

[2] Johannes Quasten, Patrology, II հատոր, 1964, էջ 10:

[3] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան**, Վարդապետք եկեղեցւոյ, ձեռագիր, էջ 43—44:

[4] Quasten, նույնը, էջ 10:

[5] Նոր Կտակարան, ս. Էջմիածին, 1975, Ա. Կորնթ. Դ 15, էջ 454:

Մեր եկեղեցին կատարում է հիշատակը որպես Արևմտյան եկեղեցու սուրբ հայրապետ, աստվածաբան և մատենագիր, Լիոնի Երանոս կամ Իրենեոս եպիսկոպոսի տոնը:

Հայ եկեղեցու տոնացույցը և մեր վկայաբանական գրականությունը, հիմնականում Յայսմաւուրք-ը, հիշատակում են Արևմուտքի մի շարք հայրապետների անունները, որոնց տոնը կատարում է մեր եկեղեցին, այդ թվում՝ Սիցիլիայի Տոռոմեն Բագարատ եպիսկոպոսի, Հռոմի Կղեմես, Ստեփանոս և Սեղբեստրոս հայրապետների, որոնք ապրել և ստեղծագործել են Գ—Դ դարերում, մինչև Քաղկեդոնի ժողովը[6]:

Իրենեոսը համարվում է Բ դարի ամենամեծ աստվածաբանը և ըստ մեր վարքաբանական գրականության՝ «մեծ սիւն աստուածապաշտութեան հաւատոց, աստուածազգեաց հայրապետ, վարդապետ եկեղեցւոյ, ախոյեան ճշմարտութեան և յաղթահարիչ հերետիկոսաց»[7]:

Մեր եկեղեցին սուրբ Իրենեոսի տոնը կատարում է Խաչի Դ կիրակիի հաջորդ երկուշաբթի օրը[8]:

Իրենեոսի ծննդյան թվականը հստակ չէ: Ծնվել է հավանաբար 125-ին[9] կամ, ըստ ուրիշների՝ 130—140 թվականներին հունական Հոնիայի Զմյուռնիա քաղաքում, որը 40 մղոն հեռու էր պատմական Եփեսոսից և քրիստոնեական եկեղեցու նշանավոր կենտրոն էր[10]: «Զմյուռնիայի մեջ շատ կանուխ հաստատվեցավ քրիստոնեական եկեղեցին և էր մին յոթն եկեղեցեաց առ որս եղավ Հիսուսի պատգամն ի Յայտնութեան Յովհաննու»:

Իրենեոսը քրիստոնեական իր դաստիարակությունը ստանում է Զմյուռնիայի նշանավոր Պողիկարպոս եպիսկոպոսի մոտ, որը աշակերտն էր ս. Հովհաննես Ավետարանչի[11]:

[6] Տես այս մասին «Էջմիածին» ամսագիր, 1979, № 6, էջ 22:

[7] Տես նաև **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյա**[7], Համաքրիստոնեական սուրբեր, Իսթանբուլ, 1978, էջ 38:

[8] Օրացույց, ս. Էջմիածին, 1979, էջ 122:

[9] Larousse Universel, I, էջ 1012,

[10] Տես այս մասին Պողոս առաքյալի թուղթը Եփեսացիներին ուղղված, և Յայտնութեան գիրքը՝ թուղթ Զմիռնիայի եկեղեցուն. Նոր Կտակարան, նույնը, էջ 519—530, 666—668, ինչպես նաև Բառարան սուրբ Գրոց, Կ. Պոլիս, 1881, էջ 201:

[11] Պողիկարպոս եպիսկոպոսի մասին տես **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 94—96: **Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան**, նույնը, էջ 36—38: **Quasten**, Patrology, I հատոր, 1966, էջ 76—82:

Ըստ եկեղեցական պատմիչ Եվսեբիոս Կեսարացու վկայության, Իրենեոսը՝ իր երբեմնի դասընկեր, ապա ուրացող հռոմեացի Ֆլորինոս երեցին գրած նամակում, երախտագիտությամբ և հուզումով է հիշել Զմյուռնիայում իր քրիստոնեական դաստիարակության երջանիկ օրերը Պողիկարպոս եպիսկոպոսի մոտ, նրա տանը, երբ ինքը դեռ տղա էր: «Նա կրթվել է այն շրջապատում, ուր դեռ բոլորովին թարմ էին առաքյալների գործունեության հետքերը և կենդանի՝ առաքելական դարու հիշատակներն ու ավանդությունները»: Նրա ծնողները եղել են քրիստոնյա հույներ: «Ես հիշում եմ այդ օրերի իրադարձությունները ավելի հստակորեն, քան նոր օրերինը,—գրում է Իրենեոսը,—երբ մենք սովորում էինք որպես երեխաներ: Հիշում եմ նույնիսկ այն տեղը: ուր երանելի Պողիկարպոսը նստում էր և խոսում: Հիշում եմ նույնիսկ, թե նա ինչպես եկ և մուտ էր անում: Հիշում եմ նրա կյանքի նկարագիրը, նրա արտաքին կերպարանքը, ժողովրդին ուղղած նրա քարոզները, և թե ինչպես նա մեզ պատմում էր իր տեսակցությունների և խոսակցությունների մասին Հովհաննես առաքյալի և մյուս առաքյալների հետ, որոնք տեսել էին Տիրոջը. ինչպե՞ս նա հիշում էր առաքյալների խոսքերը և պատմում այն ամենի մասին, որ կապված էր Տիրոջ հետ. այդ բոլորը նա լսել էր առաքյալներից, լսել նրանց կատարած հրաշագործությունների և նրանց վարդապետության մասին, և թե ինչպես երանելի Պողիկարպոսը ընդունում էր նրանց ականատեսի վկայությունը՝ Կենաց Բանի մասին: Նա այս բոլորը պատմում էր մեզ նաև սուրբ Գրոց վկայությամբ: Ես այդ բոլորը լսում էի հուզումով: Այդ խոսքերի միջոցով ես ստանում էի ինձ տրված Աստծու շնորհը: Եվ ինչ որ ես նրանից լսում էի, գրի էի առնում ոչ թե թղթի, այլ իմ սրտի՛ վրա և ինձ տրված Աստծու շնորհի միջոցով ես խորհրդածում էի այդ բոլորի վրա»[12]:

Ըստ Իրենեոսի «միայն եկեղեցվո մեջ է ճշմարտությունը: Եկեղեցին ունի առաքյալներից ստացած թղթեր և հավասարապես մինչև առաքյալները հասնող բերանացի ավանդություն, որի ամբողջ անվրեպ պահպանությունը անընդհատ հաջորդական եպիսկոպոսությամբ է ապահովվում»:

[12] **Եվսեբիոս Կեսարացի**, Պատմութիւն եկեղեցւոյ, յեղեալ յաստուրոյն ի հայ, ի հինգերորդ դարու, Վենետիկ, 1877, Ե 20: Տես նաև **Quasten**, նույնը, էջ 287:

Այս բոլորից հստակորեն երևում է, որ Պողիկարպոսի միջոցով Իրենեոսը կապվում է Առաքելական դարի հետ[13]. «Իրենեոսը վերջին օղակն է, որ Առաքելական շրջանի հայրերը կկապե հետագա մեծ հայրերու: Օղակ է միաժամանակ Արևելքի և Արևմուտքի միջև: Ծնունդով, մտայնությամբ արևելքցի, իսկ ուսմամբ և գործունեությամբ արևմուտքցի: Իր գործերը գրած է հունարեն»[14]:

Եկեղեցական հայրերի գրականությունը, որը ծանոթ է Հայրաբանություն անունով, գրվել է հունարեն լեզվով և համարվում է հիմնական աղբյուրը քրիստոնեական հին գրականության: Նույնիսկ Սրևմուտքում, Հռոմում, Գալլիայում, Հյուսիսային Աֆրիկայում մինչև Գ դարի սկզբները եկեղեցական գրականության լեզուն եղել է հունարենը: Արևելքում է, որ հունարենը մասամբ միայն փոխարինվել է հայերեն, ասորերեն, և ղպտերեն տեղական լեզուներով:

Լատիներեն լեզվով քրիստոնեական գրականությունը սկիզբ է առել Աստվածաշնչի լատիներեն մասնակի թարգմանությամբ, Գ դարում[15]:

Սհա թե ինչու Իրենեոսը ևս իր աստվածաբանական, մեկնողական, հակաճառական աշխատությունները հերետիկոսների դեմ գրել է հունարեն, որոնք վերջում միայն, Դ դարում, թարգմանվել են լատիներենի:

Հայտնի չէ, թե 157 թվականին ինչո՞ւ Իրենեոսը թողել է Արևելքը, Փոքր Ասիան, անցել է Արևմուտք և գնացել Գալլիա «որպես առաքյալ Գալլիայի» (Encyclopedia Americana, vol. 15, էջ 325): Լիոնի Փոտինիոս եպիսկոպոսը նրան երեց է ձեռնադրում, և 178 թվականին Իրենեիոսը որպես Լուգդունի կամ Լիոնի եկեղեցու երեց, տեղի քրիստոնեական համայնքի կողմից ուղարկվել է պատվաբեր մի հանձնարարականով Հռոմ, Ելևթերիոս Պապի (175—189) մոտ, մոնտանականության հարցով զբաղվելու համար, ինչպես վկայում է Եվսեբիոս Կեսարացի պատմիչը[16]:

Քրիստոնեությունը իր ծագման և իր քարոզչության առաջին իսկ մեկ օրից ստիպված է եղել իր վարդապետությունն ու գաղափարախոսությունը պաշտպանել ոչ միայն արտաքին երկու կատաղի թշնամիների՝ մովսիսական կրոնի և հեթանոսության դեմ, այլև Ա և Բ դարերում իր իսկ ծոցում ծնունդ առած երկու հերետիկոսական աղանդավորության՝ գնոստիկության և մոնտանականության դեմ[17]:

Գնոստիկյան և մոնտանական աղանդավորական շարժումները միմյանցից բոլորովին տարբեր նկարագիր ունեին:

Գնոստիկություն բառը ծագում է հունարեն gnosis, գիտություն բառից:

Գնոստիկյան շարժման սկզբնավորությունը պետք է փնտրել նախաքրիստոնեական ժամանակներում: Այդ շարժումը բնութագրվում է որպես «փրկության վարդապետություն գիտության միջոցով»: Այդ ուսմունքը տարօրինակ մի խառնուրդ էր հրեության, հեթանոսության, արևելյան միստիկական կրոնների և հունական փիլիսոփայությունից վերցված մի շարք հայեցողական տարրերի:

Գնոստիկյանները ձգտում էին քրիստոնեական գաղափարախոսության մեջ վրճռական դեր հատկացնել հունական փիլիսոփայությանը, մերժել, խիստ քննադատության ենթարկել քրիստոնեական Հայտնությունն ու Ավանդությունը, քրիստոնեական վարդապետության գրավոր աղբյուրները խիստ հելլենականացնելով աղարտել քրիստոնեական կրոնի էությունը, զրկելով նրան նաև պատմական-փրկչաբանական իր բնավորությունից, հեռացնելով նրանցից այն ամենը, ինչ որ իրենց կարծիքներին ու տեսություններին հետ չէր համաձայնվում[18]:

Գնոստիկյանները քրիստոնեական կրոնը համարում էին ոչ թե մարդկության գործնական փրկության բացարձակ վարդապետություն, այլ կրոնական-փիլիսոփայական մի աշխարհայեցողություն:

Սհա թե ինչու գնոստիկյան շարժումը եկեղեցու ծոցում գնահատվում էր «ամենամեծ ճգնաժամը», որի դեմ պայքարը մահու և կենաց հարց էր եկեղեցու համար»[19]:

Գնոստիկյանների դեմ պայքարողների առաջին շարքերում էր նաև Իրենեոսը, որը պաշտպանում էր Հին և Նոր Կտակարանների ներքին միությունը և մերժում գնոստիկյան մեկնություններն, որոնցում պընդ-

[13] Quasten, նույնը, էջ 287:

[14] Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 38:

[15] Quasten, նույնը, էջ 20—22:

[16] Եվսեբիոս Կեսարացի, նույնը, էջ Ե, 4—7: նույնը, էջ 288:

[17] Գնոստիկյան աղանդավորական շարժման մասին տես պրոֆ. Ն. Սագարդա, Հույն Արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը, թարգմ. Արտակ վրդ. Սմբատյանց, Մայր Աթոռ, 1910, էջ 10—18, Encyclopedia American, vol. 12, էջ 735—736:

[18] Պրոֆ. Ն. Սագարդա, նույնը, էջ 11:

[19] Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց, նույնը, էջ 73—81:

կում էր, թե իրենց ուսմունքը համաձայն է Հին Կտակարանի վկայությանը:

Գնոստիկյան աղանդավորական շարժման գլխավոր գաղափարախոսն էր հանդիսանում առաքյալների ժամանակակից Սիմոն կախարդը կամ մոգը[20]: Նա սամարացի էր և իր հայրենակիցներին զարմացրել էր իր «սոգությունների», ասելով իր մասին, թե «ինքը մեծ ոմն է»: Նա Պետրոս առաքյալից մկրտվեց և փորձում էր նրանից կաշառքով ստանալ առաքելական շնորհ և իշխանություն: Պետրոս առաքյալը հանդիմանեց նրան ու մերժեց.

«Քո արծաթը թող քեզ հետ կորչի, քանի որ կկարծեիր, թե Աստուծո պարգևները փողով կրնաս ստանալ»[21]:

Բ և Գ դարերում որպես գնոստիկյան գաղափարախոսներ հիշվում են Բազիլիտեսը, Իզիդորը, Վալենտինոսը, Մարկիոնը և ուրիշներ[22]:

Գնոստիկյան համայնքները իրենց գոյությունը պահեցին երկար ժամանակ, մանավանդ Արևմուտքում:

Գնոստիկյանների հակառակ մոնտանական աղանդավորները քարոզում էին ժամանակակից աշխարհի մոտալուտ կործանումը, աշխարհի վայելքներից՝ հրաժարում, խստացրած վանական-ճգնական կյանք, ապաշխարություն, սեռային կրքերի սանձահարում, բարոյականի և վարքի սրբություն, կուսություն և, վերջապես՝ փախուստ դեպի անապատները կամ ամայի վայրերը, դիմավորելու համար Քրիստոսի երկրորդ գալուստը, որ գալու է կատարելու աշխարհի և մարդկության վերջին դատաստանը: Ուրեմն պատրաստ պետք է գտնվել:

Գնոստիկյանները հարվածում էին քրիստոնեական կրոնի և եկեղեցու հոգևոր հիմքերը, նրա հոգևոր-կրոնական ընկարագիրը, մինչ մոնտանականները ընդունում էին, որ քրիստոնեությունը կորցրել է իր տիեզերական, փրկագործական ընկարագիրը, որովհետև կանգ է առել եկեղեցու հոգևոր, ներքին զարգացումը:

Մոնտանականությունը փորձում էր վերադառնալ Առաքելական դարու եկեղեցական կյանքի պարզության, «բոնի կերպով վերանորոգել և պահել նախնի ժամանակների կենցաղավարության եղանակները, հին համայնական գաղափարները և հին մարգարեությունը. բայց հալածանքների սարսափների տակ նա տեսնում էր պարզ աչոք վախճանի նշանները»[23]:

Մոնտանական աղանդավորական շարժումը սկիզբ է առնում Փոյուգիայում Բ դարի սկզբներին: Շարժման ղեկավար էր հանդիսանում նորադարձ նախկին հեթանոս մի քուրմ, Մոնտանոս անունով, որպես մարգարե: Մարգարեական շնորհ ունեցող մի քանի կանայք[24] հետևեցին Մոնտանոսին, որը իրեն համարում էր Հովհաննու Ավետարանի մեջ Քրիստոսի խոստացած Մխիթարիչը[25]: Մոնտանոսը քարոզում էր, որ մոտ է Քրիստոսի երկրորդ գալուստը և երկնային Երուսաղեմը իջնելու է շուտով Փոյուգիայի Պեպուզա քաղաքի մոտ, հետևաբար պետք է դուրս գալ այս աշխարհից և հավաքվել նոր արքայության համար: Սկսվում է հավատացյալ հսկա բազմությունների փախուստը դեպի անապատ: Շարժումը տարածվում է ողջ Փոքր Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում: Միաժամանակ սկսվում է պայքարը աղանդի դեմ, եկեղեցական ժողովների և ուղղափառ եպիսկոպոսների կողմից:

Մոնտանական շարժումը 170-ական թվականներին նահանջի մեջ էր արդեն, որովհետև նրա քարոզած «վախճանը» տեղի չունեցավ: 196-ին, ըստ Եվսեբիոսի վկայության, մոնտանական շարժումը կորցնում է հողը իր ոտքի տակ և դուրս է մղվում եկեղեցուց[26]:

Եկեղեցու ուղղափառ մի շարք եպիսկոպոսներ, այդ թվում նաև Իրենեոսը, ինչպես նաև «ամենալուրջ և հավատարիմ քրիստոնյաները», ազդված մոնտանականների խիստ ճգնողական վարքից ու բարոյականության մաքուր ըմբռնումներից, «չէին կարող չհամակրել այս շարժումը: Այդ բանը ամենալավ կերպով տեսնում ենք Հարավային Գալլիայի (Լիոն) համայնքների խիստ հարաբերությունից Փոքր Ասիացիների հետ»[27]:

Իրենեոսը Հռոմից Լիոն վերադարձավ, բարյացակամորեն տրամադրված դեպի մոնտանական շարժումը: «Իրենեոսը մինչև

---

[20] Նոր Կտակարան, Գործք առաքելոց, գլուխ Ը, 10—25, նույնը, էջ 340—341:

[21] Այս դեպքից է առաջ եկել եկեղեցական իարձր պաշտոնները փողով կամ կաշառքով ստանալու փորձությունը կամ մոլորությունը, որը կոչվում է Սիմոնականություն:

[22] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 75—81, Quasten, նույնը, էջ 254—275:

[23] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 84:

[24] Նոր Կտակարան, Գործք առաքելոց ԺԱ 27, ԻԱ 10, էջ 352 և 383:

[25] Նույնը, Հովհ. ԺԴ 5—15, էջ 300, Գործք Ա 8, էջ 318:

[26] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 84—88:

[27] Նույնը, էջ 80:

անգամ պաշտպանում էր նրանց մարգարեությունը, հենվելով Պողոսի Ա Կորնթ. թղթի վրա»[28]:

Հռոմի եկեղեցին տարբեր դիրք էր բռնում մոնտանական շարժման դեմ: Հռոմի Եղեթերիոս Պապը առաջինը դեմ դուրս եկավ այդ շարժմանը: Եվ Իրենեոսը Հռոմում չկարողացավ Պապին բարյացակամորեն տրամադրել դեպի այդ շարժումը, հակառակ որ Լիոնի համայնքի կողմից երկու թուղթ էր տարել Հռոմի եպիսկոպոսին՝ մոնտանականներին ի նպաստ:

Իրենեոսը Լիոն վերադարձավ 178-ին և տեղի Փոտինիոս եպիսկոպոսին գտավ նահատակված: Իրենեոսը հաջորդեց նահատակ եպիսկոպոսին, «եղավ պետը Գալլիայի եկեղեցիներուն, զորս հովվեց առաքինությամբ, մեծ եռանդով և հեզությամբ հոգվո»[29]: Գալլիայում ծանր հալածանքների ենթարկվեց քրիստոնեական եկեղեցին, մանավանդ Սեպտիմոս Սևերոս կայսրի օրով (193—211): Լիոնը համարվում է մարտիրոսների քաղաք:

Իրենեոսը Հռոմի Վիկտոր Ա եպիսկոպոսի (189—198) օրոք հաշտարար դեր է կատարում Հռոմի և Փոքր Ասիայի եկեղեցիների միջև Զատիկը տոնելու հարցում:

Բ և Գ դարերում ձեռքի տակ չունենալով գրավոր վկայություններ, արևելյան և արևմտյան եկեղեցիները, ավանդուչյան վրա հիմնված, վիճում էին միմյանց հետ Զատիկը կամ Քրիստոսի Հարության հիշատակը տոնելու հարցի շուրջ: Արևելքում, և մանավանդ Փոքր Ասիայում, տեղական ավանդության համաձայն, Զատիկը տոնում էին Նիսանի 14-ին, հրեաների հետ՝ պնդելով, որ այդպիսի ավանդություն ունեն Հովհաննես և Փիլիպոս առաքյալներից: Իսկ Արևմտյան եկեղեցին, հենվելով Պետրոս և Պողոս առաքյալների ավանդության վրա, պնդում էր, որ Զատիկը պետք չէ կատարել հրեաների հետ, շաբաթ օրը, այլ նրա հաջորդ կիրակի օրը: Վեճը գնալով բորբոքվում էր Արևելքի և Արևմուտքի միջև: Հռոմի Վիկտոր Ա եպիսկոպոսը համարձակվեց նույնիսկ նզովել Փոքր Ասիայի եկեղեցիներն ու եպիսկոպոսները, բայց կըշտամբանքի ենթարկվեց Իրենեոսի կողմից, որը զգուշացնում էր Վիկտոր Ա-ին այդպիսի պառակտիչ քայլի դիմելուց, հանուն եկեղեցու խաղաղության և ներքին անդորրության. «Անհամաձայնություն կա եկեղեցիների միջև,—գրում է նա Պապին,—ոչ միայն այդ օրվա (Զատիկը Նիսանի 14-ին տոնելու մասին), այլ նաև պաս պահելու ավանդության մասին»[30]:

Եվսեբիոս Կեսարացին այս առթիվ Իրենեոսին անվանում է «խաղաղարար»՝ «Իրինոպիոս»[31], որը իր այդ ջանքերով բարձրացրեց դարձյալ իր անունը:

Այս դեպքից հետո եկեղեցական պատմության մեջ 190 թվականից սկսած չի հիշվում Իրենեոսը: Նույնիսկ հայտնի չէ նրա մահվան թվականը: Ավանդությունը հաստատում է, որ նա մարտիրոսական մահվամբ կնքեց իր կյանքը: Այս մասին, սակայն, վկայություն չկա Եվսեբիոսի մոտ[32]:

Մեր Ցայսմաւուրքը հաստատում է, որ Իրենեոսը նահատակությամբ է կնքել իր արդյունաշատ կյանքը, «երբ քաջալերում էր Քրիստոսի խոստովանողները, որ ամուր կառչած մնան իրենց հավատքին և արիաբար դիմավորեն մահը: Իրենեոսն էլ այս առթիվ ձերբակալվում է և բանտարկվում: Երբ նա հանվում է հեթանոս դատավորների առաջ հարցաքննության համար, համարձակորեն վկայում է Քրիստոսի աստվածության մասին, որի համար էլ զանազան տանջանքների է ենթարկվում: Եվ երբ չի ուրանում զՔրիստոս և իր հավատքը, հրաժարվում է կուռքերին զոհ մատուցելուց, սրախողխող է լինում», հավանաբար 202 թվականին, Սևերոս կայսրի հալածանքների ժամանակ[33]:

ՍՈՒՐԲ ԻՐԵՆԵՈՍԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սուրբ Իրենեոսը թեև իր ծնունդով և դաստիարակությամբ արևելքցի է, ծնված ու կրթված Զմյուռնիա քաղաքում, բայց իր (եկեղեցական-հովվական գործունեությամբ) և մանավանդ իր հարուստ և բազմաժանր մատենագրական վաստակով պատկանում է արևմտյան եկեղեցու հայրերի խմբին:

Իրենեոսը կոչվում է «հետևող առաքելոց և մին է եկեղեցվո այն ամենահին հայրերից, որոնք առաքելական ավանդության

[28] Նույնը, էջ 87:

[29] Թորգոմ պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 151:

[30] Հայոց եկեղեցական իրավունքը, Ա գիրք, 1903, աշխատություն Ներսես վրդ. Մելիք-Թանգյանի, Շուշի, էջ 38—39:

[31] Եվսեբիոս Կեսարացի, նույնը, V, 17, 24: Quasten, նույնը, էջ 288:

[32] Quasten, նույնը, էջ 288:

[33] Տես նաև Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 38: Թորգոմ պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 151:

ներկայացուցիչ և զորեղ ջատագովներ հանդիսանալով մեծապես նպաստել են իրենց բազմակողմանի գործունեությամբ երկրորդ դարու նորակազմ, ներքուստ և արտաքուստ անշափ վտանգված եկեղեցին անարատ պահելու և որոշ կարգերով, որոշ դավանական սկզբունքներով հաստատուն հիմքերի վրա հաստատելու»[34]:

Իրենեոսը հանդիսանում է Բ դարու արևմտյան եկեղեցու նշանավոր և ամենակարևոր եկեղեցական հայր, որպես մատենագիր և աստվածաբան:

Եկեղեցական հայրերի մեջ «ժամանակագրական կարգով իսկապես առաջինը բռնում է քրիստոնեության Բ դարու ամենից աչքի ընկնող հեղինակ Լուգդումի (Լիոն) պատկառելի եպիսկոպոս և նահատակ» Իրենեոսը[35]:

Իրենեոսը «կենդանի հարաբերության մեջ է եղել յուր ժամանակակից քրիստոնեության կարևոր կենտրոնների հետ և եռանդում մասնակցություն է ունեցել այդ բազում հուզվող բոլոր կրոնական խնդիրների և վեճերի մեջ: Եվսեբիոսից առաջ ապրող հայրերից ոչ ոք յուր գործերով այնքան չէ նպաստում ծանոթանալու եկեղեցական պատմության այս նախկին շրջանին և պարզաբանելու նորա շատ մութ կողմերը, որքան նա»[36]:

Բ դարու եկեղեցական հայրերի մեջ Իրենեոսը հանդիսանում է կորովի և կրքոտ պաշտպանը ընդհանրական եկեղեցու ուղղափառ վարդապետության և առաքելական ավանդության և մի շարք հերետիկոսությունների, այդ թվում մանավանդ գնոստիկյան քրիստոնեական աղանդավորական շարժման դեմ իր գրած հակաճառական-քննադատական և ջատագովական, մատենագրական վաստակով[37]:

Իրենեոսը այս բնույթի իր մատենագրական վաստակում հանդես է բերում բազմակողմանի ծանոթություն, խորը գիտություն իր օգտագործած աղբյուրների, միաժամանակ բարոյական պատասխանատվություն, կրոնական խանդավառ և անսպառ եռանդ[38]:

Դժբախտաբար Իրենեոսի մատենագրական վաստակը մեզ ամբողջական ու անկորուստ չի հասել, բացի մեկից, այն էլ լատիներեն թարգմանությամբ: Նրա մնացած գործերից միայն հատվածներ կան հունարեն, հայերեն և ասորերեն:

Իրենեոսի ամենակարևոր գործը համարվում է նրա հոչակավոր **Ընդդէմ Հերձուածողաց** (Adversus Haereses) կամ **Հակաճառութիւն ընդդէմ ստանուն գիտութեան** աշխատությունը:

Սույն աշխատությունը, որը բաղկացած է հինգ գրքերից, հայտնի է միայն լատիներեն մի հին թարգմանությամբ[39]:

Ա գրքում Իրենեոսը զբաղվել է ընդհանրապես գնոստիկյան հերետիկոսության ծագման և զարգացման մանրամասն պատմությամբ: Գրվածքը կրում է վիճաբանական-հակաճառական բնույթ, որի մեջ սպանիչ քննադատության են ենթարկվել շարժման հիմնադիր Սիմոն կախարդի, նրա հետևորդներ գնոստիկյան Մենանդրի, Վալենտինոսի, Բազիլիդեսի, Իսիդորի, Կարպոկրատեսի, Մարկիոնի և բազում այլ վտանգավոր գնոստիկյանների աղանդավորական մոլորությունները:

Բ գիրքը հերքում է մասնավորաբար Վալենտինոսի և Մարկիոնի գնոստիկությունը:

Գ գիրքը ջատագովություն է, որը ներկայացնում է Աստուծո և Քրիստոսի մասին եկեղեցու ուղղափառ և առաքելական վարդապետությունը:

Դ գիրքը նվիրված է Տիրոջ խոսքերին և

Ե գիրքը խոսում է մարմինների հարության մասին: Մարմինների (մեռելոց) հարության վարդապետությունը առհասարակ մերժում էին բոլոր գնոստիկյանները:

Գրքի եզրակացության մեջ Իրենեոսը խոսում է եկեղեցու պատմության մեջ ծանոթ «հազարամեայ վարդապետության» կամ Քրիստոսի երկրորդ գալստյան մասին[40]:

Ընդդէմ Հերձուածողաց գրքում, հակառակ նրա շատ մեծ կարևորությանը, ըստ գրական քննադատության, «պակասում են հստակ կարգ ու կանոն, կանոնավորություն, մտածման միություն ու հետևողականություն և նյութերի համակարգություն: Երկարաբանությունն ու հաճախակի կրկնությունները աշխատությունը դարձնում են ձանձրալի ընթերցելու համար: Այս բոլո-

[34] **Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյան**, Իրենեոս և նշխարներ նորա գրվածքներից, «Արարատ» ամսագիր, 1897, էջ 199:

[35] Կնիք հաւատոյ, հրատարակություն Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), ս. Էջմիածին, 1914, էջ XXXIV:

[36] «Արարատ», նույնը, էջ 199—200:

[37] Ջատագովականների մասին տես **պրոֆ. Ն. Սագարդա**, նույնը, էջ 5—12:

[38] **Quasten**, նույնը, էջ 288:

[39] **Հ. Ս. Անասյան**, Արմատ հաւատոյ-ի աղբյուրներից, Իրենեոս Լուգդունացի, «Էջմիածին», 1977, № Ը, էջ 41—47:

[40] **Quasten**, նույնը, էջ 289:

րով հանդերձ, սակայն, Իրենեոսը գիտի տալ պարզ և համոզիչ նկարագիրը եկեղեցու վարդապետության: Իրենեոսի սույն աշխատությունը ներկայացնում է այնուամենայնիվ գնոստիկյան գիտության, սիստեմների և նախկին եկեղեցու վարդապետության մասին ամենամեծ կարևորությունը»[41]:

Ընդդէմ Հերձուածողաց գիրքը հունարենից լատիներենի է թարգմանվել Հյուսիսային Աֆրիկայում, 350—420 թվականներին[42]:

«Ինչպես հունական և հռոմեական եկեղեցիների, այնպես էլ հայ եկեղեցու համար Իրենեոսը հեղինակություն է համարվել քրիստոնեության վաղագույն շրջանում գոյություն ունեցող վարդապետական տարակարծությունների հարցում և կարևոր աղբյուր՝ հերձվածողական ու հերետիկոսական շարժումների պատմության համար»[43]:

Մեզ հասել են Իրենեոսի **Ընդդէմ Հերձուածողաց** աշխատության Դ և Ե գրքերի հայերեն հին թարգմանությունը, որը հայտնաբերեց Մայր Աթոռի գիտնական միաբան Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, 1904 թվականին, Երևանի կաթողիկե ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերից մեկի մեջ (այժմ Երևանի ս. Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 3710):

Իրենեոսի սույն աշխատության հայերեն հին թարգմանությունը 1910 թվականին Լայպցիգում հրատարակեց դարձյալ Մայր Աթոռի հմուտ միաբան Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանցը՝ Ադոլֆ Հարնակի և Կարլ Շմիդտի հովանավորությամբ:

Սույն աշխատությունը կոչվում է Ireneaeus Gegen die Häretiker, Buch IV V. Leipzig, 1910, texte and untersuchungen.

Գիրքը ունի հետևյալ մասերը.

1. Հառաջաբան, Vorwert, էջ III—VII, գերմաներեն լեզվով. 1910 թվականին Ալեքսանդրապոլում գրել է այն Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանցը:

2. Դ գրքի գլխակարգություն, 97 գլուխ, էջ 1—6, ապացույց և մեկնություն, ապա բնագիրը, էջ 7—245:

3. Ապա Իրենեոսի գիրք Ե. «Ցանդիմանութեան և եղծման ստանուն գիտութեան». էջ 246—250՝ «Վկայութիւնք Իրենեոսի ի բառգիրս Ստեփաննոսի Ռոշքայ Կամենեցւոյ (ի շարս գրչագրաց թիւ Գ) մատենադարան Անտոնեան միաբանութեան Ցորթաքէոյ Կ. Պոլիս»:

251—264 էջերում տպագրվել է «Ցանկ վկայութեանց սուրբ Գրոց», Ծննդոց գրքից մինչև Հայտնություն: Իրենեոսի սույն աշխատության մասին հիշատակում է միայն Եվսեբիոս Կեսարացին[44]: «Եւ այլ միւս ևս ճառ ընծայեալ Մարկիոնի ուրումն եղբօր ի **ցուցակութիւն քարոզութեան առաքելոցն**»:

Իրենեոսի **Ընդդէմ Հերետիկոսաց** աշխատության Դ և Ե գրքերը հայերենի են թարգմանված հավանաբար Է—Ը դարերին՝ հունարենից: Գիտական աշխարհին այն ծանոթ է միայն հայերեն թարգմանությամբ: Կարծվում է, որ աշխատության ձեռագիրը Հեթում Բ հայոց թագավորի (1226—1270) կրտսեր եղբոր՝ Հովհաննես արքեպիսկոպոսի սեփականությունն է եղել և գրվել է 1270—1289 թվականներին: Թարգմանիչը կոչվում է Սահակ վարդապետ, հավանաբար Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոսն է (677—703), որը հայտնի թարգմանիչ է եղել և մասնագետ հունարեն լեզվի և դպրության[45]: Թարգմանության թվականը համարվում է 650—750 թվականները:

Իրենեոսի մատենագրական վաստակի երկրորդ կարևոր աշխատությունը, որ գիտական աշխարհին ծանոթ է դարձյալ միայն հայերեն հին թարգմանությամբ, կոչվում է **Ցոյցք առաքելական քարոզութեան:**

Իրենեոսի սույն աշխատությունը հայտնաբերել է 1904 թվականին Երևանի կաթողիկե ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերի մեջ դարձյալ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, և այն Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանցը հրատարակել, 1907 թվականին, Լայպցիգում: Իրենեոսի սույն աշխատության «հունարեն բնագիրը և կամ նրանից կատարված թարգմանությունները ուրիշ լեզուներով՝ առհասարակ հայտնի չեն բանասիրությանը»[46]:

Մայր Աթոռի միաբան Գարեգին վարդապետ Հովսեփյանը բովանդակալից մի «Մատենախօսական» է գրել **Ցոյցք առաքելական քարոզութեան** աշխատության հրատարակության առթիվ[47], հետևյալ վերնագրով. «Մի կարևոր գտում: Ս. Իրենեոսի (Իրենոս) «Ցոյցք առաքելական քարոզութեանն» ունված հայերեն թարգմանությամբ: Հրատարակեցին և թարգմանեցին

[41] Նույնը, էջ 290:

[42] Նույնը, էջ 291:

[43] Հ. Ս. Անասյան, նույնը, էջ 41:

[44] Եվսեբիոս Կեսարացի, նույնը, Ե 26:

[45] Մատաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Ա. Բեյրութ, 1959, էջ 788:

[46] Հ. Ս. Անասյան, նույնը, էջ 42:

[47] «Արարատ», 1907, հունվար, էջ 59—65:

գերմաներեն լից. դր. Կարապետ (վարդապետ) Տեր-Մկրտչյան և լից. դր. Երվանդ (վարդապետ) Տեր-Մինասյանց, Ադոլֆ Հառնակի վերջաբանով և ծանոթագրություններով, Լայպցիգ, 1907:

Իրենեոսի «Ցոյցք»-ը կարևոր գիրք է եկեղեցու ուղղափառության մասին, որը մեզ ցույց է տալիս, թե «ինչպես էին հրահանգում Բ դարու եպիսկոպոսները քրիստոնեական հավատի մեջ իրենց հավատացյալներին»[48]:

Սույն ջատագովական աշխատությունը բաղկանում է երկու մասերից: Մի քանի ներածական նշմարներից հետո (գլ. 1—3), առաջին մասը բաղկանում է 39 գլուխներից, ուր Իրենեոսը ներկայացնում է քրիստոնեական կրոնի էական բովանդակությունը, աստվածային երեք անձնավորությունների ստորոգելիները, խոսում է մարդու ստեղծման և ապա անկման մասին, բացատրում է մարդեղության և փրկագործության խորհուրդները. երկրորդ մասը, որը բաղկանում է 42—97 գլուխներից, խոսում է քրիստոնեական կրոնի Հայտնության ճշմարտության ապացույցների մասին, սկսած Հին Կտակարանից և Հիսուսին ներկայացնում Դավթի որդի և Մեսիա (Quasten. նույնը, էջ 292—293):

«Ցոյցք»-ը շատ կարևոր և հնագույն մի ձեռնարկ է ոչ միայն եկեղեցու ուղղափառ դավանության և առաքելական ավանդության մասին, այլ նաև «քրիստոսաբանական կարևոր խնդիրներ են արծարծված 30, 31, 32 պրակներում. խաչի խորհուրդը և նշանակությունը, 34, 41, 45, 46 պրակներում: Վերջին պրակների մեջ արտահայտված են Իրենեոսի տարբ և մաքուր նոռնականությունը, հրեական և քրիստոնեական կրոնների տարբերությունները, տիրոջ բարձր նշանակությունը»[49]:

Ըստ հրատարակիչների առաջաբանների ենթադրությամբ «Ցոյցք»-ը հայերեն է թարգմանել Ստեփանոս Սյունեցին (Ը դար, մահացած 736-ին), հունարեն բնագրից: Գործի մատենախոսությունը ցույց հմուտ Լեմիաձնայանը. սակայն, համաձայն չէ հրատարակիչների այս ենթադրությանը: Նա հավանական է համարում, որ «Ցոյցք»-ի «թարգմանությունը նատարված լինի հիերեհիստների (հունարան դպրոցի?) շրջանում. Ի դարում[50]. Նույն խորհրդի են նաև ատոմարան Հակոբ Մանանդյանը ու գրականագետ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը. «Իրենեոսի Ցոյցք առաքելական քարոզութեանն և Ընդդէմ Հերձուածողաց» երկերը թարգմանված են հունարան թարգմանությունների առաջին շրջանում և դրանց «թարգմանությունները ժամանակակից են Փիլոնի թարգմանություններին»[51]:

Գարեգին վարդապետ Հովսեփյանը իր «Մատենախօսական»-ի մեջ քննության է առնում նաև «Ցոյցք»-ի թարգմանչի հարցը. «Արդյոք նույն թարգմանչի գո՞րծն է «Ընդդէմ Հերձուածողաց»-ի Դ և Ե գրքերի թարգմանությունը և «Ցոյցք»-ի թարգմանությունը»: Այս հարցին կարելի է պատասխանել, նշում է Գարեգին վարդապետ Հովսեփյանը, երբ ձեռքի տակ ունենանք Իրենեոսի գործերի հայերեն թարգմանությունների ամբողջական հրատարակությունը[52]:

Վերոհիշյալ «Մատենախօսական»-ի մեջ Գարեգին վարդապետ Հովսեփյանը, իր ուսումնասիրությունների հիման վրա, նշում է մեր մատենագրության մեջ Իրենեոսի գործերի հայերեն թարգմանությունների հետևյալ հատակոտորները, ըստ Բենեդիկտյան Պետրայի և անգլիացի Հարվեյի ուսումնասիրության.

1. Վասն միապետութեան Ֆլորինոս Երէցի (նրան ուղղած նամակից)[53]:
2. Վասն հերձուածողաց:
3. Բան վասն հաւատոյ:
4. Հատուած քարոզներից:
5. Ի խորհուրդ տօնի Յարութեան:
6. Յաղագս գնացից առաքելոցն և բանից հերձուածողաց:

Այս բոլորը նշելուց հետո Գարեգին վարդապետ Հովսեփյանը եզրակացնում է.

«Բոլոր այս հատակոտորները հավանական են դարձնում, որ Իրենեոսի գործերից ավելի են թարգմանված, քան այժմ հայտնի եղավ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի գյուտով»[54]:

Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը 1897 թվականին «Արարատ» ամսագրում հրատարակել է «Արմատ հաւատոյ»-ի Իրենեոսի հետևյալ հատվածները, «Իրենեոս և նշխարներ նորա գրվածքներից» վերնագրված ուսումնասիրության մեջ[55]:

---

[48] **Գարեգին վրդ. Հովսեփյան**, նույնը, էջ 62:
[49] «Արարատ», նույնը, էջ 63:
[50] Նույնը, էջ 64:
[51] **Հակոբ Մանանդյան**, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները..., Վիեննա, 1928, էջ 223: **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 100—101:
[52] **Գարեգին վրդ. Հովսեփյան**, նույնը, էջ 64:
[53] **Եվսեբիոս Կեսարացի**, նույնը, Ե 20:
[54] «Արարատ», նույնը, էջ 65:
[55] «Արարատ», 1897, էջ 200—201:

Ձեռագիր համար 1945 (Էջմիածնի ձեռագիր). «Երանելոյ Իրէնեոսի հետևողին առաքելոցն և եպիսկոպոսի եղելոյ Ղուկդունի, որ փիղիսոփայից ուսմամբ պայծառացեալ ճանաչէր» (էջ 201): Ապա «Աւրէնք և մարգարէք և աւետարանք քարոզեցին զՔրիստոս ծնիցեալ ի կուսէ» (էջ 201—202):

Նորին Իրէնիոսի

«Սուրբ գրութիւն գիտեն զՔրիստոս որպէս մարդ գոլով, այսպէս և ոչ մարդ գոլով» (էջ 202):

Նորին Իրէնեոսի. «Սուրբ եկեղեցի և թէպէտ ըստ բոլոր է աշխարհ» (էջ 202—203):

Ձեռագիր համար 1946 (Էջմիածնի ձեռագիր):

Երանոսի հետևողի առաքելոցն, «որք հերձնուն և պատառեն զմինն, զՊորովամու պատուհասն ընկալցին, քանզի ընդունայն սնոտիք են, որք երկու բնութիւնս ասեն բաժանեալ և ստանուն Աստուծոյ զփրկութիւնն, զոր ի մարդանալն շնորհեաց մեզ»: Նաև «որ եկն և մի բնութիւն Աստուծոյ և մարդոյն գործեաց»: Դարձյալ. «Անջատեալ են բարք նոցա յԱստուծոյ»...

Նորին

«Զհերձուածս գործեն, զմեծափառութեալ մարմինն Քրիստոսի բաժանեն և հատայկոտորեն»:

Նորին

«Եսայի ասէ. մերձեցայ կին իմ մարգարէ և ծնաւ որդի՝ Սքանչելի խորհրդակից, Աստուած Հզօր, իշխան» (էջ 203):

Նորին ասացեալ

«Անարգեն զՈրդին Աստուծոյ և զմարմնոյ փրկութիւն ուրանան և զվերստին ծնունդ նորա անպատուեն, որք ոչ ասեն զնա լինել ընդունակ անապականութեան, քանզի եկն Որդին Աստուծոյ և զգեցաւ մարմին անապական՝ յանապական կուսէն Մարիամայ»[56]:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում հիշվում են դարձյալ Իրենեոսի գործերի հայերեն թարգմանություններից հատակոտորներ, այսպես. **Ճառընտիր**, Ճառք-Իրինիոս, **Ժողովածու**, էջ 445, ճառք, քարոզք՝ Իրիանոս, դարձեալ ժողովածու՝ կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսաց, Իրէնեոսի Ցոյցք առաքելական քարոզութեանց[57], Ճառընտիր (Մշոյ), ճառք, ներբողեանք (Իրէնեոսի)[58]:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում[59] ևս կան 6 հատակոտորներ կամ հատվածներ Իրենեոսի գործերի հայերեն թարգմանություններից.

«Աւրէնք և մարգարէք և աւետարան քարոզեցին զՔրիստոս ծնիցեալ ի Կուսէ»: Սույն հատակոտորը վերցվել է Ալեքսանդրիայի Աթոռի եպիսկոպոսապետ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկէդոնի» աշխատությունից «ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վարդապետի և Երուանդ վարդապետի»[60]:

Բ հատվածը վերցվել է դարձյալ Կուզի Հակաճառութիւն-ից[61], «Սուրբ գրութիւնք գիտեն զՔրիստոս որպէս մարդ գոլով... Սուրբ եկեղեցի և թէպէտ ըստ բոլոր է աշխարհ...»[62]:

«Կնիք հաւատոյ»-ի երկրորդ հատվածը վերցվել է «Ցոյցք»-ի թարգմանությունից[63], «ուրեմն և մի բնութիւն Աստուծոյ և մարդոյ գործեաց»: Դարձյալ նույն էջում «Քանզի արիւն ոչ եղիցի, բայց եթէ յերակաց և ի մարմնոյ»: Երրորդ հատվածը՝ «Նորին» եկն Որդին Աստուծոյ և զգեցաւ մարմին անապական յանապական ի Կուսէն Մարիամայ»[64]:

Զ և Է հատվածները «Կնիք հաւատոյ»-ի, էջ 293—299, «ըստ մեծի մասին Իրենեոսի մեզ հասնի երկերի պատառիկներից են»[65], «Երանելոյն Երանոսի, հետևողին առաքելոց... ի բանէն որ զստորնին (աղանդավոր Սատորնին). «այսպէս զՅիսուս ըստ երկուց խորհրդոց այսպէս և այլաձև մեկնեն՝ և Նիկոդիտացիքն և Մարկիոն» (Նիկոդոսյան աղանդավորներ), (էջ 293—297): Ապա՝ Նորին Երանոսի... ի բանէն որ, ընդդէմ Կոդարբոսի (աղանդավոր Կարպոկրատոս) և նորին համախոհաց» (էջ 297—299):

«Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» աշխատության մեջ[66] Իրենեոսի ճառերից հայերենի են թարգմանված հետևյալները. «Ի յարութիւն

---

[56] Հ. Ս. Անասյան, նույնը, էջ 44—47: Նաև՝ Հ. Ս. Անասյան, Հայ դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը, Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ, «Էջմիածին» ամսագիր, 1972, № Ը, էջ 27—36, № Թ, էջ 45—56:

[57] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, 1965, էջ 428, 1068:

[58] Նույնը, երկրորդ հատոր, 1970, էջ 598:

[59] Կնիք հաւատոյ, նույնը, էջ XXXV:

[60] Ս. Էջմիածին, 1908, էջ 256—259:

[61] Նույնը, էջ 257—258:

[62] Նույնը, էջ 258—259:

[63] Կնիք հաւատոյ, նույնը, էջ 243:

[64] Նույնը, էջ 244:

[65] Նույնը, էջ XXXV:

[66] Վենետիկ, 1889, էջ 419—421:

Տեառն», «Յաղագս որդւոցն Զեբեդեայ», «Յորժամ և արարածս ազատեալ և նորոգեալ», «Ի Մատթէոսի մեկնութենէն, ի խորհուրդ յարութեանն» և այլն:

Իրենեոսի մատենագրական վաստակի օտար թարգմանությունների հատակոտորների մասին տես Quasten[67]:

Սուրբ Իրենեոսը որպես Բ դարու մեծ աստվածաբան իր մատենագրական վաստակով մասնավոր և խորազնին ուսումնասիրության է ենթարկվել մասնագետների կողմից: Նրա աստվածաբանությունը շատ կարևոր է համարվում նախ նրա համար, որ նա պատռեց կեղծ քրիստոնեական գնոստիկյան աղանդավորության դիմակը և նրանց արտաքսեց եկեղեցուց: Երկրորդ, նա մեծ համարձակությամբ և կորովով պաշտպանեց ընդհանրական եկեղեցու առաքելական և ուղղափառ հավատը, որի դեմ անողոք պայքար էին մղում գնոստիկյանները, հիմքից քանդել փորձելով եկեղեցու դավանական կառույցը: Այնպես որ «Իրենեոսը արժանի է կոչվելու հիմնադիրը քրիստոնեական աստվածաբանության: Նա առաջինը բանաձևեց քրիստոնեական ողջ վարդապետության դավանաբանական եզրերը»:

Իրենեոսի աստվածաբանական, քրիստոսաբանական, ամենասուրբ Երրորդության, ս. Կույսի (մայրաբանության) եկեղեցաբանության, ս. Հաղորդության, Նոր Կտակարանի նրա կանոնի, մարդաբանության և փրկչաբանության նվիրված հարցերով զբաղվողների ուշադրության ենք հանձնում Johannes Quasten-ի արժեքավոր ուսումնասիրությունը[68]:

---

[67] Quasten, նույնը, էջ 290—291:

[68] Նույնը, էջ 294—313:



ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ*

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ

[Քրիստոսի առաքյալների մոտ հոգեձիր շնորհների և գիտության հայտնվելը և նրանց տիեզերաքարոզ վարդապետությունը ըստ մարգարեների կանխատացության]

659. Իսկ երանելի առաքյալները պատգամաբեր փողեր եղան, որպեսզի ամենը լսողներին պատրաստեն սպասելու աստվածային փողի գալստյան, որ ամենքին անխափան խառնեն թռչունների այն գընդին, որից հարություն ազդարարող փողի ձայնը կհնչի, որպեսզի սրանք ևս արժանի լինեն իրենց թևերն ստանալ ու բարձրանալ դեպի վեր և բարձունքների Տիրոջը տեսնել առանց ամոթի: Այն Տիրոջը, որը հեռուներից է ճանաչում և փրկում է նեղության մեջ ընթացողներին, որոնք հանուն արդարության հանձն առան խստակեցության նեղությունները, վասն Աստուծո սիրո:

660. Արդ, սրանք իրենց Տիրոջ կամքը կատարեցին, քանզի սիրել էին միմյանց և նա էլ սիրեց նրանց այնչափ որ իր անձը տվեց բարեկամների համար[461], իսկ նրանք հրաման ստացան սիրել միմյանց, որպեսզի այդպիսով իրենց անձերի մեջ ընդունեն խոստացված շնորհները:

661. Ուստի ծածուկ սրտերի սերը բացահայտորեն ցուցադրեցին միահավան հավաքվելով վերնատանը, ուր սուրբ Հոգին գալով գտավ նրանց և օթևանելով բնակվեց նրանց մեջ, որպեսզի լցնի այն կարոտը, որ Տիրոջ նկատմամբ ունեն, միանգամայն կատարելով նրա խոստացածները: Քանզի նա ասում է, «ես գնում եմ և ձեզ կուղարկեմ մխիթարիչը, որը գալով կմխիթարի ձեր սրտերը. նա, ասում է, ինձ փառավորում է քանզի ինձանից է առնում և պատմելու է ձեզ»[462]: Նա երրորդության միաբանության սերն իրականացնելու է նրանց միաբանությամբ, որոնք տիրոջից առել են հրամանը թե «ելեք ամբողջ աշխարհի մեջ և ուսուցանեք ու մկրտեցեք նրանց հանուն Հոր, Որդու և սուրբ Հոգու և սովորեցրեք ամենքին պահել այն, որի մասին խոսեցի ձեզ և ես ձեզ հետ եմ ձեր կյանքի բոլոր օրերում մինչև աշխարհի վախճանը»[463]:

662. Նա տվեց նրանց երրորդության ճշմարտության, միաբուն տերության, երեքանձնյա զորության գիտությունը, որպեսզի ըստ այն օրինակի ամենքին ուսուցանեն ու մկրտեն հանուն Հոր և Որդու և սուրբ Հոգու:

663. Այլ քանի որ նրանք առել էին սուրբ Հոգու զորությունը ստացան նաև ամենայն ազգերի լեզուների բաժանման գիտակցու-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի № № Դ, Զ—Է-ից և 1979 թվականի № № Բ-ից և Ե-ից:

[461] Հմմտ. Հովհ. ԺԵ, 13:

[462] Հովհ. ԺԶ, 7, 14:

[463] Մատթ. ԻԸ, 19:

թյունը, որպեսզի ի վիճակի լինեն բոլոր երկրների մարդկանց, ամբողջ տիեզերքում, ուսուցանելու Աստվածային հրամանները, Արարչի սերը իր արարածների նկատմամբ, նրա խոնարհվելը մեր բարձրացման համար և անմահության հույսը մեռելների հարությունից հետո: Եվ թե այս մշտնջենականությունը, զորությունը և Որդու Աստվածությունը եկավ մեր փրկության համար, իր վրա վերցրեց մարդկությունը, մանավանդ իր բոլոր արարածների վերանորոգման համար, որպեսզի այս գիտակցությունը տա ամենքին, որոնց մեծամեծ շնորհներ ընծայվել էին:

664. Ապա նրանց միջոցով կատարվեցին մարգարեությունների առաջասաց ընծայությունները, թե «այդ օրերին Հուդայի հազարապետները իրենց սրտերում ասելու են թե՝ եկեք գտնենք Երուսաղեմի բնակիչներին նրանց Տեր ամենակալ Աստուծո մեջ»[464], քանզի նախ այնտեղից իրենց ազգին տվեցին գիտակցությունը և ապա Երուսաղեմից աստվածաբաշխությունը տարածեցին ամբողջ տիեզերքի մեջ:

665. Քանզի ամենայնի Տերը Հուդայի ազգից ծագեց, որի համար էլ սրանք կոչվում են Հուդայի տան հազարապետներ: Այս բանը մեկնեց Պավղոս առաքյալը, առաջ բերեց, լուսաբանեց, ասելով «մենք Աստուծո խորհուրդների հազարապետներ ենք»[465]: Ապա հիրավի ասում է նույն Հոգին առաջագույն մարգարեի բերնով թե «այդ օրը, ասում է Տերը, Հուդայի տան հազարապետներին դնելու եմ իբրև ջահեր ծառերի մեջ վառված և իբրև հրեղեն լապտերներ (ղամբար) եղեգների մեջ: Նրանք ոչնչացնելու են ձեր աջը և ձախը՝ շրջակայքի բոլոր ժողովուրդներին»[466]: Ավելի ստորև նա ասում է թե «Դավթի տան վրա և Երուսաղեմի վրա թափելու եմ շնորհների և գթության ոգին և նրանք ինձ են դառնալու»[467]: Քանզի ինքը սուրբ Հոգին կատարեց այն, առաքված լինելով Հորից և Որդուց: Ինչպես Որդին առաքվեց ու եկավ Հորմով և Հոգով, նույնպես և Հոգին առաքվեց Հորմով և Որդվով, որպեսզի երևա միասնական միաբուն զորությունը:

[Աշխարհի արարչագործության վեցօրյա լինելու և յոթերորդ հանգստյան օրվա մասին խորհրդածություն]

666. Սակայն նա եկավ Երուսաղեմ քաղաքը, միահամուռ գտավ նրանց, լցրեց նրանց սիրտը միակ զորությամբ, որպեսզի կատարվեն նույն Հոգու նախապես ասածները Հովել մարգարեի բերնով «Դրանից հետո վերջին օրերում այնպես է լինելու, ասում է Աստված, որ իմ հոգուց սփռելու եմ բոլոր մարմինների վրա և ձեր որդիներն ու դուստրերը մարգարեանալու են, ձեր երիտասարդները տեսիլք են տեսնելու և ձեր ծերերին երազներ են հայտնվելու. իմ ծառաների ու աղախինների վրա իմ հոգուց եմ սփռելու, որ մարգարեանան, նշաններ եմ տալու երկինքն ի վեր և երկիրն ի վայր՝ արյուն, հուր և ծխի մրրիկ, արեգակը խավար է դառնալու և լուսինն արյուն, մինչև գա Տիրոջ մեծ և երևելի օրը: Այնպես է լինելու որ ով կանչի Տիրոջ անունը ապրելու է»[468]:

667. Իսկ ի՞նչ է այն ասվածը թե՝ «վերջին օրերում». քանզի երբ Աստված ստեղծեց արարածներին սկսեց առաջին օրը և վեցերորդում ամեն ինչ կատարել էր ամենակարող, անջանք, անաշխատ և անդադար զորությամբ ու հանգստացավ իր բոլոր գործերից և յոթերորդ օրը կոչեց հանգիստ[469]:

668. Իսկ երբ Աստվածությունը տեսավ որ մարդը սայթաքել կործանվել, ընկել է պատվիրանապահությունից, քանի որ չէր մնացել առաքինության մեջ, ինչպես նա կամենում էր, այլ ընկել էր պատժի պատուհասի տակ, արդարության դատաստանի առջև, դրսից գրավվել մահվան կողմից, նա վիրավորվեց, խոցվեց, հոգսերի, աղեկոծության, դժվարությունների, ցավերի քրտինքի, անհանգիստ տատանումների երերմունքի մեջ ընկղմվեց: Սակայն [Աստված] ետ չգնաց դեպի իր ասած խոսքը, այսինքն մահը որ նա դրել էր, այլ արարչության ժամանակը [հաշվելով] որը վեցօրյա թվով էր կատարվել, որպեսզի իր մեծությունը հայտնի լինի, նույն ձևով ժամանակի վեց հազար տարի չափեց երկրի դժվարությունների, ցավերի, չարչարանքի, քրտինքի ու տանջանքների համար: Ամեն մի օրվա համար, ըստ առաջին վեց օրերի, մի-մի հազար տարի տվեց որի մեջ տեղի պիտի ունենային ծնունդները, սերունդների բազմացումը և լինելության աճը:

669. Այդ ժամանակ նաև [կարող են ատտահել] լավն ընտրելու փորձությունները (որպեսզի նրանց հատուցման ընտրությունը կատարի) պարգևատու խոստումների

[464] Զաք. ԺԲ, 5:
[465] Ա. Կորնթ. Դ, 1:
[466] Զաք. ԺԲ, 6:
[467] Զաք. ԺԲ, 10:
[468] Հովել Բ, 28—32, Գործք, Բ 17—21:
[469] Հմմտ. Ծննդ. Բ, 2—3:

ակնկալությունները, արդարների ժուժկալությունը նեղությունների մեջ, որոնք բովեր են դժվարությունների տարիների շաբաթի (յոթնօրյակի) մեջ: Ինչպես և մարգարեն գոչեց ամենքին, ազդարարեց և ասաց «հազար տարին Տիրոջ աչքում նման է մի անցնող օրվա»[470]:

670. Քանզի առաջին [դարաշրջանում] սկիզբն էր, իսկ վեցերորդում նորոգումն էր, որը նա իրագործեց իր գալստյամբ և պարգևեց Հոգու էջքը: Նույն հազարում լինելու է վախճանը, որի համար էլ կոչվում է հետինը, երբ նա գալու է դարձյալ, իր հետ բերելով յոթերորդ օրվա ժամանակի խորհուրդը՝ առանց թվի և առանց չափի հանգիստն ու պարգևները: Իսկ քանի որ ինքն իր արարչության յոթերորդ օրը հանգիստ է կոչում, այդ պատճառով յոթերորդ օրը պատվիրում է պահել սուրբ և հաճելի, որպեսզի ամեն ոք ճանաչելով հաճելի օրը Արարչի հանգստով պատվի այն: Նույն ձևով յոթերորդ դարում նա հանգիստ է տալու չարչարվածներին, որոնք աշխատեցին իրենց վեցդարյա ժամանակում: Ինչպես որ իրենց ժամանակին նրա հետ չարչարվեցին նույնպես և նրա հետ պիտի հանգստանան այդ անչափ երկար դարում և նրա հետ ուրախ պիտի լինեն:

[Աստուծո Հոգու շնորհների հեղումը մարդկանց վրա հետին ժամանակներում, ըստ մարգարեների գուշակությանը]

671. Աստուծո Հոգին վեցերորդ [դարաշրջանում] երևաց կատարելու առաջվանից խոստացվածները, որոնք մարգարեների բերնով ասվել էին: Վերջին ժամանակներում սուրբ Հոգու շնորհները թափվեցին, լցվեցին, սփռվեցին ժողովուրդների բազմախուռն բանակի վրա, հոսեցին բազմառատ ջրերի հորդառատ ուժով:

672. Նրանք մարգարեացան ծածուկ խորհուրդներ, հանկարծակի խոսեցին ամենայն լեզուներով և բոլոր ազգերին հնարավորություն տվեցին ամբողջովին վերանալ դեպի արքայություն[471]: Ընդունեցին տեսիլքների հայտնությունները, ամենքին պատմեցին անճառելի խոսքի բաշխումը, հայտնեցին Աստվածորդու մշտնջենավոր հարսանիքի խորհուրդը, այսինքն որդեգրության համար վերանալը և նույն Որդվով ու Հոգով Հոր հետ ուրախ լինելը: Եղան կոչնականներ կոչելու ամենքին մկրտության ավազանին, լվանալու նրանց սատանայական ծխի աղտից, որպեսզի հագնեն լուսեղեն պատմուճանները և մտնեն հարսանիքի ուրախությունների մեջ, ուր Քրիստոս փեսան ուրախ է լինելու հարսի հետ, այսինքն արդար մարմնակիցների հետ, որոնք Քրիստոսի հետ չարչարվեցին և նրա հետ էլ թագավորելու են[472]:

673. Արդ, Հոգու շնորհները հայտնվեցին, հոսեցին ամենքին, որպեսզի բոլորին արժանի դարձնեն Աստվածության նորապարգև, նորատուր, նորաբեր շնորհին: Որդիներին ու դուստրերին, ծերերին ու երիտասարդներին, ծառաներին ու աղախիններին առ հասարակ սուրբ Հոգու շնորհներն ընծայեց, որպեսզի վերացնի խտրականությունը, որ «չլինի խտրականություն ոչ հրեայի ոչ հեթանոսի, ոչ ծառայի ոչ տիրոջ, ոչ տղամարդու և ոչ կնոջ, որ ամենքը Քրիստոսին արժանի լինեն»[473]: Ոչ միայն այսպես, այլև չարագործներին բացեց թողության դռները, որպեսզի մաքսավորները, պոռնիկները և մարդասպան ավազակները և նույնիսկ իրեն խաչահանները լինեն ավետարանիչներ [քարոզելով] իր փրկության քարոզի, թողություն տալու և արքայությունն ամենքին շնորհելու մասին:

674. Ամենքը լցվեցին սուրբ Հոգու զորության հոսանքով, ելան տիեզերքի մեջ, որպեսզի հաղորդեն Աստվածային հրաշքների գիտությունը բազում ազգերի լեզուներին, մատնանշել այն նշանները որ տվել էր վերը երկնքում և ներքևը երկրում, ըստ խոստման թե «պիտի տամ նշաններ վերը երկնքում և ներքևը երկրում»[474]: Երկնավորներին տրված նշանն այն էր որ տեսան Աստուծո Որդուն մարդացած վերը երկնքում և նրա հետ կամարար մարմնակիցներ միասին թագավորելով, միացած ու միախառնված հրեշտակների գնդին:

675. Իսկ ներքևը երկրում [ցուցադրեց] այն նշանը որ մարդիկ երկրի վրա տեսան՝ Աստուծո միակ Որդին խոնարհացած մարդացած և խաչի վրա, որպեսզի հեղի իր արյունը: Ուստի հուր է վառվելու առաքյալների համար և նրանց լեզուների միջով լապտերներ (ղամբար) են գալու, որպեսզի հայեցնեն, այրեն, վերացնեն ամենայն մարդկանց մեղքերը: Քանզի ինքը Աստուծո Որդին դարձավ գառն և մատուցվեց իր Հորը, որպես հաշտության պատարագ (զոհ) խաչի վրա և միանգամայն վերացրեց աշխարհի մեղքերը:

---

470 Սաղմ. ՁԹ, 4:

471 Հմմտ. Գործք, Բ, 2—4:

472 Հմմտ. Բ Տիմ. Բ, 12:

473 Գաղ. Գ, 27—28:

474 Յովէլ, Բ, 30, Գործք, Բ, 19:

676. «Հուր, ասում է, և արյուն և ծխի մրրիկ»[475]: Հուրը սրբացնողն է՝ սուրբ Հոգին որ սրբացրեց իսկ և սրբացնում է ամենքին և նրանք Քրիստոսի արյամբ սրբացվում են: Իսկ ովքեր չեն կամենա սրբանալ, ծառացնելով ծուխը, նրանց համար հայտնության օրինակ է կիզվածի մերկությունը[476]: Քանզի իր արյունը որ նրանց փրկության համար դրեց, նույն արյունը նրանց կորուստը է դարձնելու, որն է արժանիների թագավորությունը: Արեգակը խավար դարձավ և լուսինը արյուն, այն ժամին երբ տեսան Տիրոջը խաչի վրա չարչարված[477]: Այն չէր երևելի օրը, որ գալու է՝ ամենքին դատելու և արդարացնելու օրը, այլ փրկության՝ ամենքին իր շնորհներով արդարացման օրը:

677. Քանզի արեգակն ու լուսինը դարձան քարոզիչներ այդ ժամանակ: Արեգակն իր խավարելով բողոքեց, ցույց տալով ամենքին Տիրոջը խաչի վրա և չկարողանալով տեսնել այդ տեսիլքը խավարեց, քանի որ չէր կարող տեսնել Տիրոջ անարգանքները: Իսկ լուսինը ևս հրաշքներ ցույց տվեց, քանզի հայելու նման ամեն արարածներին ցույց տվեց իր մեջ արյունը, ի վերուստ բարձունքներից, բոլոր երկրների փրկությունը, որոնք իրենց մտքով ընդունելու են այդ արյունը, իբրև իրենց արքայություն: Իսկ ովքեր այն արհամարհեն ու չգան այսպիսի պարգևաբաշխության, լուսինը ցույց է տալու նրանց մշտաբուխ արյունը իրենց մարմիններից, որոնցից բխելու են կորստյան մշտական տանջանքների դժոխային չմեռնող որդերը:

678. Սրա համար ասում է «տալու եմ նշաններ վերևը երկնքում և ներքևը երկրում»[478], Տերն ստորև երկրում խաչի վրա, իսկ լուսավորները բարձունքներում քարոզիչներ են, որոնք ազդարարում են ամենայն տիեզերքին: «Արյուն և հուր և ծխի մրրիկ»[479] երկու բանի է ակնարկվում՝ մեկը կյանքի ավետարանը, մյուսը սպառնալի պատուհասների արհավիրքը: «Արեգակը խավար է դառնալու և լուսինը՝ արյուն, մինչև որ գա Տիրոջ մեծ և երևելի օրը»[480] այսինքն նշանակում է հատուցման գալու օրը, քանզի իրոք մեծ և երևելի օր է:

679. Իսկ քանի դեռ այդ [օրը] չի եկել, ով որ կանչի Տիրոջ անունը կապրի շնորհների մեջ: Քանզի Աստված երկիր իջավ, մարդկանց երկինք բարձրացրեց և հողեղեններին խառնեց հոգեղենների հետ: Միանգամայն նորոգեց ու երիտասարդացրեց արարածներին: Նա բացեց [մկրտության] ավազանի արգանդը, որպեսզի նորոգվեն և մկրտությամբ վերստին ծնվեն, որպես արքայության մանուկներ: Քանզի առաքյալները գործեցին որպես [մկրտության] ավազանի արգանդ, ամբողջ տիեզերքը վերստին ծնեցին ու հասցրին նրանց անմեղ մանկության անհարդախ կաթին, որպեսզի նրանց դարձնեն Աստուծո որդիներ և Քրիստոսի փրկության ժառանգորդներ: Ինչպես և երևելի Պավղոսն ասաց «իմ որդյակներս, որ ձեզմով վերստին երկնում եմ, մինչև որ Քրիստոս նկարվի ձեր մեջ»[481]:

[Առաքյալների հրաշագործ զորությունը լուսավորելու տիեզերքը աստվածային շնորհներով և վարդապետությամբ]

680. Արդ, մանկացրին ամբողջ տիեզերքը, նրա համար, քանզի նրանից էին առել զորությունը՝ Հինավուրցը, որ մանկացավ: Ինչպես աստվածախառն իմաստությունը երգել էր նախապես և ասել «թագավորը դառնալու է մանկության»[482]: Տիեզերքն էլ դարձավ մանկության, քանզի տեսան Տիրոջը մանկացած:

681. Արդ, առաքյալները վերածնեցին ամենայն աշխարհը ջրից և Հոգուց: Նրանք ամեն մեկին համեմեցին (աղեցին) հրով, քանզի հրաման էին ստացել թե «ամեն ոք հրով պետք է աղվի»[483]: Անքակտելիորեն խառնվեցին Աստվածությանը և լուսավորվեցին, զմայլեցրին և լցրին տիեզերքը պարգևներով: Քանզի «ովքեր մի անգամ մկրտվեցին ի Քրիստոս, իրենց վրա վերցրին Քրիստոսի և նրա Հոգին»[484]: Լույսի ակունքից խմեցին շնորհները և նրա աճավոր նշաններով, հրաղեզ զորությամբ նրանք համեմվեցին և ամրապնդվեցին հեթանոսական պղծության մեղքերի նեխությունից դեպի բժշկության առողջություն:

682. Նրանք ցողալից առատությամբ և հոգևոր անձրևով պարարեցին մարդկային սրտերի անապատացյալ մսեղեն երկրները: Եվ դարձրին ընդարձակ ծովի նման խաղաղությունը, հորդագնաց գետի նման՝ փրկությունը, մշտանջենաբուխ աղբյուրների նման՝

[475] Ցովել, Բ, 30:
[476] Հմմտ. Ցովել, Բ, 6:
[477] Հմմտ. Ցովել Բ, 31, Գործք, Բ, 20:
[478] Ցովել, Բ, 30, Գործք, Բ, 19:
[479] Ցովել, Բ, 30, Գործք, Բ, 19:
[480] Ցովել, Բ, 31. Գործք, Բ, 20:
[481] Գաղատ. Դ, 19:
[482] Հմմտ. Սաղմ. ՃԲ, 5:
[483] Մարկ. Թ, 48:
[484] Հմմտ. Գաղատ. Գ, 27:

ողջույնն ու հավատը, ուրախության բաժակի նման՝ Աստվածության սերը, հրի նման՝ մարդկանց սրտերում երկյուղ տնկելը: Ինչպես օրինակ ճարտարագետ դարբինը առնելով երկաթը գցում է հրի բովի մեջ և տաքացնելով հրագույն շողացնում, նույն ձևով և արդարները մխրճվեցին արդարության հնոցի փուքսի մեջ և ներկվեցին շողյունի մեջ և սուրբ Հոգու գույներով: Նրանք հենց Քրիստոսին գլխովին վերցրին իրենց մեջ և Աստվածության սերն իբրև լույս վառեցին իրենց անձերի մեջ: Բարձունքներից զորություն ստացան և իբրև քաջ մշակներ ընթացան բոլոր լեզուները լցնելու աստվածապաշտության սերմերով:

683. Եղան վառված ճրագներ դրված աշտանակի վրա, այսինքն խաչի վրա: Նույնի ճառագայթների զորությամբ նրանք լուսավորեցին տիեզերքը, դուրս մղեցին խավարի մթությունը բոլոր մարդկանցից, որպեսզի նրանց ընտանի դարձնեն աստվածային սիրուն: Սփռվեցին տիեզերքում, որպես ճշմարտության քարոզիչներ, «քանզի չկա հակառակություն կամ խտրականություն, ոչ հրեայի, ոչ հեթանոսի, ոչ ծառայի, ոչ տիրոջ, ոչ տղամարդու, ոչ կնոջ, քանի որ ամենքը մեկ են ի Քրիստոս»[485]:

684. Ծատերը հրեական ազգից, նույնպես և առաքյալները, եղան ճշմարիտ հաստատուն սյուներ և հեթանոսներից շատերը այս նույնի օրինակն իրենց անձերի վրա վերցրին և տարան, նաև բազում ազատներ և բազում ծառաներ: Ազատներն ընթացան ազատությունից դեպի [Աստուծո] թագավորություն, Նրա միջոցով որը լինելով թագավոր նրանց համար խոնարհվել էր բարձրությունից: Իսկ ծառաները ծառայությունից դեպի ազատություն [ընթացան] Նրա միջոցով, որն առավ ծառայի կերպարանք և ամենքին ազատեց խավարի ծառայությունից: Արդ հրեաները, հայրերը և մարգարեները ավանդեցին իրենց ազգին առաջագույն խորհուրդը: Երբ եկավ հասավ ավետյաց (Ավետարանի) խոստումը, այնժամ նրանց մեջ հայտնապես ծագեց արդարության արեգակը, որն ինքը Քրիստոսն է: Իսկ նրանք ում համար հավիտենական կյանքն էր պատրաստված և հավատացին նրան, նրանցից ոմանք եղան աշխարհի քարոզիչներ և առաքյալներ՝ առաջին վկաներ: Հեթանոսներից ոմանք ևս կանգնեցին, հորդեցին, ստվարացրին հավատացյալների գնդերն ու վկաների դասերը և լցրին ամբողջ երկիրը: Ոչ միայն տղամարդկանց այլև սուրբ կանանց միջոցով քարոզվեց կենդանության Ավետարանը ամբողջ աշխարքում, քանզի կանայք ևս օրհնվեցին կույսից ծնունդյան սիրուն, որը նրանցից էր:

685. Արդ, բուն սյուները, առաքյալները, ամոլները (օգնականներ) որոնք ամեն լեզուներով խոսեցին, եղան աշխարհի մեջ, վիճակով վերցրին բաժանեցին բոլոր ազգերին: Նա նրանց առաքեց և տվեց իշխանություն հրաշքներ և զորության արվեստ գործելու, մեռյալներին հարություն տալու, հիվանդներին բժշկելով, ախտաժետներին ողջացնելու, կաղերին քայլեցնելու, կույրերի աչքը բացելու, խուլերի լսողությունը վերադարձնելու, համրերին խոսել տալու, բորոտներին սրբելու և ամեն տեսակ ցավերն ու տանջանքները վերացնելու, մարդկանց թշնամի դևերին փախցնելու, մարդկանց մոլորյալ մեղքերի պահակ սատանային ոտնակոխ անելու, ամենքին աստվածապաշտության ծանոթ դարձնելու, խափանելու մոլորությունները, հաստատելու բոլոր ազգերի հավատը արարչության հրամաններին:

[Քրիստոսի առաքյալների բարձրագույն իշխանությունը, նրանց համբերությունը հակառակորդների հալածանքների ժամանակ, որով ավարեցին բոլոր ազգերին]

686. Արդ, քրիստոսագունդ և խաչակիր առաքյալներից գլխավորներն էին Պետրոս և Անդրեաս, Հակովբոս և Հովհաննես, Փիլիպպոս և Բարթողոմեոս, Թովմաս և Մատթեոս, Հակովբոս և Սիմովն, Թադեոս և Բարսաբաս, Մատաթիաս և Հակովբոս, Մարկոս և Ղուկաս, Պավղոս և Բառնաբաս և այլք ևս, որոնք սրանց նման էին: Նրանք յոթանասուն էին և Տիրոջից իշխանություն ստացան գնալ իժի և քարքի դեմ[486] և կոխոտել թշնամու զորությունը[487], երկրի լույսը լինել և համեմել, աղել մարդկային անգիտության, չարության անկարությունը, սուրբ Հոգու աստվածային աղով: Իբրև քաջ ախոյաններ, պատերազմասեր նահատակներ իրենց անձերը առաքինության պաշտպանության համար նետեցին: Նրանք չարչարանքի նեղություններ կրեցին, որպեսզի իրենց վաստակների միջոցով, ոչ ձրի այլ վարձքի դիմաց, բռնության նկատմամբ համբերությամբ, իրենց անձերի համար ստանան Աստուծո արքայությունը, պատերազմի մարտերով: Լինելով քաջ նահատակներ, իրենց անձերի վրա վերցրին հավատը և սերը իբրև ամրության զրահ, որի

485 Գաղատ. Գ, 28:

486 Հմմտ. Սաղմ. Ղ, 13. Ղուկ. Ժ, 19:

487 Հմմտ. Մատթ. Ե, 13—14:

վրա չեն կարող ներգործել թշնամու բանսարկության հենգ հետերը, և փրկության հույսն իբրև անվթար սաղավարտ դնելով դիմեցին ամբողջ աշխարհը և ավարեցին բոլոր ազգերին: Նաև համբերության տրված օրինակներ ստացան և այլոց ևս տվեցին թղթերով (նամակներով): Իրենց նախորդների վարքը իբրև գաղափար վերցրին, թե «օրինակ վերցրեք, եղբայրներ, մարգարեների երկայնամտությունը, որոնք խոսեցին հանուն Աստուծո» և թե «Հովքի համբերությունը լսեցիք և Տիրոջ վախճանը տեսաք»[488]:

687. Քանզի Տերն ուսուցանեց նրանց նույն համբերությունը, թե «երանի ձեզ, երբ նախատեն, հալածեն ու սպանեն ձեզ ինձ համար, ցնծացեք և ուրախ եղեք, քանզի ձեր վարձքը մեծ է լինելու երկնքում»[489], և ինքը տվեց օրինակ, թե «այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզանից առաջ էին»[490] և թե «դուք եք երկրի աղը և աշխարհի լույսը»: Նա ինքն իրեն օրինակ բերեց, որ ինքն իր մեջ կատարել է ամեն ինչ, որպես և նրանք այլոց ցույց տվեցին թե «հենց Տիրոջը անձամբ տեսանք»[491]:

[Առաքյալների սփռվելն ամեն ազգերի մեջ ավետարանելու կենաց խոսքը]

688. Ապա սփռվելով ամեն ազգերի մեջ տարածելու աստվածային գիտակցությունը, ամենքին ծանոթ էին դարձնում Աստվածությանը, ինչպես մարգարեն նախապես երգել էր, առաջվանից գիտենալով նրանց մասին սուրբ Հոգու գուշակությամբ, թե «լսեցեք այս, ամենայն ազգեր և ունկնդիր եղեք ամենքդ, որ բնակվում եք աշխարհում, երկրի ծնունդներ և մարդկանց որդիք, բոլորը՝ մեծամեծներ ու տնանկներ»[492]: Այսպես սփռված էին տիեզերքում և բաժանված ամեն լեզուների, որոնց վկայեցին ամեն կողմից եկած հրեաները, թե «մենք բոլորս լսում ենք մեր լեզվով»[493], որոնք տեսել էին առաքյալներին մի վայրում հավաքված, նախքան սփռվելը ամբողջ աշխարհում:

689. Արդ, ոմանք իրենց հրեական կողմն առնելով այնտեղ վարդապետեցին, իսկ ուրիշներ սփռվեցին ամբողջ տիեզերքում՝ ոմանք Մարաստան և ոմանք Պարթևաստան, ոմանք Խուժաստան և ոմանք Միջագետք, մեկը Գամրաց կողմերը, մեկը Պոնտոս, մեկն Ասիա, մեկը Փռիգիա, մեկը Պանֆիլիա, մեկը Եգիպտոս, մեկը Հնդկաց աշխարհ, մեկը Լիբեացոց կողմը, մեկը Կիրենացոց կողմը, մեկը Դաղմատացոց կողմը, մեկը Սպանիացոց կողմը, մեկը Ազովտա կողմը, մեկը Թրակա կողմը, մեկը Լակոնիա, մեկը Կապադովկիա և մեկը Բիթանիա: Ոչ ոք կարող է թվել, հաշվել, այլ «նրանց ձայները ելան ամբողջ երկրում և նրանց խոսքերը մինչև աշխարհի ծագերը»[494]:

690. Այսպես քարոզեցին տիեզերքում «լուսավորելու բոլոր մարդկանց, որոնք գալու էին աշխարհ»[495] ամենքին տալու փրկության ապաշխարությունը, ամենքին լվանալու, արձակելու խավարի կապանքներից՝ մկրտությամբ և ամենայն ազգերին դրոշմել որպես Քրիստոսի գունդը, Աստուծո Հոգին բնակեցնել մարդկանց սրտերում, միաբանել խառնել Աստվածորդու սիրուն, որպեսզի ամենքի սիրտը մեկ ձայնով աղաղակի և ամբողջ աշխարհը միաբանի ասելու «Աբբա հայր»[496]: Որպեսզի վերանա ծառայության անունը և որդեգրության անունը դրվի, Քրիստոսի շնորհիվ [ի վիճակի դառնան] ուտելու Աստվածորդու մարմինը և ըմպել կենդանարար արյունը, որ նրանով մտնեն ամբողջ աշխարհը, որպես Քրիստոսի ժառանգություն, Աստուծո ժառանգորդը լինել և Քրիստոսի ժառանգակից:

691. Այսպես զորացրեց նրանց իր կամքի խորհուրդներով, իրենց հույսով Քրիստոսի նկատմամբ: Դուք ևս լսեցեք նրանց և հավատացեք ձեր փրկության Ավետարանի ճշմարտությանը, նրանց հավատացեք և մկրտվեցեք սուրբ Ավետարանի Հոգու մեջ, որն ինքն է մեր ժառանգության գրավականը, փրկության հնազանդության և նրա փառքի գովեստի համար:

692. Նրանք ընթացան ամբողջ տիեզերքի մեջ, մինչև երկրի ծագերը, լրացնելու կենաց խոսքի քարոզությունը: Հրեշտակների զորքը, հոգեղեններն ու հրեղենները հավաքվել էին առաքյալների միաբանության, քանզի նրանց ընկեր էին թե ճանապարհների թե բանտամուտ կապանքների մեջ, ուստի և Աստուծո շնորհիվ առաքյալներին ազատեցին: Նրանք առաջնորդվում էին սուրբ Հոգու հրամաններով ամեն մի քաղաքում, ամեն մի երկրում Քրիստոսի

[488] Յակ. Ե, 10—11:
[489] Մատթ. Ե, 11—12:
[490] Մատթ. Ե, 13, 14:
[491] Հմմտ. Ա, Յովհ. Ա, 1—2:
[492] Սաղմ. ԽԸ, 2—3:
[493] Գործք, Բ, 8:
[494] Հռովմ. Ժ, 19. Հմմտ. ԺԸ, 5:
[495] Յովհ. Ա, 9:
[496] Հռովմ. Ը, 15:

հավատը համայն աշխարհին ծանոթացնելու: Մենք ևս որ սակավավորներ ենք առավելագույնների ճշմարտությունը պիտի տանենք, սուրբ Հոգու ինքնահրաման առաջնորդության միջոցով:

693. Այսպես նա հրաման տվեց ուսուցանել ամենայն ազգերին: Առաքեց նրանց աշխարհի մեջ հրավիրելու բոլոր հեթանոսներին հավատի հնազանդության, առանց տատանման քարոզելու Ավետարանը, սուրբ Հոգու առաջնորդությամբ: Նրանք համարձակորեն քարոզում էին Աստուծո արքայությունը և ուսուցանում էին Հիսուս Քրիստոսի մասին անկաշկանդ և անխափան ամենայն համարձակությամբ:

[Առաքյալների քարոզության արվեստը բարբարոսական կողմերում]

694. Դրանից հետո քրիստոսագունդ առաքյալները սուրբ Հոգու շնորհներով երկնքի տակ գտնվող բոլոր կողմերում առաջանալով ամեն տեսակ նշաններով ու հրաշքներով և շնորհագործ զորությամբ, ամեն մի երկրում ազդարարեցին, կենաց խոսքը հնչեցրին, բոլորին քրիստոսածանոթ դարձրին և հարության հույսը ներշնչեցին: Քանզի նրանց շնորհազարդ խոսքերով և գործերով սուրբ Հոգու հրամանով սահմանադրված ամեն մի որոշում հայտնի դարձավ: Այս բանը Պավղոսն ընդգծել էր, թե «Երուսաղեմից մինչև Լիրիկիա (Իլլիրիա) ինձ վիճակվել էր լիացնել Քրիստոսի Ավետարանը»[497]: Դարձյալ թե «այն որ Պետրոսը [հաջողեց] կարգել թլփատության (թլփատվածների) համար, զորացրեց ինձ հեթանոսների [քարոզության] համար[498]:

695. Այսպիսով աստվածադիր ժամանակը մատչելի էր ամեն մեկին հասնելու քրիստոսատուր փրկությանը, ինչպես և Պավղոսը պատասխանել է Աթենացիներին թե «Աստված անտես էր առել անգիտության ժամանակները, սակայն, արդ այս է պատվիրում մարդկանց՝ ամեն ոք պետք է ապաշխարի»[499]: Նույն ձևով նշել է նաև Պետրոսն իր կաթողիկեական (ընդհանրական) թղթում թե «բավական է ինչքան անցյալում հեթանոսների կամքն է կատարվել, այսուհետև նրանք պետք է ապրեն ըստ Աստուծո կամքի»[500]:

696. Բայց ոչ անմիջապես և հանկարծակի, ըստ Հոգու զորության, նրանք նորընծաներին անընտել մեծամեծ [գործերի] մղեցին, այլ նախ թեթևագույն ձևով, ըստ աշխարհային կարգերի առակաբանեցին և արվեստախոսեցին: Սրա համար և Պավղոսը հայտնեց թե «ձեզ կաթով ջամբեցի ի Քրիստոս և ոչ հաստատուն կերակուրով, քանզի ի վիճակի չէիք այն տանելու»[501]: Ինչպես նախապես ևս ամենիմաստն Աստուծո կարգած մովսիսական օրենքներով, նախ զոհերով, շաբաթով և տոնահրաման կարգերով [էին գործում], որից հետո նրանց այս բոլորից հրաժարեցնելով լավագույնը ցույց տվեց հայտնվող մարգարեների ձեռքով, որոնց միջոցով ասում է թե «հագեցած եմ, արդ զոհերով»[502] և թե «ոչ քո զոհերի (պատարագ) համար եմ քեզ կշտամբում»[503] այլ «Աստուծո մատուցիր օրհնության պատարագը»[504] և թե «ինչ է քեզանից խնդրում Տերը, ով մարդ, եթե ոչ իրավունք և արդարություն գործադրել և պատրաստ լինել երթալու Տիրոջ ետևից»[505]:

697. Նույն կանոնը նաև առաքյալների կողմից հարգվեց, քանզի միակ Աստուծո օրենքը և օրենքի մեկնիչները ճանաչված էին որպես առաջին և երկրորդ: Այս բանը Տերը հայտնեց ասելով, թե «այս բանում ճշմարիտ է այն խոսքը, թե այլ է սերմանողը և այլ է նա որ հնձում է. ես ձեզ առաքեցի հնձելու այն որ դուք չեք վաստակել, ուրիշներն են աշխատել և դուք նրանց վաստակի մեջ եք մտել, քանզի ով սերմանում է և ով հնձում միասին պետք է ցընծան»[506]:

698. Նրանք քարոզության արվեստի մեջ լավատեղյակ էին ամենափրկիչ Քրիստոսից [սովորելով], որն «սկսեց գործել և ուսուցանել»[507]»: Քանզի և ինքը Քրիստոս ոչ անմիջապես սկսեց քարոզել բարձրագույնը և անհասանելին, այլ նախ խոնարհագույն և առակախոս ոճով և ախտահալած բժշկությամբ նրանց տեղեկացրեց և իմաստնացրեց: Նրանց ասում էր «թե երկրավորի մասին ասացի ձեզ և չհավատացիք, ինչպե՞ս կհավատաք եթե երկնավորի մասին ասեմ»[508]: Ապա, դրանից հետո, որպես կատարյալների համարձակագույն և բարձրագույն ձևով սկսեց ճշմարտությունը վար-

[497] Հռովմ. ԺԵ, 19:
[498] Գաղատ. Բ, 7—8:
[499] Գործք, ԺԷ, 30:
[500] Ա. Պետր. Դ, 2—3:
[501] Ա. Կորնթ. Գ, 2:
[502] Ես. Ա, 11:
[503] Սաղմ. ԽԹ, 8:
[504] Սաղմ. ԽԹ, 14:
[505] Միք. Զ, 8:
[506] Յովհ. Դ, 37—38:
[507] Գործք Ա, 1:
[508] Յովհ. Գ, 12:

դապետել. նույն կանոնով էլ առաքյալները գործում էին բարբարոսական կողմերում:

[Ավետարանական քարոզության գրավոր ավանդությունը սուրբ Հոգու ներշնչմամբ]

699. Հուսի սինոդական (սինոդոսական) հրամանով առաքյալները նորահավատ հեթանոսներին թեթևագույնն ավանդեցին և նախ որոշեցին նրանց հեռու պահել կուռքերի կերակուրից, պոռնկությունից, սեռելոտի ուտելուց և արյունից: Սակայն երբ արդեն ամենքին առաջադրեցին, ապա սուրբ Հոգով վկայեցին հրեաներին ու հեթանոսներին Տեր Հիսուս Քրիստոսի նկատմամբ հուսալի հավատի մասին: Ինչպես Պետրոսը նախապես հրեաներին ասել էր թե «մենք ենք նրա վկաները և սուրբ Հոգին որ Աստված տվեց իրեն հնազանդողներին»[509]: Իսկ Պավղոսը անավոր զգուշությամբ Մելիտոսում համաշունչ ժողովի առջև հիշեցրեց ավանդության հրամանները և ուխտեց թե «չվախեցա օգտակար բաների մասին հրապարակավ և առտնին վկայություն տալ հրեաներին և հեթանոսներին առ Աստված ապաշխարության և ի Տեր մեր Հիսուս Քրիստոս հավատի մասին»[510]: Որը վճռեց թե «այս օրը ձեզ վկայություն կտամ, ասում է, թե անպարտ եմ ամենքի արյունից, քանզի չխորշեցի ձեզ պատմել Աստուծո ամբողջ կամքը»[511]: Այնուհետև եկան երանության և հասան սուրբ Հոգու խորհուրդներին, հիշատակելու աստվածախոս և աստվածապատում, աստվածապարգև վարդապետությունը Միածնի, որպեսզի գրով կարգեն հաստատեն երկնքի ներքո ամենայն ազգերի և գալիք ժամանակների համար «լուսավորելու բոլոր մարդկանց, որ գալու են աշխարհ»[512]: Մանավանդ շարժվելով Հոգու ազդեցությամբ հաջողեցին այս առաջադրանքի մեջ: Ահա այս էր որ ամենայնի Փրկիչը իր ուսմունքի մեջ ընդգծեց սուրբ աշակերտներին ասելով թե «ևս բազում բաներ ունեմ ձեզ ասելու, սակայն դուք չեք կարող այժմ կրել այն, երբ ճշմարտության Հոգին գա, ձեզ առաջնորդելու է ամենայն ճշմարտությամբ»[513]:

700. Ակնարկեց նաև իր կենդանատու Ավետարանին թե «ամբողջ աշխարհում արքայության Ավետարանը պիտի քարոզվի, որպես վկայություն բոլոր հեթանոսներին և ապա գալու է [աշխարհի] վախճանը»[514]: Քանզի առաքյալներն իսկ, այդ ճշմարտության վկաները, առնելով սուրբ Ավետարանից և մարգարեական գրքերից ծաղկեցրին հոգեպատում և առաքելախոս թղթեր (նամակներ), որպեսզի աշակերտյալների համար լինեն մշտնջենակարգ կանոններ, մանավանդ մտահոգված լինելով եկեղեցիների կատարելությամբ, նրանք շատ բան ավելացրին բանավոր: Ինչպես և Պավղոսը հայտնապես ասում է «իմաստությունը խոսում ենք կատարյալների հետ, բայց ոչ այս աշխարհի իմաստությունը և ոչ էլ այս աշխարհիս իշխանների՝ որ ոչնչություն է: Այլ խոսում ենք Աստուծո իմաստությունը ծածուկ խորհրդով, որը նախ քան [աշխարհի] հավիտենականությունը Աստված սահմանել է մեր փառքի համար և որը ոչ ոք այս աշխարհի իշխաններից չճանաչեց: Քանզի եթե ճանաչած լինեին խաչ չէին հանի փառքի Տիրոջը»[515]: Նրանք իմաստությամբ լուսավորյալ և զարդարյալ էին ասելով թե «մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին որն Աստուծուց է և նրանով ճանաչեցինք այն որ Աստծուց շնորհվեց մեզ»[516]:

701. Արդ հոգելից և հոգեմուխ աստվածատեսները առնելով աստվածատուր ավետիսները, գրով հաստատեցին և չորս Ավետարանների մեկ ավանդությունը որոշեցին: Ոչ թե արվեստախոսելով օտար տարրեր են մտցրել, այլ Աստուծո ամենագետ Հոգով պատմել են Քրիստոսի հրամանների միակ ճշմարտությունը, որը կարելի է տեսնել թե նախապես ասված է մարգարեների մոտ: Քանզի այն ինչ մեծն Մովսեսը նախապես Հոգու շնորհիվ առակախոսել էր, որպես գալիք, ապա նույնը հոգեպատում խոսքերով կրկնեցին հետո եկող մարգարեները, որոնց միջոցով երևվաց ամենապարգև Հոգու զորությունը:

[Առաքյալների միասնական սուրբ երրորդությունը և Քրիստոսի աստվածությունը ճանաչելը Աստուծո Հոգու հայտնությունից]

702. Այնուհետև ելնելով Հոգու թևերի վրա քրիստոսասեր ավետարանագիր այրերը անցան երկնքի միջով և բարձրացան երկնքի խորանների վրա: Այնտեղ վերևում, աստվածային աթոռի մոտ նրանք սուրբ Հոգուց տեղեկացան Աստուծո խորություններին և ճանաչեցին միածին որդուն իր Հոր ծոցում իսկ նա ճշմարտագույն ձևով հաս-

[509] Գործք Ե, 32:
[510] Գործք Ի, 20—21:
[511] Գործք ի, 26—27:
[512] Յովհ. Ա, 9:
[513] Յովհ. ԺԶ, 12—13:
[514] Մատթ. ԻԴ, 14:
[515] Ա. Կորնթ. Բ, 6—12:
[516] Ա. Կորնթ. Բ, 6—12:

տատեց նրանց իր մասին գիտելիքները, ինչպես Հայրը գիտի իր Միածնին: Նրանով լուսավորվեցին և սկսեցին պատմել անպատումը թե «ի սկզբանե էր Խոսքը և Խոսքն էր Աստուծո մոտ և Աստված էր Խոսքը: Նա ի սկզբանե Աստուծո մոտ էր, ամեն ինչ նրանով եղավ և առանց նրան ոչինչ չեղավ»[517]: Տեսնո՞ւմ ես նա ոչինչ չգեղջեց աստվածագետ իմաստությունից, այլ միանգամայն ամբողջությունը բերում է ասելով թե «Նա էր ի սկզբանե և Աստուծո մոտ էր և Աստված էր և ամեն ինչ նրանով եղավ»: Այժմ արդեն ծանոթ դարձավ Որդու էական անձնավորությունը և միաբուն աստվածակից պատիվը և նրա ամենակարող զորությունը:

703. Քանզի ամենատերն Քրիստոս նախապես իր սիրելի աշակերտներին աստվածագետներ պատրաստեց բյուրապատիկ հրաշքներով, որ նրանք երեք անձերի գեղեցկությանը, կերպարանքին և միասնական բնությանը մերձավոր ու ծանոթ լինեն: Քանզի ոչ թե իրենց կարճահաս իմաստությամբ էին հասնելու Աստուծո չքնաղ գիտակցությանը, այլ ինքը մարդասերն Աստված [այդ բանը] հայտնեց երկնքից, թե «դա է իմ սիրելի որդին նրան լսեցեք»[518]: Նրան վկայեց Պետրոսն իր կաթողիկե [թղթում] թե «ոչ թե պաճուճյալ առասպելների ետևից գնացինք ձեզ ցույց տալով մեր տիրոջ Հիսուս Քրիստոսի զորությունն ու գալուստը, այլ ինքներս նրա մեծության ականատես էինք եղել: Քանզի երբ Աստծուց ու Հորից առավ փառք ու պատիվ, այսպիսի ձայն հասավ մեծավայելուչ փառքից «դա է իմ սիրելի որդին, որին հաճեցել եմ» և այս ձայնը մենք ինքներս լսեցինք որ գալիս էր երկնքից, մենք որ նրա հետ էինք սուրբ լեռան վրա»[519]:

704. Նույնպես և Որդին գալով ծանուցեց Հոր մեծությունը թե «եկա ոչ իմ կամքը կատարելու, այլ նրա կամքը, որն առաքեց ինձ»[520]: Իր վարդապետելու ընթացքին առատ նշաններով բարձրացրեց Հոր փառքը և ցույց տվեց նրա միասնական կամքը, թե «խոսքերը որ ձեզ եմ ասում ոչ թե իմ կողմից եմ ասում, այլ Հայրը որ իմ մեջ բնակված է, նա է անում այդ գործերը»[521]: Նույնպես և սուրբ Հոգու մասին ասում է թե «ճշմարտության Հոգին պիտի առաջնորդի ձեզ ամենայն ճշմարտությամբ, քանզի ոչ թե իր կողմից է խոսելու, այլ ինչ որ լսի խոսելու է և պատմելու ձեզ գալիքը: Նա ինձ փառավորելու է, քանզի ինձանից է առնելու և պատմելու ձեզ. ամեն ինչ որ իմ Հայրն ունի իմն է, դրա համար էլ ասացի թե ինձանից է առնելու և պատմելու ձեզ»[522]:

705. Տես միաբանությունը, միակամությունը միակ ճշմարտության և տես ինչպես լուսավորեց, հավաստի ցույց տվեց երեք անձերի գոյությունը ասելով «ոչ թե իր կողմից է խոսելու սուրբ Հոգին, քանզի ինձանից է առնելու և պատմելու ձեզ. ամեն ինչ որ Հայրն ունի իմն է»[523]: Տես Հայրը կատարյալ է, Որդին՝ ճշմարիտ և Հոգին՝ հավաստի: Նա նշանակեց նաև անտեսանելի և միաբուն աստվածային զորության էությունը ասելով թե «ելա Հորից և եկա աշխարհ»[524]: Նույնպես և ճշմարիտ Հոգու մասին թե «ճշմարտության Հոգին որը ելնում է Հորից»[525]:

706. Նա վճիռ է տալիս նաև միասնական երրորդության միավորության մասին, ասելով թե «Աստված Հոգի է»[526]: Նա ցույց է տալիս նաև իր և ճշմարիտ Հոգու անքակտելիությունը Հորից, քանզի թեպետ և առաքյալները այսպես կոչվեցին առաքիչ Հորից, սակայն նրա հետ միաբուն են և առանց անջատվելու կատարեցին միասնական գործը, ասելով թե «ոչ ոք չելավ երկինք, բացի նրանից որն իջավ երկնքից՝ մարդու որդին որ երկնքում է»[527]: Տեսնո՞ւմ ես որ երկիր է իջել և երկնքում է: Նրա մասին նաև Հովհաննես ավետարանիչը վկայեց թե «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բայց միածին Որդին որ Հոր ծոցից է նա պատմեց»[528]: Արդ, նկատիր ինչ է ասում, թե «նա որ Հոր ծոցից է՝ նա պատմեց», քանզի նրան ում իրենց մոտ տեսնում էին գիտեին որ նույնը Հոր ծոցում է: Ո՞վ զարմանալիորեն պարգևյալներ և աստվածագիտություն ժառանգողներ, ինչպիսի մեծավայելչության են այժմ հասել:

[Առաքյալների համաձայնությունը վարդապետության հարցերում ձգտելու սուրբ Հոգու շնորհների պարգևներին]

707. Նույնպես և ճշմարիտ Հոգու մասին պետք է ասված համարել այն թե «ճշմար-

[517] Յովհ. Ա, 1—2:
[518] Մարկ. Թ, 6:
[519] Բ Պետր. Ա, 16—18:
[520] Յովհ. Զ, 38:
[521] Յովհ. ԺԴ, 10:
[522] Յովհ. ԺԶ, 13—15:
[523] Յովհ. ԺԶ, 13—15:
[524] Յովհ. ԺԶ, 28:
[525] Յովհ. ԺԵ, 26:
[526] Յովհ. Դ, 24:
[527] Յովհ. Գ, 13:
[528] Յովհ. Ա, 18:

ության Հոգին որ Հորից է ելնում»[529]: Ելնում է թեև չի բաժանվում, բխում է և չի սպառվում: Եվ սիանգամայն իսկ նա խոսում է ճշմարտագույնի, միանմանի, միակը[ն]ի մասին, ասելով թե «ես Հոր մեջ եմ և Հայրն իմ մեջ, ով ինձ տեսավ, տեսավ իմ Հորը»[530]: Սակայն չկան ինչ որ սահմաններ որ շրջափակում են Աստվածությունը Ի կամ [թող չթվա] թե Հայրը երկնքում է, իսկ միածին Որդին ու ճշմարիտ Հոգին երկրում են, քանզի ամեն ինչ նրանով լի է, նա է ամեն ինչի մեջ և ամեն ինչից վեր:

708. Այս ամենի վերաբերյալ նա աստվածախոսեց և վարդապետեց իր աշակերտներին ու հրավիրեց սուրբ Հոգու առաջնորդությանը: Նրանց ասում էր թե «ես բազում բաներ ունեմ ասելու ձեզ, սակայն այժմ չեք կարող տանել, բայց երբ ճշմարտության Հոգին գա պիտի հիշեցնի ամեն այն, ճշմարտությամբ պիտի առաջնորդի ձեզ»[531]: Այս մասին Պետրոսն էլ նշեց երբ առավ սուրբ Հոգին, ասելով «հիշեցեք Տիրոջ խոսքը, որ ասում էր, թե Հովհաննեսը ջրով մկրտեց, բայց դուք պիտի մկրտվեք սուրբ Հոգով»[532]: [Այս բոլորը] ոչ միայն նրանց ասաց այլև այնպիսիներին որ նրանց միջոցով մոտենալու էին Աստուծո:

709. Ինչպես որ երանելի Ղուկասն իր Ավետարանի սկզբում հայտնում է «շատերը նպատակ ունեցան վերստին կարգի դնելու մեր հաստատ իմացած բաների պատմությունը, ինչպես ավանդեցին մեզ սկզբից ականատես և Խոսքին սպասավոր եղողները»[533] որոնցից [վերցնելով] նա կարգեց Տիրոջ Ավետարանը: Պավղոսին ևս սքանչելագույն և անավորագույն ներշնչմամբ երևաց, որի համար ինքն էլ զարմացած պատմում է ասելով «արդյոք մարմնով թե առանց մարմնի չգիտեմ, բայց գիտեմ որ համբարձվել էր երկնքի երրորդ մասը և դրախտը և լսեց անճառելի խոսքեր»[534]: Որի մասին ասում է թե «ես ոչ մարդուց առա և ոչ սովորեցի որևէ մեկից, այլ Հիսուս Քրիստոսի հայտնությունից»[535]: Նա ևս պարծենում է թե ականատես է եղել «Տեր Հիսուս Քրիստոսին իմ աչքերով տեսա»[536]:

710. Բայց թեպետ և այսպես բարձրապատիվ և պայծառանշան առաքվեց Քրիստոսից, նա հնազանդություն է հայտնում տասներկուսին, գրելով Կորնթացիներին «քանզի ես նախ այն ձեզ ավանդեցի, որը ես ևս ստացել էի»[537]: Նույնպես և Եբրայեցիներին [թղթում] թե «մենք ինչպե՞ս կազատվենք, եթե անտեսում ենք այնպիսի փրկությունը, որն սկիզբ առավ ասված լինելով Տիրոջ կողմից և մեզ համար հաստատվեց նրանց կողմից, որոնք լսել էին»[538]: Սրանով հայտնի է որ մեկ զորության շնորհներն ամենքին լուսավորեցին և նրանք ներշնչվեցին մեկ ճշմարտության վկայության համար: Քանզի Պավղոսն ասում է «մենք ամենքս մի հոգի ենք խմել»[539]: Այսպիսով բարձրապատում և երկնամերձ ձայնով սկսեցին հոչակել միածնի փառքի իսկական պատիվը, նախապես ասված մարգարեական խոսքերով հանդերձ, որը և ասաց աստվածապատումը թե «ի սկզբանե էր Խոսքը և Աստուծո մոտ էր և Աստված էր և ամեն ինչ նրանով եղավ»[540]: Ասում է նաև Ղուկասն առաքյալների մասին թե «ի սկզբանե Խոսքին ականատես և սպասավոր եղան»[541]: Դարձյալ նույնը Հովհաննեսն է ասում իր կաթողիկե [թղթում] թե «Նա որ ի սկզբանե էր, որի մասին լսեցինք, որին նայեցինք և մեր ձեռքերը շոշափեցին կենաց Խոսքը»[542]:

711. «Եվ Աստուծո մոտ էր, ասում է, Խոսքը»: Այս ասելով նա վկայեց Տիրոջ խոսքը թե «հայր տուր փառքը, որ ես ունեի քեզ հետ, նախքան աշխարհի լինելը»[543]: Նույնը բերում է նաև Պավղոսը թե «հափշտակություն չհամարեց Աստուծո հավասար լինելը»[544]: Նույնպես և Հովհաննեսն իր առաքելական [թղթում] թե «նա որ Հոր մոտ էր և մեզ երևաց»[545]: «Եվ Աստված էր, ասում է, Խոսքը» ինչպես Քրիստոս ևս ասաց, թե «ինչ որ Հայրն ունի ես ևս ունեմ»[546]: Դարձյալ Հովհաննեսն իր թղթում ասում է թե «նա է ճշմարիտ Աստվածը»[547]: Նույնպես և Պավղոսը թե «մեծ Աստուծո փառքի և մեր փրկիչ Հիսուս Քրիս-

---

529 Յովհ. ԺԵ, 26:
530 Յովհ. ԺԴ, 9—11:
531 Յովհ. ԺԶ, 12—13:
532 Գործք, ԺԱ, 16:
533 Ղուկ. Ա, 1—2:
534 Բ Կորնթ. ԺԲ, 3—4:
535 Գաղատ. Ա, 12:
536 Ա Կորնթ. Թ 1:
537 Ա Կորնթ. ԺԱ, 23:
538 Եբր. Բ, 3:
539 Ա Կորնթ. ԺԲ, 13:
540 Յովհ. Ա, 1—2:
541 Հմմտ. Ղուկ. Ա, 2:
542 Ա Յովհ. Ա, 1:
543 Յովհ. ԺԷ, 24:
544 Փիլիպ. Բ, 6:
545 Ա Յովհ. Ա, 2:
546 Յովհ. ԺԶ, 15:
547 Ա Յովհ. Ե, 20:

տոսի երևալու ժամանակ, որն իր անձը զոհեց մեզ համար»[548]:

712. Արդ, միաբանությամբ և մեր իսկ ինքնահոժար կամքով «հասանենք Աստուծո Որդու հավատին և գիտությանը, կատարյալ մարդ [դառնալու] և Քրիստոսի կատարելության հասակի չափն [ունենալու]»[549]: Քանզի Քրիստոս իր վարդապետությունը տվեց բազմաց ունկնդրության համար և այդ հրամանով երկրի ամենայն ազգերին հրավիրեց ճշմարիտ վարդապետությանը, ասելով, ելեք ամենայն հեթանոսների մոտ, ուսուցանեցեք ու մկրտեցեք նրանց Հոր, Որդու և սուրբ Հոգու անունով»[550]:

713. Ծատերի ընկատմամբ հատուկ հոգատարությամբ նա կամեցավ իր փառավոր գալուստը տեսանելի դարձնել, թե ինչպես գալու երևալու է երկայնամիտ համբերողներին և հուսալից սպասողներին: Այսպես պետք է հասկանալ Քրիստոսի առաջին գալուստը և աստվածային Հոգու իջնելը Պենտեկոստեի տոնի տասներորդ օրը: Քանզի օթևաններ պետք չէին Աստուծո միածին Որդուն երկնքի բարձունքները ելնելու և կամ սուրբ Հոգուն իջնելու առաքյալների ժողովին, որով երկինքն ու երկիրը լցված են: Սակայն մարդասերն Աստված այնպես կամեցավ որ առաքյալների տասն օր սպասելուց հետո վերնատուն կանչի պարգևաբեր Հոգուն, ամենքի մխիթարիչին: Ամենուրեք մարդկանց առիթներ էր ստեղծում իր բարեգործությունը ցույց տալու, որպեսզի ի վերուստ ընծայված այս փոքր առիթներով, նա անչափ բարիքների պատրաստական հատուցողը դառնա: Եվ ինչն արդարև առավել անչափելի ու անհասանելի է լինելու քան այն երբ երկնքից ծագելով Հոր փառքով գա և բոլոր գունդագունդ հրեշտակների առջև իր սիրելիների ձեռքից բռնելով իր մոտ տանի և իր աստվածային բնակության մեջ նրանց վայելել տա հավիտենական կյանքը:

714. Քանզի անկարոտն Աստված հաստատել է իր արքայությունը սիրեցյալների համար, որպես դրախտի մասեր, մի սքանչելի բնակարան Աստուծո մոտ, նրանց վայելքի համար, այնտեղ իր մոտ տեղավորելու և հաստատելու բոլոր արժանավոր բանական արարածներին՝ հոգեղեններին և մարմնականներին: Որի համար ամենափրկիչը ավետիսը (Ավետարան) տվեց աշակերտներին և քաջալերեց թե «ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ եղեք և ամենայն ժամ իմ փառքն էք տեսնելու»[551]: Բայց մյուս առավել բարձրագույն ասացվածքը «այն օրը դուք կճանաչեք, ասում է, թե ես Հոր մեջ եմ, դուք իմ մեջ և ես ձեր մեջ»[552]: Սույն առթիվ առավել պատեհ է հիշել այն ասացվածքը թե «ինչ որ աչքը չտեսավ, ականջը չլսեց և մարդու սիրտը չընկավ, Աստված պատրաստել է իր սիրելիների համար»[553], և երանելի Պավղոսի խոսքերը թե «շնորհակալություն Քրիստոսին նրա անպատում պարգևների համար»[554]:

715. Վերջացավ սուրբ Գրիգորի վարդապետությունը, որն Աստված նրան շնորհեց լուսավորելու մեր Հայաստան աշխարհի խավարյալ սրտերը հավատքով և մկրտությամբ: Նա ամենքին քրիստոսածանոթ դարձրեց և հաստատեց, որպեսզի փառավորեն Հոր, Որդու և սուրբ Հոգու անունները:

Թարգմ. Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

---

548 Տիտ. Բ, 13—14:
549 Էֆես. Դ, 13:
550 Մատթ. ԻԸ, 19:
551 Յովհ. ԺԷ, 24:
552 Յովհ. ԺԴ, 20:
553 Ա Կորնթ. Բ, 9:
554 Բ Կորնթ. Թ, 15:



Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ ՀԱՅ ՀԻՆ ՈՒ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ*

Պետք է ասել, որ զարգացած ավատատիրության շրջանում (երբ կենտրոնական Հայաստանում ու Կիլիկիայում վերսկսվել էր հոգևոր ինքնուրույն երգերի ստեղծման մի ժամանակ խիստ նվազած, իսկ տեղ-տեղ նույնիսկ դադրած ընթացքը), մեր մատենագիրներին լրջորեն զբաղեցրել է՝ վաղ միջնադարում հորինված կցուրդ-շարականների ու նրանց հեղինակների հարցը: Եվ նրանք Հայաստանի ու Կիլիկիայի տարբեր վանքերում պահվող վավերագրերից և այլ (այդ թվում և մեզ չհասած) աղբյուրներից քննադատաբար օգտվելով է, որ կազմել են շարականների հեղինակների դիտարկվող ցուցակները, բայց, բնականաբար, ասել կամ պակաս հաջողությամբ: Ուստի հասկանալի է, թե ինչու ցուցակագիրներն իրար նկատմամբ ևս քննական մոտեցում են հանդես բերում: Այսպես, Սարգիս Երեցի ցուցակը Վանական վարդապետի կազմածի համեմատությամբ եթե շատ ավելի ընդարձակ է, ապա Գրիգոր Տաթևացու ցուցակը լինելով ոչ պակաս ծավալուն, միաժամանակ, ավելի ճշգրտված է: Նրանում կարդում ենք. «Մեծն Մովսէս Քերթողն զԾննդեանն և զմեծացուցէքն, և զՏեառնընդառաջին, և զՓոխման առաջին սատկերն: Այլ և զկարգն Յարութեան սրա է ասել մեծն Վարդան ի տեսութիւն Անթառամ ծաղկին, իսկ այլք ասեն թէ Անանիա Ծիրակունին է ասացեալ»[37]: Գրիգոր Տաթևացու հաղորդած տվյալները մեզ համար հատուկ կարևորություն են ստանում, երբ մտաբերում ենք, որ նա իր համալսարանում «ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւնս քաղցրալուր ձայնի եղանակաւ»[38]: Սակայն դա չի նշանակում, թե այդ տվյալները ստուգելի չեն, մանավանդ որ, մի-երկու կետ ինքը Տաթևացին էլ ստիպված է եղել որոշ վերապահությամբ նշել: Ըստ այդմ՝ այստեղ նորից հիշեցնում ենք մեծացուցեների և Հարության երգերի մասին վերն ասվածը: Իսկ ինչ վերաբերում է Տյառնընդառաջի և Աստվածածնի փոխման առաջին օրվա երգերին, մանրակրկիտ քննությունը ցույց տվեց, որ դրանք ոճականորեն (թե գրական բնագրերի, և թե երաժշտության առումներով) իրոք, մոտիկ են Ծննդյան կցուրդ-շարականներին:

Շարականների հեղինակներին ոտանավորով անդրադարձած մատենագիրներից Առաքել Սյունեցին, որ այդ հեղինակների լոկ անունները է արձանագրում, Խորենացուն հիշատակում է Մաշտոցից անմիջապես հետո[39]: Մյուսները՝ Ստեփանոս Զիգ Զուղայեցին և Հակոբ Սսեցին (XVII դ.), Խորենացու և Անանիա Ծիրակացու երաժշտա-բանաստեղծական ժառանգությանը

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1979 թվականի № 6-ից:

[37] Գիրք Հարցմանց երիցս երանելի սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729, էջ 637:

[38] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7823, էջ 42—43: Տես նաև **Լ. Խաչիկյան**, Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները, «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ. XXIII, Երևան, 1946, էջ 428:

[39] **Հ. Մ. Պոտուրյան**, Առաքել Սիւնեցի և իր բերթուածները, Վենետիկ, 1914, էջ 321:

վերաբերող և հին ցուցակներում մեկտեղված ու միահյուսված տեղեկություններն հստակելու թեկուզ թույլ արտահայտված հակումներ են ցույց տալիս: Որով, մասնավորապես Խորենացուն հատկացվող կանոնների շարքում ուշադրություն են գրավում մի կողմից՝ Անտոն Անապատականի և Թագավորաց կանոնները[40]. մյուս կողմից՝ Հովհաննես Մկրտչի գլխատման և Գրիգոր Լուսավորչի կանոնները[41] (վերջինիս հնագույն մասը): Վերջապես, շարականների հեղինակների ցուցակների «Անանուն»[42] կոչվող խմբագրության հեղինակն էլ[43], ընդհանրապես պահպանելով Խորենացու և Ծիրակացու հորինած շարականներին վերաբերող տեղեկությունների ներմիացված հին նկարագիրը, միաժամանակ կարևոր ճշտում է կատարում, իրավացիորեն Խորենացու անվանը կապելով «զԾրագալուցի Ուրախացիրն» (իմա՝ ողջ կանոնը)[44]:

Մեր նյութին վերաբերող պատմական, գրական ու ձեռագրական առաջ բերված տվյալները տակավին Հ. Մ. Զամչյանի ժամանակներից թափանցելով հայագիտական նոր գրականության մեջ[45], իրենց վրա հրավիրեցին մի ամբողջ շարք անվանի բանասերների ուշադրությունը: Դրանցից երկուսի՝ Հ. Գ. Ավետիքյանի[46] և Հ. Սահակ Ամատունու[47] աշխատությունները, նվիրված շարականների ու նրանց հեղինակների ուսումնասիրությանը, մեծ նպաստ բերին միջնադարյան աղբյուրների հաղորդած տվյալները համեմատելով հնարավորին չափ ճիշտ կողմնորոշվելու և քննական նոր մոտեցում մշակելու գործում: Հայ երաժշտագիտությունը ևս, բնականաբար, անտարբեր չմնաց քննարկվող խնդիրների նկատմամբ, ու անցած հարյուրամյակի երկրորդ կեսից ձեռնամուխ եղավ իր վերաբերմունքի մշակմանը, ինչպես շարականների հեղինակների[48], նույնպես և նրանց տարիքային ընդհանուր առանձնահատկությունների[49] որոշման հարցերում: Հենվելով հայագիտության նշված նվաճումների վրա, ու դրանց վրա ավելացնելով մեր սեփական հետազոտությանց արդյունքները ևս, մենք վերջերս առաջարկեցինք շարականների հեղինակների մեր կազմած ցուցակը[50]: Ըստ այդմ՝ Խորենացու գրչին պատկանող շարականները, ամենայն հավանականությամբ, հետևյալներն են.

— Աստվածահայտնության Ծրագալուցի կանոնը բաղկացնող երգերը,

— Ծննդյան ութ օրերի կանոնների երգերի մեծ մասը,

— Տյառնընդառաջի կանոնի երգերը,

— Անտոն Անապատականին նվիրված կանոնի երգերը (բացի օրհնության Բ պատկերից՝ «Որ ի հանդէս քո ճանութեան», որ ավելացրել է Ներսես Շնորհալին),

— Թաքավորաց կանոնի և կամ Թեոդոս թագավորին նվիրված նանոնի կտորները (բացի օրհնությունից՝ «Ո՛ զերկնաւոր թագաւորութեանդ», որ դարձյալ Շնորհալունն է),

— Հարության երգեր,

— Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատանին նվիրված նանոնի երգեր,

— Գրիգոր Լուսավորչին նվիրված հին կանոնի երգեր («Ով երջանիկ Տէր»),

— Աստվածածնի վերափոխման Ա օրվա նանոնի երգեր[51].

---

[43] Ի տէր Ստեփանոսէ գիտնական քահանայէ ասացեալ սակաւ ոտանաւորս յաղագս շարականաց թէ յումմէ են երգեալ, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1424, էջ 247:

[41] Ոտանաւոր վասն ցուցանելոյ զերգող շարականաց, յոգեալ ըստ նախագիծ տանց, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3107, էջ 138բ:

[42] Հ. Անանյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ XVIII և LXVIII:

[43] Հավանաբար՝ Գրիգոր Փեշտըմալճյանը (տես մեր հոդվածը՝ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 173 (79-րդ ծանոթագրություն):

[44] Շարակնոց, Կ. Պոլիս, 1815, էջ 2:

[45] Հմմտ. Հ. Մ. Զամչյան, Պատմութիւն հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 538—539:

[46] Հ. Գ. Ավետիքյան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814:

[47] Սահակ վարդապետ Ամատունի, Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, Վաղարշապատ, 1911:

[48] Ե. Տնտեսյան, Նկարագիր երգոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1874 (էջ 116—119):

[49] Хр. Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958.

[50] Տես Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 19 (53-րդ ծանոթագրությունը) և էջ 25 (77-րդ ծանոթագրությունը):

[51] Տես Զայնագրեալ Շարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ (համապատասխանաբար) 58—65, 66—112, 113—119, 120—124, 125—129 (Հարության երգերի համար որոշակի էջեր նշելը դժվար է առայժմ), 462—465, 669—677 և 739—748: Սրանցից զատ մնում են Ս. Ամատունու մատնանշած երկու պարականոն շարականները (Աւետեաց Աստուածածնին՝ «Ուրախ լեր Մարիամ սուրբ աստուածածնին» և Ծննդեան Ա աւուր՝ «ի հաւրէ ծագեցար), որոնք մի կողմ ենք դնում, քանի դրանց եղանակները հայտնի չեն տակավին:

Շուրջ 120 երգ՝ զատ-զատ հաշվելով օրհնությունների պատկերները և հարցերին կից գործատները: Բացառված չէ, որ հիշյալ կանոնների մեջ տեղ գտած լինեն և տարբեր հեղինակների առանձին գործեր: Այսպես, օրինակ, թվում է, որ Աստվածածնի վերափոխման Ա օրվա կանոնի օրհնության երկրորդ պատկերը («Այսօր զազատիչն յանցանաց»), իր իմաստով ոչ թե լրացումն է նախորդ պատկերի, այլ ինքնուրույն կտոր է, հավանաբար ավելի ուշ հորինված[52]: Այնուհետև, Տյառնընդառաջի կանոնն իրականում երկու օրհնություն ունի[53], երկուսն էլ երկուական պատկերով, որոնցից երկրորդն իր իմաստով առաջինի աղակերպ կրկնությունը կարող է համարվել և ավելի ուշ շրջանի հավելում: Վերջապես, կարելի է մատնանշել Ծննդյան Ա օրվա կանոնի օրհնության երրորդ պատկերը («ի հօրէ ծագեցար»), որը թե՛ իմաստի կրկնություններով և թե՛ արվեստով թուլացնում է նախորդ երկու պատկերների մեծ տպավորությունը և այլն: Սակայն, եթե նկատի առնենք, որ Խորենացու մի քանի ուրիշ երգեր էլ կարող են գրված լինել այլ կանոնների (ինչպես օրինակ՝ Հարության նվիրված շարքերի) մեջ, վերոբերյալ «120»-ը՝ որպես մոտավոր թիվ, կարող ենք պահպանել:

Մոտիկից ծանոթանալով քննարկվող երգերի գրական խոսքերին, նկատում ենք, որ դրանց մեծ մասը լեզվով, կառուցվածքով և նախնական գեղեցկությամբ աչքի ընկնող ընդհանուր ձևով, ներկայացնում է հայ հոգևոր բանաստեղծության հնագույն շերտերից մեկը: Առհասարակ նրանում տիրապետող է ազատ ոտանավորը: Օրինակ՝ Ծննդյան Բ օրվա կանոնի մեծացուցեն[54], կամ Գրիգոր Լուսավորչի կանոնի օրհնությունը[55], և այլն: Անհավասար տողերով այս ոտանավորներում, սակայն, հաճախ շեշտերն այնպես են տեղաբաշխվում, որ գրական խոսքն ընդհուպ մոտենում է տաղաչափյալ բանաստեղծության, ինչպիսին է պարագան, ասենք, Ծննդյան Ե օրվա կանոնի տեր երկնիցում[56]: Այս և նման կտորները լոկ մեկ քայլով են բաժանված՝ բուն տաղաչափյալ բանաստեղծություններից: Վերջիններիս քննությունից պարզվում է, որ Խորենացին որոշակի նախընտրություն է տվել 3—4+4—3 կամ 4—3+4—3 կառուցվածքով տողերին[57], ու բնականաբար, կիրառել է նաև գլխավորապես 12—16 վանկանի քառանդամանի տողերով (կամ «հայկական» կոչված չափով) բանաստեղծությունը[58]:

Հայ եկեղեցական երաժշտության ութ հիմնական (կամ գլխավոր) բոլոր ձայնեղանակներն առավել կամ պակաս չափով օգտագործված են Խորենացու երգերում, բացի ակ-ից: Սա նկատողության արժանի կետ է: Այս կապակցությամբ թեև ծավալվել չենք կարող, բայց և չենք կարող չհիշեցնել, թե ինչ էր ցույց տվել ժամանակին Մաշտոցյան երգերի քննությունը (որոնցում ակ նմուշն ունեցող բոլոր կտորները փաստորեն ակ դարձվածք ձայնեղանակով են)[59]: Համեմատաբար քիչ են օգտագործված նաև բկ և գկ ձայնեղանակները: Մյուսներն ավելի առատ են ներկայացված:

---

[52] Նույնիսկ պետք է ասել, որ նրանում փաստորեն Քրիստոսն է օրհնաբանվում և ոչ թե Աստվածածինը:

[53] Դե՛ «Այսօր անընկալելի ծընունդ հայրական ծոցոյ բանն եկաւորեալ ի տաճարն» և դկ՝ «Այսօր ի տաճարն եկիր փրկիչ»:

[54] Լո՛յս լուսոյ մայր,
և կենարար բանին բնակարան.
...

[55] Ով երջանիկ տէր սուրբ Գրիգոր,
սրբութեանցդն պաշտօնեայ
և առաջնորդ բանաւոր հօտի:
...

[56] Որ անտես և անքննին
բառակերպիցդն վեհագոյն,
ի փրկել ըզմեզ եկեալ
անմահից թագաւորն,
օրհնութիւն առաքողին:

[57] Դասական օրինակներ են՝ Ծննդյան Ա օրվա օրհնության առաջին պատկերը.

Խորհուրդ մեծ և սքանչելի
Որ յայսմ աւուր յայտնեցաւ.
***

և Աստվածահայտնության Ճրագալուցի կանոնի օրհնության առաջին պատկերը.

Ուրախացիր սրբուհի Գաբրիէլի աւետեօքն.
Որ քարոզեացն ըզգալուստ արքային տեառն
ի յերկնից:

[58] Սրա լավագույն օրինակներից են՝ Ճրագալուցի հիշյալ կանոնի մանկունքը.

Ծագումըն հրաշալի որ անյայտ էր ի մէնջ.
Եւ բանըն հայրական անըմբռնելի
...

նույն կանոնի մեծացուցեն.

Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ ի
սրովբէից,
Ծագելով ի քէն մեզ լոյս մայր եղեր
վերաձգողին,
...

այլև ուրիշ կտորներ:

[59] Ն. Թահմիզյան, Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1964, № 7, էջ 198:

Ընդհանրապես ասած, այս հիմնական կամ գլխավոր ձայնեղանակներում ընթացող մեղեդիների մեջ հանդիպում են նախնական տարբեր հատկանիշներ պահպանած հետաքրքիր նմուշներ, ինչպես, ասենք՝ Ծ-ընդանի Զ օրվա բձ ճաշուն, որի վերջնահանգաձնը երեք տներում էլ ավարտվում է «պարույկով» (փոխանակ «Խոսրովայինի»). և կամ Ծննդյան Ը օրվա ամ դարձվածք ճաշուն, որի վերջնահանգաձնը երրորդ տան մեջ մի նոր պտույտով եզրափակվում է դարձյալ «պարույկ» աստիճանի վրա (փոխանակ «խոսրովայինի» կամ «ներքնախաղի»):

«Դարձվածք» տիպի ձայնեղանակներում երաժշտագրված երգերից դարի ոճական գլխավոր գծերը պահպանած ամ դարձվածք գեղեցիկ կտորներ են՝ Թեոդոս թագավորին նվիրված կանոնի հարցն ու գործատունը և Ծննդյան Ը օրվա կանոնի մեծացուցեն, ողորմյան, տեր երկնիցն ու ճաշուն, որոնք «չափաւոր» կամ «միջակ» ընթացքով են: Ինչ վերաբերում է վերջին կանոնի «ծանր» հարց-գործին («Տնօրինեցաւ յարգանդի կուսին»), պետք է ասել, որ նրա մեղեդիում առկա մի ամբողջ շարք հնագույն գեղեցկության խորհրդավոր պտույտներ թվում է (գոնե Ն. Թաշճյանի ձայնագրությունից դատելով) երկարաձգվել ու ընդգծվել են հետագա դարերում[60]: Գրեթե նման օրինակներ են նաև Ծնընդյան Ծրագալուցի Ա օրվա դձ ծանր հարցը[61] և Ը օրվա դձ դարձվածք ծանր օրհնությունը, որոնք թեև ավելի լավ են պահպանել իրենց նախնական կուռ կազմությունը, և սակայն, նրանց ստեղիատիպ կամ դարձվածքատիպ պտույտները, ինչքան էլ ճարտար ագուցված, V դարում հղացված պարագաների տպավորություն չեն թողնում[62]: Բձ և գձ դարձվածք ծանր երգերը[63], ըստ բոլոր տվյալների, նույնիսկ ամբողջապես առած վերաեղանակավորվել (կամ, համենայնդեպս, սկզբնական ձայնեղանակում վերակերպավորվել) են զարգացած ավատատիրության շրջանում: Նույնը կարող ենք հաստատել Ծննդյան Դ օրվա դկ դարձվածք ողորմյայի կապակցությամբ էլ, ու նաև Գ օրվա գձ դարձվածք մանկունք-ճաշուի մասին, չնայելով սրանց «չափաւոր» ընթացքին: Առաջինը «զարտուղի» եղանակ է պարզապես (շատ նման պահոց բկ «Ամենայն արարածք» երգին, միայն՝ տեղափոխված էջելով), իսկ երկրորդը համաձայնությունային (լադային) որոշակի նորույթ է հանդիսադրում, գձ դարձվածքի վերջնահանգաձնում «վերնախաղ կիսվարի» օգտագործմամբ:

«Ստեղի» նշման թեև չենք հանդիպում, սակայն փաստորեն դկ ստեղի է Ծննդյան Գ օրվա հարցը (գործատան հետ միասին), որով և՝ երաժշտականապես ուշ շրջանի ծնունդ: Եվ կամ՝ Ծննդյան Ա օրվա օրհնության երրորդ պատկերն հատնապես ստեղիատիպ է դառնում վերջավորության մեջ: Հետսամուտ զարդոլորումներ նկատվում են մի-երկու «Յոյժ ծանր» երգերում նս, որպիսիք են Ծննդյան Ա օրվա հարցը, Տյառնընդառաջի կանոնի հարցի գործատունը և այլն: Ի վերջո, քննարկվող երգերում որոշ խանգարումներ սպրդած կարող էին լինել դրանք ըստ կանոնների վերադասավորելու շրջանում[64]: Անկախ այս ամե-

[60] Բայց սրանով ամենևին չի ժխտվում, անշուշտ, քննարկվող ստեղծագործությանը Հ. Գ. Ավետիքյանի տված սքանչելի բնութագիրը: «Հարցն այսր կանոնի,—գրել է նա,—է մի յերևելի շարականաց ըստ գերազանց կազմութեան իմաստիցն, և ըստ անաւոր ներդաշնակութեան եղանակին. մինչև պատկառանս բերել երգողացն և լսողաց» (Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 93):

[61] Այն է՝ «Որ դասուց երկնաւորաց»: Շահեկան է դիտել, որ Ղ. Ալիշանի հաղորդած տեղեկությանը համաձայն, ըստ հայկական միջնադարյան մի ավանդության՝ Խորենացին Գյուտ կաթողիկոսի առաջ երգել է ոչ թե վերոհիշյալ «Ով արքայակերպ» մեղեդին, այլ ճիշտ այս հարցը: Բայց դա, հավանաբար, վերն հիշատակված առավել հին ավանդության հետագա փոփոխության արդյունք է, ինչպես եզրակացնում է ինքը՝ Ալիշանը ևս (տես Մովսես Քերթողահայր հայոց, «Բազմավեպ», Վենետիկ, 1849, էջ 54):

[62] Հմմտ. նաև՝ Ե. Տնտեսյան, Նկարագիր երգոց Հայաստանեայցս եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 74—75:

[63] Դրանք են. Ծննդյան Ե օրվա ճաշուն՝ նշանավոր «Անթառամ ծաղիկ»-ը (որ տեղադրված է նաև Աստվածածնի վերափոխման Ա օրվա կանոնում), ու Ծննդյան Ա և Բ օրերի հարցերի գործատները:

[64] Այսինքն VIII—IX դարերում, նաև ավելի ուշ, հայոց Շարակնոցի տարբեր խմբագրությունները իրացնելիս: Իրոք, հիմնականում դրանով պիտի բացատրել կարծես Խորենացու վարպետ գրչին պատկանող երգերում երևացող մի քանի անհարթությունների առկայությունը: Ասենք, Ծննդյան Դ օրվա կանոնի օրհնության «Ծանր» նշումը (այն դեպքում, երբ երգը, դատելով հյուսվածքից, բնավ էլ ծանր պիտի չկատարվի): Եվ կամ, օրինակ, Տյառնընդառաջի կանոնի երգերից ճաշուում զգացվող անհամապատասխանությունը գրական վսեմ խոսքերի և դկ «չափաւոր» շատ սովորական, նույնիսկ շեշտադրությամբ տեղ-տեղ անհարազատ եղանակի միջև: Մինչդեռ, նույն «չափաւոր» կամ «միջակ» ընթացքով երգվող ն գրական բնագրի ու երաժշտության ամենաբնական կապի ինչ գեղեցիկ նմուշներ են՝ Աստվածա-

նից, մեզ զբաղեցնող երգերն իրենց գեղարվեստական արժանիքներով հավասարարժեք չեն: Եվ ընդհանրապես՝ այդ երգերի մանրակրկիտ, բազմակողմանի հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք մեր քերթողահոր երաժշտա-բանաստեղծական արվեստի հեղաշրջման նույնիսկ բազմամյա մի ճանապարհ են գծում, գլխավոր կողմերով: Այսպես, Խորենացու երգերում մի խումբ են կազմում այն կտորները, որոնք ակներևաբար հղացված են նրա մեծ ուսուցիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ստեղծագործական ավանդույթների յուրացման նշանաբանի ներքո: Ծննդյան Ը օրվա աձ դարձվածք «չափաւոր» մեծացուցեն, օրինակ («Յանձաւ փառաց» և կամ Թեոդոս թագավորի կանոնի հարցը՝ «Օրհնեմք զքեզ»), ուղղակի ներշնչված է կարծես Մաշտոցյան «Զըղջման իմոյ» հիանալի կցուրդից: Ս. Գրիգոր Լուսավորչի կանոնի բձ օրհնությունը՝ «Ով երջանիկ տէր», անմիջական կապերի մեջ է ապաշխարության երգերի բձ կարգի մի շարք կտորների հետ: Սրանք և նմանները, ամենայն հավանականությամբ, երիտասարդության շրջանի գործեր են[65]: Մի այլ աստիճանի վրա են գտնվում ծանր տիպի այն երգերը, ասենք՝ Աստվածահայտնության Մրագալուցի բձ ծանր ոլորմյան («Անկանիմք առաջի քո»), Տյառնընդառաջի կանոնի դձ ծանր հարցը («Օրհնեմք զքեզ»),— որոնք յուրովի զարգացնում են Սահակ-Մեսրոպյան համատիպ փոքրաձավալ կտորների լավագույն գծերը: Նշված և դրանց հարող երգերը նաև բացահայտորեն նախապատրաստում են իր իսկ՝ Խորենացու ամենաընտիր ստեղծագործությունները՝ Բայց կան կտորներ էլ, որոնցում շատ որոշակի է զգացվում ապագա երևելի գործի եղեռչային շրջագծերի կանխահայտնությունը: Օրինակ՝ Տյառնընդառաջի կանոնի դձ «չափաւոր» մեծացուցեն, կամ Գրիգոր Լուսավորչի կանոնի դձ «չափաւոր-ծանր» մանկունքը, ուր աստիճանաբար բյուրեղանում են կարծես Աստվածահայտնության Մրագալուցի «Ծագումն հրաշալի» հոյակերտ երգի տիպական պտույտները:

Այս բոլորից հետո է ահա, որ դասվում են Խորենացու մի շարք կոթողային գործերը. հիշյալ «Ծագումն հրաշալի» լայնաշունչ հանդիսական շարականը, նույն կանոնի օրհնության առաջին պատկերը՝ քնարական ջերմագույն զգացումներով հագեցած «Ուրախացիր սրբուհի» երգը, Ծնընդյան Ա օրվա կանոնի օրհնության առաջին պատկերը՝ առնական վիպականությամբ տոգորված «Խորհուրդ մեծ և սքանչելի» կտորը և նմանները, որոնք նոր հիմքեր ստեղծեցին հայ շարականերգության հետագա (VII—VIII դարերում իրագործված) զարգացման համար: Ընդհանրապես ասած, երբ մի կողմ ենք դնում հայ հոգևոր երգաստեղծության տեսակային (ժանրային) բազմազանությունը ըստ հին ու միջնադարյան հասկացությունների վերապատկերելու դեռևս դժվար լուծելի հարցը[66], ավանդաբար մեզ հասած ողջ ժառանգության մեջ՝ ձևագոյացման տեսակետից գրական խոսքերին ու երաժշտությանը հատկացվող դերի առումով՝ նկատում ենք չորս կարգի ստեղծագործություններ. ազատ ոտանավորների հիման վրա հորինված վանկային (կամ տարբեր վանկերի ոչ մեծ ոլորումներով վանկային-ոլորուն), տաղաչափյալ բանաստեղծությունների հիման վրա ստեղծ-

հայտնության Մրագալուցի գձ մաշուն, Ծննդյան Ա օրվա կանոնի գձ մեծացուցեն ու ոլորմյան, Բ օրվա գկ մաշուն, Աստվածածնի Վերափոխման Ա օրվա դձ մեծացուցեն և այլն:

[65] Նշելով Խորենացու շարականների բարձր արվեստը, Հ. Ղ. Ալիշանը «եկեղեցական եղանակաց երաժշտապետ» էր անվանում մեր պատմահորը, և իրավացիորեն, բայց ավելացնում էր նաև, թե «այս երգերս կերևի թե ծերության և վերջի ատենները երգած է», որն իր հաստատումը չի գտնում այսօր (տես «Բազմավէպ», 1849, էջ 51): Ընդհակառակը, բոլոր տվյալները ասում են այն մասին, և դա առարկայականորեն բխում է նույնիսկ Ալիշանի վկայակոչվող հոդվածից, որ Խորենացին շատ կանուխ է սկսել հորինել դիտարկվող շարականները, հնարավոր է անգամ Ալեքսանդրիայում սովորելու տարիներից: Համենայնդեպս, Ծննդյան Ը օրվա կանոնի օրհնության երրորդ պատկերի երրորդ տան վերաբերյալ ունենք Գ. Ավետիքյանի հետևյալ արժեքավոր նկատողությունը: «Այլ յաղագս այսր տան դիտելի է, —գրում է նա,—զի թուի յօրինեալ ի վաղ ժամանակաց և երգեալ ի զանազան եկեղեցիս քրիստոնէից. վասն զի գտանեմք ամենեին նովին բանիւ երգեալ առ լատինս, ի կանոն ջրօրհնեաց ասեղով. «Մկրտի Քրիստոս, և սրբի ամենայն աշխարհ. և տայ մեզ թողութիւն մեղաց, ջրով և հոգւով ամենեքեան մաքրիմք» (տես Բացատրութիւն շարականաց, էջ 93):

[66] Դժվարությունն այն է, որ եկեղեցական երգերի շատ տեսակներ, ինչպես այլուր, այնպես և Հայաստանում, հին և միջին դարերում, առանձին տեսակ են համարվել ոչ միայն և ոչ այնքան զուտ գրական կամ երաժշտական նկատառումներով, որքան ծեսի ու արարողության մեջ նրանց կատարած պաշտոնի տեսակետով: Այնպես որ, հաճախ տարբեր տեսակներ են նկատվել ու պայմանական տարբեր անվանակոչություններ են ընդունել երաժշտա-բանաստեղծական միևնույն կամ գրեթե միևնույն կառուցվածքի մի ամբողջ շարք միայնակ կամ խմբական ստեղծագործություններ:

ված երաժշտա-արտասանական ու ծորերգային, կառուցվածքային տիպի ծանր, և հանկարծաբանական (իմպրովիզացիոն) տիպի ծանր ու ծանրագույն կտորներ: Բացի այս հիմնականներից, հանդիպում են նաև միջանկյալ ձևեր, որոնցից առավել կարևոր նշանակություն ունի կառուցվածքային տիպի ծանրից դեպի հանկարծաբանականը տանող միջանկյալ ձևը: Վերջինիս շրջանակներում սկզբունքային տեղաշարժ է կատարվում ձևագոյացման և կշռույթի կազմակերպման ասպարեզում երաժշտության դերի զգալի մեծացման տեսակետով, որից հետո՝ հանկարծաբանական տիպի ծանր երգերում, երաժշտության այդ դերը դառնում է միանգամայն անկախ, ինքնուրույն: Արդ, Խորենացու ստեղծագործության մեջ դիտարկվող միջանկյալ ձևի հիանալի նմուշներ կան, որոնք V դարի հայ հոգևոր երգաստեղծության բարձրագույն նվաճումները ներկայացնելով, միաժամանակ ուղղակի նախապատրաստում են VII—VIII դարերում հանդես գալիք հանկարծաբանական տիպի ծանր շարականները: Այդպիսիք են, մասնավորապես, «Խորհուրդ մեծ» և «Ուրախացիր սրբուհի» անկրկնելի երգերը, որոնք և առաջ ենք բերում ստորև, երաժշտական հինգ օրինակների շարքում:

Առաջինը («Ով երջանիկ տէր»), անհավասար տողերով ազատ ոտանավորի հիման վրա հորինված վանկային կցուրդի նմուշ է, ուր առաջին և երկրորդ տողերը կիսված են ու վերջին վանկերը ոլորված այնպես, որ երաժշտականորեն իրար համապատասխանող նախադասություններ (ֆրազներ) գոյանան: Երկրորդում («Ուրախացիր Աստուածածին»), տաղաչափյալ բանաստեղծության զուգորդությամբ երաժշտա-արտասանական (դեկլամացիոն) տիպի գեղեցիկ մեղեդի է ծավալվում: Նկատողության արժանի կետ է, թե ինչպես երկար վանկերը սահմանազատում են ոտանավորի յուրաքանչյուր կիսատողը, բացի չորրորդից: Սրա վերջում հանդես գալիք երկար հնչյունը կարծես փոխանցվել է դարձի կամ կրկնակի առաջին վանկին («ազգ» և այլն), որ թե՛ միօրինակությունից խուսափելու համար է արված, և թե՛ դարձը ամբողջ տան հետ ավելի սերտ կապելու համար: Երրորդ օրինակում («Ծաւումըն հրաշալի») նույնպես մեղեդին ալիք-ալիք ծավալվում է ըստ ոտանավորի կիսատողերի, բայց դրանք տվյալ դեպքում բազմազան կշռույթով ծորերգային լայնաշունչ նախադասություններ են, որոնք միտում են հանդես բերում նույնիսկ ամբողջ տողը ընդգրկելու, ինչպես երևում է երգի երկրորդ տան («Ծագումըն հրաշագործ») առաջին և մանավանդ չորրորդ տողերից (առավել պարզության համար այստեղ հատածների ենք բաժանել երաժշտությունը և ձայնակապերով ցույց տվել նրա դիտարկվող նախադասությունները): Գալով ծանր երգերին, պետք է ասել, որ ինչպես ցույց է տվել հետազոտությունը, Սահակ-Մեսրոպյան կցուրդներում ժամանակին տեղ գտել են կառուցվածքային տիպի փոքրածավալ նմուշներ, որոնցում չափական յուրաքանչյուր միավոր հիմնականում իր սահմանների մեջ եղանակավորվել է այլազան ոլորումներով (օրինակ՝ գձ ծանր «Ահաւոր ես թագաւոր»), և կամ չափական երկու միավորի արժեքով ոլորումներ գրեթե համաչափորեն զուգորդվել են բանաստեղծական ոտքերի ուժեղ մասերի կամ շեշտված վանկերի հետ (ասենք՝ պահոց ակ ծանր «Օրհնեալ և փառաւորեալ» հարցի գործատունը, մինչև դարձը). բայց հետագայում դրանց մեծամասնությունը ենթարկվել է ժամանակի զորեղ ազդեցությանը: Նման ազդեցությունից զերծ մնացած Խորենացու ծանր երգերում նկատվում է առաջընթաց կարևոր քայլ: Նրանցում երկար (չափական մեկ միավորից ավելի տևողությամբ) ոլորումները զուգորդվում են ոչ միայն շեշտված, այլ՝ ի հարկին (զուտ երաժշտական նկատառումներով), նաև անշեշտ վանկերի հետ. և հետո՝ նույն ոլորումները հանդես են գալիս ինչպես համաչափ, այնպես և անհամաչափ հաջորդություններով, որն անընդմեջ հոսունություն է հաղորդում մեղեդիի ծավալմանը: Այս կարգի երգերի լավագույն օրինակներից են «Խորհուրդ մեծ» և «Ուրախացիր սրբուհի» շարականները: Առաջինում երկար ոլորումների կանոնավոր հաջորդություններ են ներկայացնում բանաստեղծական տան երկու տողերի 7-րդ և 9-րդ վանկերը, մինչ՝ համապատասխանաբար՝ 3-րդ և 6-րդ վանկերի երկարաձգումները, այլև վերջնահանգաձևը խախտում են այդ համաչափությունը: Երկրորդում (ուր դարձյալ դյուրության համար երաժշտությունը բաժանել ենք հատածների), համեմատելի են բանաստեղծական տան երկու տողերի 2-րդ և 7-րդ վանկերի ոլորումները, և դրանց ստեղծած համաչափությունը նրբորեն խախտող 9-րդ երկարաձիգ վանկը առաջին տողում, 14-րդը՝ հաջորդ տողում, այլև վերջնահանգաձևը: Սհա. մեղեդիի նման հուսվածքը, որ տանամին որոշ կապեր ունի բանաստեղծական տան ընդհանուր կառուցվածքի հետ, բնականորեն նախապատրաստում է հանկար-

ծաբանական տիպի ծանր երգերի հայտնությունը VII—VIII դարերում, երգեր, որոնք արդեն հենվում են ամբողջապես ինքնուրույն երաժշտական ձևի ու կշռույթի վրա: Խազավորումից դատելով, նման մի ստեղծագործություն պետք է եղած լիներ նույնիսկ Խորենացու վերոհիշյալ «Ով արքայակերպ» մեղեդին[67], սակայն նրա խազագրությունը առավելն XII դարից ավելի շուտ չէր կարող երևացած լինել, այնպես որ առայժմ մի կողմ ենք դնում այն: Անկախ դրանից, ողջ նախընթացը մեզ հիմք է տալիս՝ վկայակոչելով նորովի ընկալելու Ղ. Ալիշանի ավելի քան հարյուր տարի առաջ արտահայտած զարմանալի խորաքննին այն կարծիքը, թե հայոց պատմահայրը «Քերթողահայր» է կոչվել «ավելի բանաստեղծական կամ երգահան գրվածոց համար. և թե այս մտքով անվանս արժանավոր է, վկա ըլլան մեզի իր ծանոթ սքանչելի շարականներն, որոնց չափական շենքը ալ, իմաստն ալ, եղանակներն ալ՝ կցուցնեն թե շատ գերազանց ոգի և ճաշակ ունի եղեր մեր Խորենացին»[68]: Այո, անցյալի մեր խոշորագույն երաժիշտ-բանաստեղծներից մեկն է Խորենացին, որը հեթանոս Հայաստանի երգաստեղծության վերաբերյալ անգնահատելի նյութեր է հավաքել ու հաստատագրել գալիք սերունդների համար, և իր բեղմնավոր գրչով հորինել շուրջ 120 հոգևոր երգեր, հիմնականում կցուրդ-շարականներ: Դրանց մեջ մի ամբողջ շարք կտորներ, որոնք պահպանել են իրենց ժամանակի ոճական գլխավոր օծերն ու գեղարվեստական առանձնահատկությունները, աղև առանձին նմուշներ՝ որոնք կրում են իրենց մեծ հեղինակի անհատական վառ կնիքը ևս, գոյացնում են 5-րդ դարի հայ հոգևոր երգաստեղծության պայծառ գագաթը և կանխորոշում նրա հետագա զարգացման ուղիները:

[67] Հ. Ղ. Ալիշանը անդրադարձել է սույն մեղեդիի խազագրությանը ևս, գրելով, որ «խազերն ալ կցուցնեն թե շատ վարպետ և անուշ եղանակ պիտի ունենա, շենքն ալ նման է այն հին մեղեդեաց՝ որոնց ոճն հայտնապես կցուցնեն թե թարգմանչաց դարեն ետ չեն» («Բազմավէպ», 1849, էջ 54): Բազմավաստակ հայագետը նկատեց նաև մեղեդիում «ը» ձայնավորի օգտագործման և տարբեր վանկերի կրկնության երաժշտական նշանակությունը: Ալիշանից հետո նույն մեղեդիի վրա ուշադրություն դարձրեց Կ. Կոստանյանն էլ (տես Գրականության և արվեստի թանգարան, Կ. Կոստանյանի դիվան, նյութ № 209. այստեղ կա նաև Խորենացու «մեղեդի Տրդատա թագաւորին» կտորը), ու բոլորովին վերջերս՝ Ա. Մնացականյանը ևս (հմմտ. «Գրական թերթ», Երևան, 1967, 28 ապրիլի. էջ 4), դարձյալ մատնանշելով «ը» ձայնավորի կիրառման երևույթը և այլն: Այս բոլորով հանդերձ, մեղեդիս հնության մասին իրավացիորեն արտահայտված մտքերը մենք առայժմ վերաբերում ենք նախ և առաջ գրական բնագրին, ինչպես նույնը կարող ենք ավելացնել Սահակ Պարթևի անունով մեզ հասած խազագրյալ տաղի կապակցությամբ ևս:

[68] «Բազմավէպ», 1849, էջ 51:

Զափաւոր ԾաՆր





Միջակ












Ջափաւոր
Մա - գու - մըն հրա - շա - լի. որ ան - յայտ էր ի մէնք
եւ բա - նըն հայ - րա - կան ա - նըմ - բըռ - նե - լի...
Ջափաւոր
Մա - գու մըն հրա - շա - գործ որ ի կու - սէն ծա - գե - ցաւ.
ճա - ռա - գայ - թե - լով զա - ռա - ռածս ա - մե - նայն.
եր - կի - նքը ցըն - ծա - յին եւ եր - կիրս ու - ռա - խա - նայր,
եւ Քրիս - տոս աս - տը - ուած ընդ մարդկան շըր - ջե - ցաւ։


Ծանր
Խոր - հուրդ մեծ եւ սքան չե -
- լի որ յայսմ ա - ւուր յայա -
- ՕԵ - ցաւ հո - վիւքն եր - գեն
ընդ հրեշ - տակս տան ա -
ւե - տիս աշ - խար - հի։
Ծանր
Ու - րա - խա - ցի՛ր սըր - բու -
հի՛ Գաբ - րի - է -
լի ա - ւետ - ե՛օք որ քա - ռոզ -
եա՛ցն ընդ - գա - լո՛ւստ ար - քա - յին
տեա՛ռն յերկ - ին։



ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԸ

(Պիեսը նախատեսված է, 1-ին դասարանցիների Այբբենարանի ավարտման հանդեսի համար: Գալիս են Մ. Մաշտոցը և Ուսուցչուհին):

Ուսուցչուհի.—Մեսրոպ Մաշտոց, Մեսրոպ Մաշտոց,
Դու սրբություն ամեն սրբոց,
Իմաստության շտեմարան,
Հայ դպրության լուսո խորան,
Դու ազգերին քեզ տարեկից
Եղար-սատար և կարեկից,
Եղբայրության դու ջատագով,
Լուսապսակ քո ճակատով
Սիրով անցար երկրե-երկիր,
Պարգևեցիր նշանագիր
Եվ աղվանից և վրացոց,
Մանկանց տալով քո սիրտը բոց:

Մ. Մաշտոց.—Սպասեցեք, չե՞ք լսում դուք,
Այս ի՞նչ վեճ է, այս ի՞նչ աղմուկ:
(Գալիս են մի խումբ տառեր աղմկալից վիճելով):

Մի խումբ տառեր.—Մաշտոցն է մեր հայրն հարազատ,
Մեզ է սիրում ամենից շատ,

Օ և Ֆ տառեր.—Սխալվում եք դուք մեծապես,
Ամենից շատ սիրում է մեզ:

Մի խումբ տառեր.—Բայց չէ՞ որ ձեզ նա չի կերտել:

Օ և Ֆ տառեր.—Բայց իր հրովն ենք մկրտվել,
Քննություն ենք տվել հաջող,
Ուրեմն մեզ էլ լսի թող:

Մի խումբ տառեր.—Մաշտոցն է մեր հայրն հարազատ,
Մեզ է սիրում ամենից շատ:

Ուսուցչուհի.—Ուսուցչապետ մեր մեծատաո,
Լույսի օվկիան, մտքի կատար,
Խոսքիդ ցոլքը ծիածանի
Մեր սրտերում թող ծածանի,
Զավակներդ ամենազոր
Վեճի մեջ են մտել այսօր,
Թե դու սրտով քո անարատ
Ո՞ւմ ես սիրում ամենից շատ:

Մեսրոպ Մաշտոց.—Դուք իմ հոգու ծիլ-ծաղիկներ,
Դուք իմ հավատ, իմ խինդ, իմ սեր,
Հողմերի դեմ աղետավոր
Դուք կաղնիներ եք դարավոր,
Թողեք ամեն վեճ ու աղմուկ,
Հաշտ ու խաղաղ խոսեցեք դուք,
Խաղը կոչենք «Տառահանդես»,
Դե, խոսեցեք, լսում եմ ձեզ,
(Գալիս են Ա, Բ, Գ, Դ, Ե տառերը),

Ա. տառ.—«Ա» տառն եմ ես արևավոր
Արևի պես և հին և նոր
Աշխատասեր, արևաբույր,
Արարատից բխող աղբյուր:

Մ. Մաշտոց.—Այս անունն էլ լավ հիշիր դու,

---

* Վենետիկ Հայրապետի՝ այս տարի Ֆրանսիա կատարած ուղևորության ժամանակ սույն պիեսը Նա բարեհաճել էր հանձնարարել սիրուտիկ մի շարք հայ դպրոցներին՝ ներկայացման համար:

Այս առթիվ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում սույն պիեսը:

Արշակունյան Վռամշապուհ:
Բ. տառ.—«Բ» տառն եմ ես ձեր բնասեր,
Բարեկամն ու ընկերն եմ ձեր,
Բերել կտամ ձեր դուրեկան
Բյուրաստղանի մի Բյուրական:
Մ. Մաշտոց.—Բարին ընդ քեզ, իմ բարեձեռք,
Բյուր ու բազում քեզ սեր, քեզ երգ:
Գ տառ.—Գարնան շողում ու ճաճանչում,
«Գ» տառն եմ ես բարեհնչուն,
Գիտության գետ եմ մեծերին,
Գիրք ու գրիչ մանուկներին:
Մ. Մաշտոց.—Գովում եմ քեզ դու իմ «Գ» տառ,
Գալիքների ուղին գտար:
Դ տառ.—«Դ» տառն եմ ես դաշինքասեր,
Դասագիրք եմ և դասընկեր,
Դիմացկուն եմ և զգայուն,
Դիրքս ամուր և մնայուն:
Մ. Մաշտոց.—Դու քո ձիրքով, խելքով աճել,
Դարերի երթն ես նվաճել,
Ե տառ.—Եղիշեի զարմից սերված,
«Ե» տառն եմ ձեր գովաբանած,
Եղևնու պես մշտադալար,
Երիտասարդ և կենարար,
Մ. Մաշտոց.—Եղեգան փող երանելի,
Եղիր հավերժ երանելի:
Ուսուցչուհի.—Ուսուցչապետ մեր մեծատառ,
Լույսի օվկիան, մտքի կատար,
Խոսքիդ ցոլքը ծիածանի
Մեր սրտերում թող ծածանի,
Զավակներդ մեսրոպազուն,
Քո խոսելուն են սպասում,
Ասա լեզվով քո անարատ՝
Ո՞ւմ ես սիրում ամենից շատ:
Մ. Մաշտոց.—Երբ բոլորին մեկ-մեկ լսեմ,
Ո՞ւմ եմ սիրում, անշուշտ, կասեմ:
(Գալիս են Զ, Է, Ը, Թ, Ժ տառերը):
Զ տառ.—«Զ» տառն եմ ես, Զվարթնոց եմ,
Զնգուն զանգ եմ, ոսկեզօծ եմ,
Զարթեցնում եմ հազար-հազար,
Զվարթ հույզեր լուսավարար:
Մ. Մաշտոց.—Զավակն ես իմ լուսական-թեղ,
Զարմով զինվոր, զարկով զորեղ:
Է տառ.—Էությամբ իմ ես հայկազուն,
Էակ չեմ մի, այլ բյուր-բազում,
«Է»-ն խիստ թանկ է հայոց համար,
Էջմիածինն է սրբավայր:
Մ. Մաշտոց.—«Է»-ին լինի հանապազօր
Էջմիածինն հովանավոր:
Ը տառ.—«Ը» տառն եմ ես միշտ ընձեռնող,
Ընկած մարդուն ուժ ներարկող,
Ընթերցասեր, ձեզ բարեկամ,
Ընտիր գրքեր ընծա կտամ:
Մ. Մաշտոց.—Ըմբոստ ես դու անընկճելի,
Ընձյուղ ընտիր պատգամների:
Թ տառ.—«Թ» տառն եմ ես ձեր բազմափորձ,
Թագն ու պսակն ազգիս հայոց,
Թուրն ու թևն եմ ես իմ բախտի,
Թշնամիներն ինձ չեն հաղթի:
Մ. Մաշտոց.—«Թ» տառ դու իմ զորեղ մական,
Թրերի դեմ թշնամական:
Ժ տառ.—Ժողովրդի ուժից սերված,
«Ժ» տառն եմ ձեր սրտին մերված,
Ժամանակի ուժով խորին
Ժապավինող հինը նորին:
Մ. Մաշտոց.—Ժողովիր դու ուժեղ գնդեր,
Ժայռ դարձիր չար գործի ընդդեմ:
Ուսուցչուհի.—(Դեպի բեմի խորքը)
Հապա, սաներ, մեսրոպազուն,
Հիմա էլ ձեզ ենք սպասում:
(Գալիս են Ի, Լ, Խ, Ծ, Կ տառերը):
Ի տառ.—Իղձ, երազանք հոգուս գրքում,
«Ի» տառն եմ ես հզորագույն,
Իմ մեջ ունեմ ուժը հողի,
Իմաստության անմար շողի:
Մ. Մաշտոց.—Իշխիր դու քեզ, քեզ ճանաչիր,
Իմ հայրենյաց սիրով աճիր:
Լ տառ.—«Լ» տառն եմ ես ձեր լուսաբեր,
Լքվածներին հավատ ու սեր,
Լսում եմ իմ ծնողներին,
Լիություն եմ բերում հողին:
Մ. Մաշտոց.—Լավն ես որպես Սահակ Պարթև,
Լինելու ես դու հարատև:
Խ տառ.—«Խ» տառն եմ ես Խորվիրապից,
Խոհերով լի խորհրդակից,
Խոչընդոտից ես վախ չունեմ,
Խարդախներից ես փախչում եմ:
Մ. Մաշտոց.—Խոսքդ է խոհով, լույսով լեցուն.
«Խաղաղություն ամենեցուն»:
Ծ տառ.—«Ծ» տառն եմ ես ծիրանի ծառ,
Ծիածանը ճյուղերիս թառ,
Ծիտ, ծիծեռնակ ինձ հետ բերում,
Ծափ-ծիծաղ եմ ձեզ պարգևում:
Մ. Մաշտոց.—Ծնունդ թող օրհնյալ լինի,
Ծով դարձրու հացն հայրենի:
Կ տառ.—«Կ» տառն եմ ես կարմիր կայծով,
Կոմիտասի հոգու բոցով,
Կաքավիկի երգը շրթիս,
Կտրիճ կորյուն ժողովրդիս,
Մ. Մաշտոց.—Կրակի պես դու մշտավառ,
Կորով ու կամք քեզ անսպառ,
Ուսուցչուհի.—(Դեպի բեմի խորքը)
Հապա, սաներ մեսրոպազուն,
Ձեր խոսելուն ենք սպասում:
(Գալիս են Հ, Ձ, Ղ, Ճ, Մ տառերը):
Հ. տառ.—Հասցե ունեմ Հացեկաց գյուղ,

«Հ» տառն եմ ես գետ հորդաբուխ,
Հայաստանը իմ խոր հոգում:
Հայությունն եմ ես նորոգում:
Ն. Մաշտոց.—«Հ» տառ դու իմ լուսակամար,
Հուրհրա թող հուրդ անմար:
Ջ տառ.—«Ջ» տառն եմ ես ձեր վայելուչ,
Ձեզ իրար հետ կապող կամուրջ,
Ջայնում եմ ձեզ ես ողջ տարին,
Ջուլվել պետք չէ մեզ օտարին:
Մ. Մաշտոց.—Ձեզ պահեցեք միաբանված,
Ձեռքով, ձիրքով միաբանված:
Ղ տառ.—Ղեկն իմ բախտի ձեռքս առած,
Ղևոնդ երեցն ինձ պապ արած,
«Ղ» տառն եմ ջերմ ղողանջյունով,
Ղողանջյունով ձեզ ողջունող:
Մ. Մաշտոց.—«Ղ» տառ դու իմ հաղթ ու արի,
Ղեկդ անթեք առաջ վարիր:
Ճ տառ.—«Ճ» տառն եմ ես նրբաճաշակ,
Ճակատս բաց ու համարձակ,
Ճեմարան եմ իմաստության,
Ճարտարության ու ճոխության:
Մ. Մաշտոց.—«Ճ» տառ դու իմ ճշմարտախոս,
Ճարտար մտքի անմար փարոս:
Մ տառ.—Մասիս սարն է իմ մեծ վկան,
«Մ»-ն անունով իր պատվական,
Մատյաններով մագաղաթյա
Մատենագիր է հնօրյա:
Մ. Մաշտոց.—«Մ» տառ դու իմ մշտաժպիտ,
Մշտանվագ, մշտափթիթ:
Ուսուցչուհի.—(Դեպի բեմի խորքը):
Հապա, սաներ մեսրոպազուն,
Ձեր խոսելուն ենք սպասում:
(Գալիս են Յ, Ն, Շ, Ո, Չ, տառերը):
Յ տառ.—«Յ» տառն եմ ես, հոգով ջինջ եմ,
Յոթնապատիկ քաջ կտրիճ եմ,
«Յ» տառը դուք լավ հիշեցեք,
Յուդաներին նզովեցեք:
Մ. Մաշտոց.—«Յ» տառ դու իմ հոգու ընկեր,
Յիսուսի պես խաղաղասեր:
Ն տառ.—«Ն» տառն եմ ես գեղեցկակերտ,
Նետերի դեմ անխորտակ բերդ,
Նախանձելի թովիչ տավիղ,
Նախորդներիս նախաշավիղ:
Շ տառ.—Շնորհներով շառագունած,
Շող ու շափաղ շուրջս փռած,
«Շ» տառն եմ ես շուշանակերտ,
Շախմատասեր ժիր աշակերտ:
Մ. Մաշտոց.—Շաղիր շողեր հրաշարար,
«Շ» տառ շողի շռայլ պաշար:
Ո տառ.—«Ո»-ն եմ, նախնյաց հրով սնված,
Ողբալու տեղ մարտեր մղած,
Որոտանի ափով եկա,
Որոտալի ծափով եկա:
Մ. Մաշտոց.—Որդիս, շուրջդ լույս հեղեղիր,
Որոգայթից զգույշ եղիր:
Չ տառ.—Չմուշկներով իմ բարեձև,
«Չ» տառն եմ ես պարզ ու թեթև,
Ձեմ սիրում ես չարախոսին,
Ձակերտավոր կեղծ հերոսին:
Մ. Մաշտոց.—«Չ» տառ հզոր ու չարիափան,
Չի մթագնի քո լույս ճամփան:
Ուսուցչուհի.—(Դեպի բեմի խորքը)
Հապա, սաներ մեսրոպազուն,
Ձեր խոսելուն ենք սպասում:
(Գալիս են Պ, Ջ, Ռ, Ս, Վ տառերը):
Պ տառ.—«Պ» տառն եմ ես բահը ձեռքիս,
Պակասահող հայրենիքիս
Պարթևալանջ քաջ պահապան,
Պեղող, պահակ և պարտիզպան:
Մ. Մաշտոց.—Պարտիզպանի պես քաջհամբավ
Պարգևիր մեզ բարիք անբավ:
Ջ տառ.—Ջերմ սիրով լի հայրենիքի,
«Ջ»-ն ջահել է, ջահը ձեռքին,
Ջատագովում եմ ես արտանց
Ջութակ, ջուլհակ, ջուր, ջրաղաց:
Մ. Մաշտոց.—Ջլապինդ ես ու ջանասեր,
Ջրիր ծարավ արտերը մեր:
Ռ տառ.—«Ռ» տառն եմ ես ձեր ռամկասեր,
Ռազմիկի պես ես անվեհեր,
Ռամիկ պապս լինի վկա,
Ռումբ կդառնամ, երբ տեղը գա:
Մ. Մաշտոց.—«Ռ» տառն ես դու իմ առնական,
Ռահվիրա ես ամրամական:
Ս տառ.—Սևանի պես սիրունատես,
Սքանչագործ «Ս» տառն եմ ես,
Սուլաց անտառ, լույս սաղարթ եմ,
Սրերի դեմ սաղավարտ եմ:
Մ. Մաշտոց.—Սանիկն ես դու հայ հանճարի,
Ստրուկ մի կաց երբեք չարին:
Վ տառ.—Վահանակիր ու վարսագեղ,
«Վ» տառն եմ ես վեհ ու շքեղ,
Վսեմափայլ իմ գործերով
Վայելում եմ սեր ու գորով:
Մ. Մաշտոց.—Վարդան դու իմ սրբանվեր,
Վարիր նավդ դեպ նոր ափեր:
Տ տառ.—«Տ» տառն եմ ես տեգ-նիզակով,
Տիգրան Մեծի հզոր զարկով,
Տիգրիս գետի ափով եկա,
Տիտանական թափով եկա,
Մ. Մաշտոց.—Տարոնածին զավակն հոգվույս,
Տարածիր սեր, հավատ և հույս:
Ր տառ.—Ռաբունն եմ ես ձեր բազմագետ,
(Ռաբուն, ասել է վարդապետ),
«Ր» տառն եմ ես թևեր առած,
Ռաֆֆու կայծով հրդեհ վառած:

Մ. Մաշտոց.—Բաբունու պես խելոք դատիր,
Որպեզ շատ թանկ գնահատիր,
Ց տառ.—«Ց» տառն եմ ես ցավեր բուժող,
Ցրտից, շոգից չվախեցող,
Ցնծուղս առած ու ցնծալից
Ցելերն եմ մեր ջրում նորից:
Մ. Մաշտոց.—Ցանիր, ցանիր սիրո սերմեր,
Ցանքդ լինի արգասաբեր:
Ու տառ.—«Ու» տառն եմ ձեզ ուրախացնող,
Ուժեղ, որպես հայրենի հող,
Ուղղախոս եմ և ուխտապահ,
Ուրախ ընկեր ամենօրյա:
Մ. Մաշտոց.—Ուրեմն շեն պահիր տունս,
Ուսուցանիր զմանկունս:
Փ տառ.—«Փ» տառն եմ ես փոթորկածին,
Փառքն եմ երգում հողի, հացի,
Փութաջան եմ և բարեբեր,
Փառամոլ չեմ կամ պճնասեր:
Մ. Մաշտոց.—«Փ» տառ, շողա
փարթամաբար,
Փառքդ անցնի թող դարե-դար:
Ք տառ.—Քանդակագործ և քարակերտ,
«Ք» տառն եմ ես ճարտարապետ,
Քաջի ճամփան եմ ես հարթում,
Քաղաք ու գյուղ ծաղկազարդում:
Մ. Մաշտոց.—Քանի Արև, կյանք կա քանի,
Քեզ քո ազգը անմահ կանի:
Ուսուցչուհի.—Մեսրոպ Մաշտոց, Մեսրոպ
Մաշտոց,
Դու սրբություն ամեն սրբոց,
Քո խոսքը դեռ մի ավարտիր,
Երկու տառ էլ ունենք ընտիր,
Նրանց թեև դու չես կերտել,
Բայց քո հրով են մկրտվել,
Քննություն են տվել հաջող,
Նրանց ևս մենք լսենք թող:
Մ. Մաշտոց.—Նրանք ևս հանդես թող գան,
Իրենց հոգով ազնվական:
Օ տառ.—«Օ» տառն եմ ես պարզ ու
պարկեշտ,
Օդի նման ձեզ անհրաժեշտ,
Օթևանս մայր հողն է մեր,
Օգնականն ու ընկերն եմ ձեր:
Մ. Մաշտոց.—«Օ» տառն ես դու իմ
հատընտիր,
Օրըստօրե ամրապնդվիր:
Ֆ տառ.—«Ֆ» տառն եմ ես լավ սովորող,
Ֆոսֆորի պես լուսավորող,
Ֆրիկից եմ ուժ ստացել,
Ֆիրդուսու հետ մտերմացել:
Մ. Մաշտոց.—«Ֆ» տառն ես իմ հմայուն,
Ֆոնդ ես կայուն ու մնայուն:
Ուսուցչուհի.—Մեսրոպ Մաշտոց, Մեսրոպ
Մաշտոց,
Դու սրբություն ամեն սրբոց,
Ուսուցչապետ մեր մեծատառ,
Լույսի օվկիան, մտքի կատար,
Խոսքիդ ցոլքը ծիածանի,
Մեր սրտերում թող ծածանի,
Զավակներդ մեսրոպազուն,
Քո խոսելու են սպասում,
Ասա լեզվով քո անարատ,
Ո՞ւմ ես սիրում ամենից շատ:
Մ. Մաշտոց.—Դուք իմ հոգու ծիլ-ծաղիկ-
ներ,
Դուք իմ հավատ, իմ խինդ, իմ սեր,
Հողմերի դեմ աղետավոր,
Դուք կաղնիներ եք դարավոր,
Տվել եմ ձեզ կորով ու սիրտ, խինդ,
Սիրում եմ ես ձեզ՝ բոլորիդ:
Եղեք խելոք, եղեք գիտակ,
Թույլ միք տա ձեզ տան ոտնատակ,
Սուրբ դպրության լեզվով գրոց
Անմահ պահեք մեզ մեր ազգն հայոց,
Զորությունով հայ հանճարի,
Կուրացրեք աչքը չարի,
Իմաստություն ճանաչեցեք,
Նախնյաց հրով ճաճանչեցեք,
Գրեր չեք լոկ, այլ զենք, զրահ,
Սերունդներին տրված ի պահ,
Որ հողմի դեմ մնաք անթեք,
Անմար հրով ճառագայթեք,
Չարի ընդդեմ զրահակիր
Լույս տարածեք երկրե-երկիր,
Ապրեք հավերժ դար ու դարեր,
Քանի կա կյանք ու կա Արև:
Ուսուցչուհի.—Այբբենարան մեսրոպազուն,
Մեր մայրենի հայոց լեզուն
Իր գանձերով հազար-հազար,
Պարգևեցիր մեզ հայրաբար:
Մենք մեր խինդով մատաղ սրտի,
Նրան հավերժ սիրենք պիտի,
Փառք քեզ լեզու մեր մայրական,
Դու հավերժող-հավերժական,
Անխորտակ այուն հայոց տանս,
Հավիտենից հավիտյանս:





ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՎԱՏՔԻ ԵՎ ԿԱՐԳԻ» ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ

(«Հավատքի և Կարգ»-ի հանձնաժողովին առթիվ)

Անցյալ տարվան օգոստոսի 15են 30 գումարվեցավ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի «Հավատք և կարգ» (Faith and Order) կոչված հանձնախումբի ժողովը, Պինկալոր, Հնդկաստանի մեջ: Քրիստոնյա բոլոր եկեղեցիներեն եկած 185 ներկայացուցիչներ, մեծ մասամբ հայտնի աստվածաբաններ, հիսուն երկիրներե և բոլոր ցամաքամասերեն, հավաքվեցան Միջեկեղեցական Քրիստոնեական Կեդրոնին մեջ (Ecumenical Christian Center), Պինկալորի մոտ և քննարկեցին առաջարկված երկու նյութերը. **«Պատասխան տալ հույսի մասին որ ի մեզ է»** (Ա Պետ. Գ 15) և **«Միասին աճիլ միության մեջ»:** Ուշագրավ է որ, թեև Հռովմի կաթոլիկ եկեղեցին պաշտոնական անդամ չէ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին, սակայն անոր ներկայացուցիչները անդամ են Հավատքի և Կարգի Հանձնախումբին, լման անդամակցությամբ: Պինկալորի ժողովին, կաթոլիկ անդամակցողները թիվով տասներկու էին և անոնց մեջ կային հայտնի աստվածաբաններ, ինչպես մոնսենյոր Սարտորի (Իտալիո կաթոլիկ աստվածաբաններու նախագահը), հայր Տյուտիրե, փրոֆ. Պրաուն, փրոֆ. Թիլար և այլն:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին Հավատքի և Կարգի ժողովներուն մասնակցած է առաջին իսկ օրեն, այս միջեկեղեցական կազմակերպության հիմնադրության օրեն:

Շատեր մոռցած են այսօր թե Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը հիմնվեցավ համադրելով արդեն իսկ գոյություն ունեցող երկու խորհուրդներ. Միսիոնարական Միջազգային Ժողովը և Հավատքի և Կարգի Ժողովը: Առաջինին նպատակն էր համադրել, համակարգել և միացնել միսիոնարական տարբեր առաքելությունները, որոնք բողոքական եկեղեցիներու կողմե կերթային հեթանոս ժողովուրդները քրիստոնեացնելու, սակայն իրենց բաժանումներով գայթակղություն կստեղծեին: Իսկ երկրորդը՝ շարժում մըն էր, սկսած եկեղեցիներու մերձեցման և միության նպատակով, սակայն աստվածաբանական մտածումի և դավանական բանաձևումներու վերամշակման ճամբով:

Առաջին իսկ օրեն, Հայաստանյայց եկեղեցին ողջունեց «Հավատքի և Կարգի Համաշխարհային Ժողովը» մեծ խանդավառությամբ: 1926 մայիս 19-ին ղրկված հրավերին, Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց դրականորեն և նշանակեց երեք ներկայացուցիչներ, որպեսզի տանին

Լոզանի ժողովին Հայց. եկեղեցիի պաշտոնական ձայնը: Անոնք էին՝ Տիրայր արքեպս., առաջնորդ Ամերիկայի, Ղևոնդ եպս. Դուրյան, Մանչեսթրրի հովիվ և Գրիգորիս եպս. Պալաքյան, կաթողիկոսական պատվիրակ Եվրոպայի: Իսկ Գերագույն հոգևոր խորհուրդը, 1927 հունիս 4 թվակիր պաշտոնագրով, հղված կաթողիկոսական ներկայացուցիչներուն, կբանաձևեր երեք ընկրգբունքներ, որոնցմով պիտի առաջնորդվեին իր ներկայացուցիչները: Սույն պաշտոնագիրը կըսե. «Ողջունել համաքրիստոնեական համագումարի բացումը, հայտնել հայ առաքելական հնադարյան ազգային եկեղեցվո սիրով մասնակցիլը նրան, որ եկեղեցիների մերձեցման է ձգտում և ընդհանուր համագործակցությամբ Քրիստոսի սիրո շնչով աշխարհը ջերմացնելու և նրա Ավետարանի հավիտենական գաղափարները կյանքի մեջ մարմնացնելու նպատակն է դրել...»:

Կարգադիր Հանձնախումբի գումարած առաջին նիստին, Երուսաղեմի պատրիարք Եղիշե արքեպս. Դուրյան «ի պաշտոնե» անդամ նշանակված է Համաշխարհային Ժողովին «արևելյան եկեղեցիներու մյուս պատրիարքներուն հետ», իսկ Գրիգորիս եպս. Պալաքյան ընտրված է Գործադիր Հանձնաժողովին (Contination Committee) անդամ:

1927ի «Սիոն» ամսագիրը, որուն վերահրատարակությունը սկսած էր Դուրյան պատրիարքի կարգադրությամբ և Բաբգեն եպս. Կյուլեսերյանի խմբագրությամբ, հուլիս-օգոստոսի իր թիվի խմբագրականով Լոզանի ժողովին կանդրադառնար կոչելով զայն «Կրոնական Մեծ Շարժում մը»:

Երջանկահիշատակ Բաբգեն արքեպս. Կյուլեսերյան, որ այդ տարին իսկ կոչված էր «Սիոնի» խմբագրության պաշտոնին, իր խմբագրականով կողջուներ քրիստոնյա եկեղեցիներու վերամրացման ձգտող այս ձեռնարկը. **«Սիրեցէք զմիմեանս.** Տերունի պատգամին ընդարձակ և ճոխ մեկ գործունեությունն է որ կարտացոլա Հավատքի և Կարգի միության համաշխարհային շարժումին մեջ և ասիկա ստուգիվ ցույց կուտա թե Ավետարանը և քրիստոնեությունը կրրցած են թափանցել միտքերու և հոգիներու խորքն ու ալքը, և գտած են իրենց քարոզած սիրույն և եղբայրության ամենեն գործնական և ամենեն օգտակար մեկնության կերպը»:

1927ի ժողովի խանդավառ մասնակցությունը հայ առաքելական եկեղեցիին կասեցում մը ունեցավ հետագային: Սկսած երեք եպիսկոպոսներու նշանակումով և պատրիարքի պաշտոնական անդամակցությամբ Նախագահական Մարմնին, մեր եկեղեցին հանկարծ ետ քայլ մը կկատարե: «Հավատքի և Կարգի» ժողովներուն, որոնք իրարու կհաջորդեն, մինչև կազմությունը Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին, կան հայ եկեղեցականներու անուններ, սակայն ո՛չ նախագահության մեջ, ոչ գործի խումբին մեջ (Working Committee) և երբեմն ոչ իսկ Հանձնախումբին մեջ: Լոզանեն ետք Իտինպըրայի ժողովեն մինչև Սոնթրեալ, Հայց. եկեղեցին մասնակցեցավ «Հավատքի և Կարգի» ժողովներուն, պատահականորեն և ոչ պաշտոնական ներկայացուցիչներով, ինչպես էր պարագան առաջին ժողովին:

Կտարվինք մտածելու թե պատճառը այս վերապահության կրկնակի է: Լոզանի փորձառութենեն ետք, երբ երջանկահիշատակ Ղևոնդ եպս. Դուրյան շարունակեց մասնակցիլ զանազան հավաքույթներու, Ամերիկայի մեջ, ի հայտ եկավ երևույթ մը, որ վտանգավոր նկատվեցավ մեր եկեղեցվո բարձրաստիճան եկեղեցականներուն կողմե. դավանական զիջումներու զառիվարը, որ փոխանակ առաջնորդելու եկեղեցիներու միության, փոխադարձ հարգանքի և հանդուրժողության հիման վրա, կսպառնար սահեցնել տկարացած մեր եկեղեցին՝ դեպի ուրացումներու խորխորատը, ուրացումը մանավանդ մեր եկեղեցիին դավանական կեցվածքին և վարդապետական ըմբռնումին՝ քաղկեդոնյան բանաձևումներուն նկատմամբ: Վերապահության երկրորդ պատճառն էր հավանաբար բողոքականներու տիրող ձգտումը, ժողովներու մեջ, հավատքի և կարգի բոլոր հարցերը վերաքննության ենթարկելու շարունակ, անգիտանալով եկեղեցիին ավանդությունը և Աստվածաշունչի մեկնության տալով անհատական և ազատ բնույթ մը:

Կրնա ըլլալ նաև որ վերապահութենե ավելի՝ անտարբերություն մը կար մերոնց մոտ՝ եկեղեցիներու միության ամբողջ շարժումին նկատմամբ, նկատելով զայն օտար և մեզի համար՝ ավելորդ պաճուճանք մը, քանի որ Հայաստանի մեջ թե արտասահման, մեր եկեղեցին կապրեր վիրավոր, ամեն կողմեն հարվածված, իր պատմության ամենեն դժվարին տարիները:

Առաջին իսկ օրեն, 1927ի Լոզանի ժողովեն սկսյալ, «Հավատքի և Կարգի» ժողովները եղան քրիստոնյա եկեղեցիներեն ղրկված աստվածաբաններու մեծ հավաքույթներ, նպատակ ունենալով ուսումնասիրել և քննարկել տարբերությունները, որոնց հետևանքն է քրիստոնեության բա-

ժանյալ վիճակը: Սկզբնական տարիներուն, նախաձեռնողներու մտածումին մեջ կտիրեր այն համոզումը թե դավանական տարբեր հասկացողություններն են հիմնական արգելքը միության և թե անոնց բարձումով, այսինքն աստվածաբանական վարդապետություններու շուրջ որոշ համաձայնություններ գոյացնելով, եկեղեցիները կըրնան իրագործել բաղձացված միությունը: Այս հիման վրա, «Հավատքի և Կարգի» ընդհանուր ժողովները կազմեցին հանձնախումբեր և անոնց հանձնեցին աստվածաբանական որոշ հարցերու քննարկումը: Այս հարցերն էին.

1) Եկեղեցվույն պատգամը աշխարհին՝ Ավետարանը:
2) Եկեղեցվույն բնությունը:
3) Եկեղեցվույն ընդհանուր դավանությունը հավատքի մասին:
4) Եկեղեցվույն պաշտոնեությունը:
5) Խորհուրդներ:
6) Մեկ քրիստոնեություն և եկեղեցիներու փոխհարաբերությունները:

Մինչև Lundի ժողովը (1952) մասնագետ աստվածաբաններու խումբեր, որոնք զբաղեցան այս հարցերու քննարկությամբ, եկեղեցաբանական հարցերը բաղդատական մեթոդով վերլուծեցին, ի հայտ բերելու համար թե եկեղեցիները դավանական ո՞ր հարցին մեջ կտարբերին և թե ինչպիսի՞ կարելիություններ կան հաղթահարելու տարբերությունները համաձայնություններով: Բաղդատական այս մեթոդը չտվավ սպասված արդյունքը, թեև մղեց յուրաքանչյուր եկեղեցիի աստվածաբաններ միասնաբար տանելու լուրջ ուսումնասիրություններ և ստեղծելու փոխադարձաբար հասկնալի եզրաբանություն մը:

Լունտի ժողովը նոր մեթոդ մը թելադրեց փոխարինելու կամ ամբողջացնելու համար եկեղեցաբանականը, այն էր «քրիստոսաբանական մեթոդ»ը: Աստվածաբանական ուսումնասիրությունները կեդրոնացան «Քրիստոս» և «Եկեղեցի» հասկացողությունները պարզաբանելու անհրաժեշտության վրա և աշխատանքի խումբերը լծվեցան նոր ուսումնասիրություններու, նոր նյութերու շուրջ: 1967ին Պրիսթոլի ժողովին բերված ուսումնասիրություններու վերնագիրները բավական են բնորոշելու համար նոր մտահոգությունները.

1) Աստված՝ բնության և պատմության մեջ:
2) Ս. Գիրք և ավանդություն:
3) Հաղորդությունը:
4) Եկեղեցին և հրեա ժողովուրդը:

«Հավատքի և Կարգ»ի կյանքին մեջ մեծ անկյունադարձ մը կատարեց Լուվենի ժողովը, 1971ին: Կարգ մը եկեղեցիներ միությունը իրագործած էին իրարու միջև: Որոշ միություններ կայացած էին, առանց նկատի առնելու դավանական տարբերությունները և առանց լուծելու վարդապետական դժվարությունները: Աստվածաբաններու մասնագիտական պրպտումներուն ձգելով շարունակել վիճաբանությունները, միացած եկեղեցիները որոշած էին հաղորդության մտնել իրարու հետ, ճանչնալ ձեռնադրված պաշտոնյաներու հանգամանքը և գործակցիլ իրարու հետ, եկեղեցիի կյանքեն ներս:

Այս բոլոր շարժումներեն դուրս մնաց մեր եկեղեցին, թեև տ. Տիրան արքեպս. Ներսոյանի, տ. Դերենիկ եպս. Փոլատյանի և ավելի ուշ՝ տ. Գարեգին եպս. Սարգիսյանի անունները հիշատակված են իբրև «դիտող» կամ «հյուր» եկեղեցականներ, շարունակաբար գումարված ժողովներու տեղեկագիրներուն վերջավորության:

... Այս տարվան Պինկալոր, Հնդկաստան գումարված ժողովին մասնակցեցավ տ. Շահե արքեպս. Աճեմյան, Մայր Աթոռ ս. Էջմիածնի անունով:

Երկու շաբաթներու ընթացքին, ժողովը քննության ենթարկեց բոլոր աշխարհամասերեն եկած արտահայտությունները **քրիստոնեական հույսին,** այսօրվան աշխարհի ալեկոծումներուն դիմաց: Տասը առանձին ենթահանձնախումբեր քննարկեցին այդ արտահայտություններեն յուրաքանչյուրը և տասներորդ Հանձնախումբը համադրեց բոլորին աշխատանքները «Վերջնագույն Հույս»ը վերնագրված գեղեցիկ գրությամբ մը: Վերջին երեք օրերուն ալ, ժողովը քննարկեց «Միասին աճիլ դեպի միություն» նյութը, նկատի առնելով հատկապես **Մկրտության, Պատարագի** և **Ձեռնադրության** մասին կատարված աշխատանքները: Վերջին հինգ տարիներու ընթացքին, եկեղեցիներու աստվածաբան ներկայացուցիչները, երկար խորհրդակցություններե ետք, հասած էին համաձայնության մը, երեք խորհուրդներուն շուրջ: Համաձայնության արդյունքը եղած էր հրատարակությունը գրքույկի մը, «Մեկ մկրտություն, մեկ հաղորդություն և փոխադարձաբար ճանչցված պաշտոնեություն»: Ստանալե ետք այս գրքույկը, յուրաքանչյուր եկեղեցի արտահայտած էր իր տեսակետը անոր պարունակած բանաձևումներու մասին: Ժողովին հանձնարարությունը եղավ որ շարունակվի «Հավատքի և Կարգի» հանձնաժողովին և եկեղեցիներու միջև զարգացող այս խոսակցությունը, հասնելու համար համաձայնու-

թյան ձևի մը, զոր կկոչեն consensus, և որ կարտահայտե կարծիքներու համընկնում մը, ավելի քան ամբողջական նույնություն մը:

Պինկալորի ժողովը, իր կատարած աստվածաբանական աշխատանքին իբրև արտահայտություն, հրատարակեց «հավատքի հասարակաց դավանություն» մը, որ արժանացավ ուղղափառ, կաթոլիկ և բողոքական եկեղեցիներու ներկայացուցիչներու հավաքական հավանության:

Վերջացնելու համար, կհրատարակենք մի քանի հատվածներ այդ «դավանութենեն», հուսալով որ մեր եկեղեցիին հարազատ զավակները կգտնեն այնտեղ նոր ներշնչումներ: իրենց հավատքը զորացնող:

* * *

«Մենք լսեցինք հույսի ձայներ, որովհետև մենք հոս կոչված ենք հաշիվ տալու մեր հույսի մասին (Ա. Պետ. Գ 15): Մենք խումբ մըն ենք 160 քրիստոնյաներու, հավաքված Հնդկաստանի մեջ, եկած բազմաթան եկեղեցիներե և երկիրներե, իբրև Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի «Հավատքի և Կարգի» հանձնախումբ: Մեր եկեղեցիները տված են մեզի տեսանելի միության դատը հառաջացնելու պարտականությունը: Այդ պարտավորության կեդրոնն է զարգացումը եկեղեցիներու միջև իրենց հավատքը միասնաբար դավանելու կարելիության:

* * *

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Սակայն Հարուցյալը նույն խաչեցյալն է: Այս կնշանակե թե հույսի մեր կյանքը անվտանգության ապահովություն մը չէ, այլ հրավեր մը վտանգավորության: Հույսի մեջ ապրիլ չի՛ նշանակեր նպատակի մը հասած ըլլալ, այլ գտնվիլ շարունակ վտանգներով լեցուն ճամբու մը վրա:

Հույսով ապրիլ կնշանակե հանձն առնել պայքարը: Մեզի զլացված է առավելությունը ըլլալու «ոչ տաք և ոչ պաղ», հանձն առնելու կեղծ չեզոքություն մը, որ գաղտնորեն պաշտպանությունն է իշխանության գլուխ գտնվողներուն: Պայքարիլ կնշանակե կողմ բռնել, ըսել «այո» ոմանց, ուրիշներուն «ոչ» ըսելու գինով: Եթե համբերող դիմացկունություն մը միակ կարելի միջոցն է, այդ ևս բողոքի ձև մըն է: Կրնանք ձախողիլ, քանի որ Աստված կրնա գործածել մեր ձախողությունները Իր նպատակներու իրագործման մեջ: Հույսը կընդգրկե պայքարի հանձնառությունը:

Հույսով ապրիլ կնշանակե հանձն առնել իշխանության գործածությունը: Ոմանք չափազանց իշխանություն ունին, այնքան որ անվստահելի են: Ուրիշներ շատ քիչ իշխանություն ունին արդյունքի մը հասնելու համար: Միշդ չէ՛ որ քիչեր իրենց որոշումները պարտադրեն շատերուն: Պետք է նույնանանք իշխանութենե զրկվածներուն հետ և օգնենք անոնց, դուրս գալու ուրիշներու ենթարկվածութենեն: Սակայն նաև պետք է ծառայություն մատուցանենք իշխանության գլուխ գտնվողներուն, թելադրելով անոնց որ լսեն «աշխարհի արհամարհյալներուն», որ իշխանությունը գործածեն արդարությամբ և բաժնեն զայն դուրս մնացածներուն հետ: Հույսը կընդգրկե իշխանության պատասխանատու գործադրությունը և անոր անպատեհությունները:

Հույսով ապրիլ կնշանակե հաստատել նորը և վերահաստատել հինը: Հաստատել նորը ընդունիլ է թե Քրիստոս կերթա մեր առջևեն. վերահաստատել հինը ընդունիլ է թե Ան չեկավ կործանելու, այլ լրության հասցնելու, որովհետև նույնն է Ան, երեկ և այսօր և հավիտյան:

* * *

Հույսով ապրիլ կնշանակե հանձն առնել ինքնաքննադատությունը իբրև միջոց վերանորոգումի: Մշակույթեն և եկեղեցիեն ներս, վերանորոգումը կու գա վերաքննությամբը հաստատված իրականության, զայն վերակենդանացնելու կամ մեկդի շպրտելու համար: Սակայն բառին իսկական իմաստով վերանորոգումը մեր իշխանութենեն վեր է: Ան կծաղկի երբ Աստված դատե մեզ և առաջնորդե մեզ զոջումի և ապաշխարության պտուղ բերելու: Այս կրնա նաև տանիլ մեզ թեթևամտության, ինքզինքնիս շատ լուրջի չառնելու կամեցողության մը: Անոնք միայն որոնք կրնան ժպտիլ իրենք իրենց նկատմամբ կրնան, ի վերջո, լուրջի առնել ուրիշները: Հույսը կենթադրե ինքնաքննադատությունը, իբրև վերանորոգումի միջոց:

* * *

Հույսով ապրիլ կենթադրե անցնիլ մահվան վտանգին նույն այդ հույսի սիրույն: Ոչ մեկ քրիստոնյա իրավունք ունի որոշելու որ ուրիշ մը պետք է նահատակվի: Սակայն մեզմե յուրաքանչյուրը կդիմագրավե

հավանականությունը թե վկայությունը կըրնա ըլլալ սուղ արժող վկայություն: Քրիստոնեական հույսը խուսափում չէ մահեն, այլ հաղթահարումը մահվան: Անոնք որ իրապես կապրին հույսով, հաշտված են մահվան հետ և կրնան դիմագրավել վտանգը Քրիստոսի հետ մեռնելու: Ոմանց համար այս խոսքերը ճառաբանություն են, ուրիշներու համար՝ ժայռի նման հաստատուն վստահությունն է, որով կդիմագրավեն ամեն նոր օր: Հույսով ապրիլ կընդգրկե մահվան վտանգը նույն այդ հույսի սիրույն:

«Հաւատարիմ է բանս, զի եթէ ընդ նմա մեռաք, ընդ նմին և կեցցուք. եթէ համբերեմք, ընդ նմին և թագաւորեսցուք. և եթէ ուրանամք, և նա ուրանայ զմեզ. և եթէ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ոչ կարէ» (Բ Տիմ. Բ 11—13):

ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆ

«Սիոն» ամսագիր,
1978, № 10—12.





ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թ. 1բ.—1. Կոհակ և ստուեր (Victor Hugo).
Թ. 2բ.—2. Արօր և սուր (Ռեթէոս Ց. Պէրպէրեան).
Թ. 3բ.—3. Մահ Վիքթոր Հիւկոյի (Գրիգոր Ս. Օտեան).
Թ. 4բ.—4. Ջէնքի ձայներ և վառօդի հոտեր (Մէհմէտ Էմին).
Թ. 5բ.—5. Պաշտպան սուրբը և հաւատքին ոյժը (Gabriele d'Annunzio)
Թ. 7ա.— 6. Ծշմարտութիւն (Սիւլէյման Նէսիպ).
Թ. 7բ.— 7. Իրաւունք (Մէհմէտ Էմին).
Թ. 8ա.— 8. Սիրամարգը և սոխակը (Աղեքսանդր Փանոսեան),
Թ. 8բ.— 9. Տերևը (Հիւսէյին Ճահիտ).
Թ. 9ա.— 10. Պտոյտին հեշտութիւնները (Georges Wagnireč)·
Թ. 9բ.— 11. Կարմրաղանջը (Michelet).
Թ. 10ա.— 12. Աքսորեալին բարեկամները (Saint-Lambert).
Թ. 11ա.— 13. Ադդիլա և Մարիւլիւս (Amedée Thierry).
Թ. 12ա.— 14. Կեղծաւոր վաշխառուն (Le Sage).
Թ. 13ա.— 15. Երկաթագործը (Emile Zola).
Թ. 14ա.— 16. Քերթողին հոգին (Victor de Laprade)·
Թ. 14բ.— 17. Մարդուն ստեղծումը (Եղիշէ Եպիսկոպոս Դուրեան).
Թ. 15ա.— 18. Տիրամա՞յր ... (Գէորգ Սիմքէշեան).
Թ. 15բ.— 19. Մօրկա՞նս ... (Şeref Kâzim).
Թ. 16ա.— 20. Աքլորը և աղուէսը (La Fontaine).
Թ. 16բ.—21. Վոլկա և Վազուզա (Madame de Viti).
Թ. 17բ.— 22. Հովտաշուշանները (André Theuriet).
Թ. 18ա.— 23. Պէտք է կարդալ սորվիլ (Emile Souvestre).
Թ. 19ա.— 24. Երջանիկ նահանգապետը (Voltaire).
Թ. 20ա.— 25. Առաջին գինին (Edmond About).
Թ. 21ա.— 26. Ժան տ'Արք խարոյկին վրայ (Barante).
Թ. 22բ.— 27. Կոշիկ ներկողին շունը (J. Franklin).
Թ. 23ա.—28. Ինչ կ'ըսեն աստղերը (Charles Wagner).
Թ. 24ա.— 29. Մարդը, այգին և ճահիճը (Lamenais).
Թ. 24բ.— 30. Լռակացիկ կաճառը (L'Abbé Blanchet).
Թ. 25բ.— 31. Հանճարամիտ ոստայնանկը (Maurice Bonchor).
Թ. 27բ.—32. Բախտէն դժգոհ ձին (Lessing).
Թ. 28ա.— 33. Մահը (Florian).
Թ. 28բ.— 34. Վէճ մը եղբայրներու մէջ (Léon Tolstoi).
Թ. 29բ.— 35. Տեսիլք մը (Eugène Manuel).
Թ. 31ա.— 36. Արձագանքը (Théodor Botrel).
Թ. 31բ.— 37. Ջուրի ակը (Théophile Gautier).
Թ. 32ա.— 38. Այծարածին հրաշավէպը (Jean Aicard).
Թ. 32բ.— 39. Երկու օրացոյցները Guillaume Viennet)·
Թ. 33բ.— 40. Երկու երբեք-գոհերը (Marc-Monnier)

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից և 1979 թվականի № № Բ-ից և Դ-ից։

Թ. 34ա.— 41. Եթէ պարիկ ըլլայի ես (Frédéric Passy).
Թ. 34բ.— 42. Մայրը (Վ. Նորենց).
Թ. 35ա.— 43. Երջանիկ մարդու մը շապիկը (Jules Vernes).
Թ. 35բ.— 44. Վախը յաղթուա՞ծ ... (Anatole France).
Թ. 36ա.— 45. Զմեռն է մեռեր (Mme de Pressensé).
Թ. 36բ.— 46. Կաղի մը պատմութիւնը (Mme A. Tastu).
Թ. 37ա.— 47. Թովմաս Թէրզեանի կեանքէն (Հրանդ Ասատուր).
Թ. 38ա.— 48. Պայքար պայքարի դէմ (Gelâl Nuri).
Թ. 38բ.— 49. Հայ տղայոց (Աղեքսանդր Փանոսեան [անտիպ ոտանաւոր].
Թ. 39բ.— 50. Փայտին տրտունջը (Jean Richepin).

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Կազմի երեսին, սպիտակ-կարմիր պիտակի վրա). Ոսկեմատեան տիեզերական գրականութեան

Պրակ 1
Նիւթ 1—50:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի երեսին, փակցված երկու սպիտակ թղթի վրա).

Այս նուէրը կ'ընեն, հանգուցեալին փափաքով, իր երեք զաւակները՝ Եդուարդ, Աստղիկ և Վահէ Սիմբէշեանները:

27 Պրակ
Երկասիրութիւն՝ հանգուցեալ Գէորգ Սիմբէշեանի (1870—1951)

Ցորելեար ուսուցչապետ, լեզուաբան և արևելագէտ, բազմարդիւն տնօրէն և դասախօս ազգ(ային) բազմաթիվ վարժարաններու, հայերէնի և գրաբարի ու հայ մատենագրութեան, նախկին դասախօս օսմանեան համալսարանի և քաղաքային վարժարանի:

Ս. Էջմիածնի Մատենադարանին և Ն. Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Հայրապետին գուրգուրանքին կը յանձնէ իր երեց զաւակը՝

Տօքթ. Եդուարդ Սիմբէշեան.
Հասցէ՝ Şişli Ferikköy Lala Şahin Sokak No. 73/4 Istanbul (Turquie).

№ 481
ՈՍԿԵՄԱՏԵԱՆ
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
(Պրակ 2)

Թերթերը՝ 38:—**Պրակները՝** 1:—**Մեծությունը՝** 33×24.7×0.5 սմ.:—**Նյութը՝** մի քիչ դեղնած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** բարակ ստվարաթուղթ:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապտուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 35:—**Գծումները՝** գործարանային գծավոր թուղթ:—**գիրը՝** շեղագիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը և պատվիրատուն՝** Գէորգ Սիմբէշյան (1870—1951):—**Ժամանակը՝** 1930-ական թթ.:—**Վայրը՝** Ստամբուլ:—**Ծանոթություն՝** Ձեռագիրը նվեր է ստացվել Ստամբուլից 1976 թ., գրողի որդի Եդվարդ Սիմբէշյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թ. 1ա.— 51. Ճշմարիտ քերթուածը (Գէորգ Սիմբէշեան).
Թ. 1բ.— 52. Ճրա՞գը ... (Ibrahim Alâeddin).
Թ. 2ա.— 53. Աղքատաց համար (Victor Hugo).
Թ. 3բ.— 54. Արևը և վարդը (Eugène Rambert).
Թ. 4ա.— 55. Սարդն ու ճանճը (Mary Howitt).
Թ. 5ա.— 56. Ծիծմա՞յրը (Saraceddin).
Թ. 5բ.— 57. Աշխարհի վախճանը (G Vienne).
Թ. 6ա.— 58. Մուրացիկ կինը (Tevfik Fikret).
Թ. 6բ.— 59. Մա՞յրը (Tevfik Fikret)
Թ. 7բ.— 60. Հրա՞շքը ... (Գէորգ Սիմբէշեան).
Թ. 8ա.— 61. Կեանքի արագութիւնը (Fénélon).
Թ. 8բ.— 62. Մօր մը սիրտը (Louis R. tisbonne).
Թ. 9բ.— 63. Մշակը և եկեղեցիկը (Գէորգ Սիմբէշեան).
Թ. 10ա.— 64. Կէս գիշե՞ր... (Xavier de Maistre).
Թ. 11ա.— 65. Գարո՞ւնն է եկեր (Orhan Seyfi).
Թ. 11բ.— 66. Շունի մը մահը (Victor Hugo).
67. Մեղուն (Michelet).
Թ. 12ա.— 68. Զմեռը գիւղին մէջ (George Sand).
Թ. 13ա.— 69. Օդը (Ernest Legouvé).
Թ. 13բ.— 70. Սոխակը (Théophile Gautier).
Թ. 14ա.— 71. Երբեմնի դպրոցը (Jules Simon).
Թ. 14բ.— 72. Մայրս (Pierre Loti).
Թ. 15բ.— 73. Անգործութիւնը (Emile Zola).
Թ. 16ա.— 74. Երկաթին երգը (Théodor de Banville).
Թ. 17ա.— 75. Քնամոլը (Louis Veuillot).
Թ. 17բ.— 76. Ցիշատակելի Զատիկ մը (Ցակոբ Գուրգէն).
Թ. 18բ.—77. Գարնան վերջալոյս (Արտաշէս Ցարութիւնեան).
Թ. 19ա.— 78. Բիւրեղին մէջէն (Արտաշէս Ցարութիւնեան).
Թ. 19բ.— 79. Տիկին Տիւսար իր սրահին մէջ (Զապէլ Հ. Ասատուր).
Թ. 20բ.— 80. Կաղա՞նդ (Գէորգ Սիմբէշեան).
Թ. 21ա.— 81. Կիւթէնպէրկ (Lamartine).
Թ. 21բ.— 82. Սուրը (Sully P.udhomme).
Թ. 22ա.— 83. Առուի մը ծնունդը (Elisée Reclus)
Թ. 22բ.— 84. Ծառը (Victor Hugo).
Թ. 23բ.— 85. Ցեփթայէի աղջիկը (Alfred de Vignie).
Թ. 24բ.— 86. Պարիկը (Georges Sand),

(Շարունակելի)

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այցելություն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ տիար Ֆադեյ Տ. Սարգսյանին 3

ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ—Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում 4

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 10

Հյուսիսային Ամերիկայի արևելյան առաջնորդական թեմի 77-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը 13

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ--Աստվածաշնչական սուրբեր . . 15

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Երանոս կամ Իրենեոս եպիսկոպոս Լիոնի . . . 23

Ագաթանգեղոսի Պատմութիւն հայոց. Վարդապետություն սուրբ Գրիգորի . . . 33

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ—Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգարվեստը 44

ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ—Սուրբ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց տառերը 54

ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆ— Հայ եկեղեցու մասնակցությունը «Հավատքի և կարգի» ժողովներուն 58

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 18.07.1979 թ.: Ստորագրված է տպագրության 27.07.1979 թ.:
Տպագրական 4 մամուլ 1 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 621

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1979 թ.